



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Հ. ԱՅՈՒՆՆԵ

ՄԱՐԹՍԻՉՄԸ

ՈՒՆՆԵ

ԱՂԳԱՅԻՆ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

Հ Ա Ր Ց Ը

ԱՅՈՒՆՆԵ ԿՈՆՍՏԱՆՍՆԱ  
ՅՈՒՆՆԵ ԿՈՆՍՏԱՆՍՆԱ

ՀԱՅԿԱՆ ԿՈՆՍՏԱՆՍՆԱ 1922

THE  
BUREAU OF  
THE  
BUREAU OF  
BUREAU

WORLD



UNITED NATIONS  
WORLD

**И. СТАЛИН**

**МАРКСИЗМ  
И  
НАЦИОНАЛЬНО-КОЛОНИАЛЬНЫЙ  
ВОПРОС**

**СБОРНИК ИЗБРАННЫХ  
СТАТЕЙ И РЕЧЕЙ**



323-1

Ի. ՄՏԱԼԻՆ

ՄՏՈՒԿԱՄ Է 1961 թ.

# Մ Ա Ր Ք Ս Ի Զ Մ Ը

ՅԵՎ,

## ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԸ

ՀԱՐՔՆՏԻՐ ՀՈԳՎԱՆՆԵՐԻ  
ՅԵՎ ՀԱՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱՆՈՒ



A  $\frac{11}{101}$

REPORT OF THE DIRECTOR  
OF THE BUREAU OF REVENUE

## ԲՈՎԱՆԻԿՈՒԹՅՈՒՆ

	ԵՋ
ՊԱՐՓԱՆՔԱԸ ՅԵՎ ԱՋԳԱՅԻՆ ՀԱՐՅԸ . . . . .	9—66
I. Ազգը . . . . .	11
II. Ազգային շարժումը . . . . .	19
III. Հարցադրումը . . . . .	25
IV. Ազգային ավանդույթան . . . . .	31
V. Բուհը, նրա նպատակադրվելը, նրա սեպարատիզմը . . . . .	40
VI. Կազմակերպչությունը, ինքիզնայությունների կոնֆերենցիան . . . . .	51
VII. Ազգային հարցը Ռուսաստանում . . . . .	61
ՅԵՎՈՒՑՈՒՄ ԱՋԳԱՅԻՆ ՀԱՐՅԻ ԱՌԹԻՎ ՌԱԳԿ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ VII (ապրիլյան) ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՑԻՈՒՄ 1917 թ. ապրիլի 29-ին (մայիսի 12-ին) 1917 թ. . . . .	68—72
Յեզրափակման խոսքը . . . . .	71
ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԷՆՂԱՄԵՂՈՒՍԸ ՅԵՎ ԱՋԳԱՅԻՆ ՀԱՐՅԸ . . . . .	73—81
I. Փետրվարյան հեղափոխությունը և ազգային հարցը . . . . .	73
II. Հոկտեմբերյան հեղափոխությունը և ազգային հարցը . . . . .	75
III. Հոկտեմբերյան հեղափոխության համաշխարհային նշանակությունը . . . . .	79
ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԻՏԵԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՍԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԱՋԳԱ- ՅԻՆ ՀԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՍԱՄՔ . . . . .	82
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԷՆԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՋԳԱՅԻՆ ՀԱՐՅՈՒՄ (ի հիշումն էր ԹԿ (բ) Կ X Համագումարի Համար՝ Հաստատված կա- ռուկցիային ԿԿ-ի կողմից) . . . . .	92—102
I. Կազմակերպությունը հասարակակարգը և ազգային մշտումը . . . . .	92
II. Խորհրդային հասարակակարգը և ազգային ազատությունը . . . . .	95
III. ԹԿ հեղափոխության խնդիրները . . . . .	98
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԷՆԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՋԳԱՅԻՆ ՀԱՐՅՈՒՄ (դեկտեմբեր ԹԿ (բ) Կ X Համագումարում 1921 թ. մարտի 10-ին) . . . . .	103—114
Յեզրափակման խոսք . . . . .	111
ԱՋԳԱՅԻՆ ՀԱՐՅԻ ԴՐՄԱՆ ԵՌՐՁԸ . . . . .	116
ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԷՆՂԱՓՈՒՑՈՒՅՈՒՆԸ ՅԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱՆԵՐԻ ԱՋԳԱ- ՅԻՆ ՔԱՂԱՍԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ . . . . .	121
ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՎՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ (դեկտեմբեր խորհուրդի Համագումարում 1922 թ. դեկտ. 26-ին) . . . . .	124

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ (գեհուցում  
Ծաբերգային Մոսկովիտսական Հանրապետություն-  
նեքի Միություն խորհուրդներ 1 համագումար-  
ում 1922 թ. դեկտ. 30-ին) . . . . . 133

ԱԶԳԱՅԻՆ ՄՈՍԵՆՏՆԵՐԸ ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՑԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԵՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
(կուսակցության ԴԿ Համանությունն ստացած  
Բեքիտսներ՝ ԹԿ(բ) Կ XII համագումարի առթիվ) . 142—151  
I. . . . . 142  
II. . . . . 150

ԱԶԳԱՅԻՆ ՄՈՍԵՆՏՆԵՐԸ ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՑԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԵՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
(գեհուցում ԹԿ(բ) Կ XII համագումարում 1923 թ-  
ապրիլի 23-ին) . . . . . 152—176  
Ցեղափոխման խոսք . . . . . 172

ՃԱՌԵՐ ԹԿ (Բ) Կ ԿԵՆՏՐՈՆԻ ԶՈՐԲՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՈՐԻՆ ՄԱՍ-  
ՆԱԿՑԵԼ ԵՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԱՐՁԵՐԻ ՊԱՏԱՍ-  
ԽԱՆԱՏՈՒ ԱԵՆԱՏՈՂՆԵՐԸ . . . . . 177—180

I. Ազգային հանրապետությունների ու մարզերի աջերի և ըն-  
դերի մասին (Հառ խորհրդակցության սրահարդի  
առաջին կեսի՝ ՎՍԱՍՔ-ն-Գալիեվի գործի առ-  
թիվ 1923 թ. հունվարի 10-ին) . . . . . 177

II. Ազգային հանրապետություններում ու մարզերում մարքսիստ-  
կան կարգեր անցնելու համարակցելու մասին (խորհրդակ-  
ցության սրահարդի յերկրորդ կեսը կազմող  
ՎԿԱՍԱԿՅՈՒՄՅԱՆ XII համագումարի՝ ազգային  
հարցի վերաբերյալ բանալեի կենսագործման  
պահանջի միջոցառումները՝ գեհուցումից,  
վարարված է 1923 թ. հունիսի 10-ին) . . . . . 180

ԼՈՎՏԵՄԲԵՐԿԱՆ ԼԵՆԻՆՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՄԻՋԻՆ ԵՐՏԵՐԻ ՀԱՐՑԸ . . . . . 190

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ (1924 թ. ապրիլի ազգերի՝ Մվերգլովյան  
համալսարանում ընկնիչիզմի Երմանցիների մա-  
սին՝ հարգացած դասախոսություններից) . . . . . 196

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ՀԱՐԱՎ-ՍԱՎԻՏՈՒՄ (Հառ Կոմիտեերի Գործ-  
կածի հարգում-լավան հանձնաժողովում 1925 թ.  
մարտի 30-ին) . . . . . 206

ԱՐԵՎԵԼԻԻ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՍԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
(Հառ Արևելիքի Աշխատավորների Կոմունիստական  
Համալսարանի ուսանողների ժողովում 1925 թ.  
մայիսի 18-ին) . . . . . 210—226

I. Արևելքի Աշխատավորների Կոմունիստական Համալսարանի խըն-  
դիբները՝ Արևելքի խորհրդային հանրապետությունների նկատ-  
մամբ . . . . . 210

<i>II. Արևելքի Աշխատավորների Կոմունիստական Համալսարանի խընդիչները Արևելքի գաղութային և կաթաղ յերկիրներին նկատմամբ</i> . . . . .	218
ԳՐԲՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ (ընկ. Սեմիշի և Մոզմանի առթիվ)	223
ԸՆԿ. ԿԱԳԱՆՈՒԿՈՒՄ ԵՎ ՌՈՎԻ Կ(Բ) Կ ԿԵՆՏՐՈՆ ՄՅՈՒՍ ԱՆԴԱՄԱՆԵՐԻՆ ՌՈՂՂԱՍ ՆԱՄԱԿՑ	232
ՁԻՆԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ (Միջազգային գրառքյան ընկերությունը պաշտպանությանը նախընտրելու մասին և ԿԿ-ի և ԿՎՂ-ի միացյալ պլենարիումի նիստում 1927 թ. սոցառառի 1-ին)	236
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԼՈՒՍԵԼՈՒ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ՄԵՓՈԴԻ ՀԱՐՑԻ ԵՈՒՐԸ (Վեհաժողովի մասին և Կոմունիստական միջազգային բնագավառի մասին)	257
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԲՆԱԳԱՎՈՐՈՒՄ ԵՆԼԱՍ ՓԵՓՈՒՄԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԿ(Բ) Կ XVII և սոցառառում 1930 թ. հունիսի 27-ին արված պեկուցումից)	260—270
<i>Սեպտեմբերյան խորհրդ</i> . . . . .	267
ԴԵՊԻ ՆԱՅՈՒՆԱԼԻՅԱԸ ԵՆԼԱՍ ՓԵՓՈՒՄԵՐԻ ՄԱՍԻՆ (Համկ(Բ) Կ ԿԿ աշխատանքի մասին 1930 թ. հունիսի 26-ին կառավարչության XVII և սոցառառումի մասին և աշխատանքի պեկուցումից)	271

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Ն Ե Ր

<i>I. Ազգային հարցի վերաբերյալ կուսակցության կայացրած վարչաձևերից ամենագլխավորները</i> . . . . .	275—293
<i>Ազգային հարցի վերաբերյալ բանալիք, վեր 1917 թ. ապրիլին (մայիսին) ընդունել և ԲՄԲԿ Համառուսաստանյան VII (ապրիլյան) կոնֆերանսի</i> . . . . .	275
<i>Կուսակցության և երկրի կոնֆերանսի ազգային հարցում (1921 թ. մարտ ամսում ԲԿ(Բ) Կ-ի X Համագումարի ընդունած բանալիք)</i> . . . . .	276
<i>Ազգային ամենաներք կուսակցական և պետական շինարարության մեջ (1922 թ. ապրիլին ԲԿ(Բ) Կ XIII Համագումարի ընդունած բանալիք)</i> . . . . .	284
<i>ԿԿ Հաղթագրության վերաբերյալ բանալիք, վեր ընդունել և Համ. Կ(Բ) Կ XVI Համագումարը 1930 թ. հունիսին</i> . . . . .	292
<i>Կուսակցության նրազրից, վեր բնագառնել և ԲԿ(Բ) Կ VIII և սոցառառում 1919 թ. մարտին</i> . . . . .	293
<i>II. Մասնաբազմայան և բ.</i> . . . . .	294
<i>III. Մեջբերվող գրական ազգայնական բերքանկ.</i> . . . . .	307
<i>IV. Անվանացանկ</i> . . . . .	310



Հակահեղափոխութեան շրջանը Ռուսաստանում վոլ միայն չվորոտ ու կայծակն քերէց, այլև հրասթափութեան՝ շարժումից, անվաստանութեան գեղի ընդհանուր ուժերը: Հաժաատւում էլին «պայծառ սողազային», — և մարդիկ պայքարում էլին միասին՝ անկախ ազգութեանից. ընդհանուր հարցերն ամենից առաջ, Հոգիներէ մեջ կտակած սողակեց, — և մարդիկ սկսեցին ջրվեկ իրենց ազգային բնակարանները. խնդ ամեն մարդ հույսը միայն կր վրա գնի: «Ազգային պրոբլեմն» — ամենից առաջ:

Այդ նույն մասնակ աղի յեր ունենում յերկրում անահտական կյանքի յարջ հեղաբեկում (շօքը): 1905 թվականը զուր շանցով. Եւրոպայի հայութեան կացութեան յարաբերութիւնը (շօքը) մնացորդները գլուխում մի հարված ել ստացան: Սովի տարիներին հաջորդած մի շարք բերբի տարիները և ապա վրա հասած արդյունարեւական վերելքն առաջ շարժեցին կապիտալիզմը: Եւրասիայումը գլուխում ու քաղաքներէ անումը, առևարի ու հազորդակցութեան անապարհներէ զարգացումը խոշոր քայլ արին գեղի առաջ: Սու առանձնապես ճիշտ և ծայրամասերի վերաբերմամբ: Բայց սա չի կարող շարագացնել Ռուսաստանի ազգութեաններէ արնահատական կոմունիզմի պրոբլեմը: Արջիներէն մեջ պետք և շարժում առաջ գար...

Ազգութեաններն արթնացնելու նույն աչք ազգութեանը եր զործում աչք մասնակ հաստատված աստանապարհան ուժերը: Կրակներէ և տահասարակ գրեկանութեան անումը, մամուլի ու կուլտուրական հիմնարկներէ վորոշ ազատութեանը, մարդկրական թատրոններէ անումը և այլն, անկախած, նշատում էլին «ազգային զգացմունքներէ» ուժեղացմամբ: Դուսան իր ընտրական կամուրջայով ու քաղաքական իրարբերով ավելց նոր նարագորութեաններ՝ ազգութեաններէ աշխուժացման համար, նոր յայն սողարեղ՝ վերջիներէն մարդկրացիայի համար:

Իսկ մարանչոյ նացիոնալիզմի՝ վերից բարձրացած ալիքը, մի ամբողջ շարք ուղիներունը «իշխանութեան ուժեղացնելի» կողմից, վորոշ քայլ արեւաններէ զրեւ էլին տանում նրանց «ազատարութեան» համար, — առաջացրին վարից յեկած նացիոնալիզմի պատասխանի ալիք, — նացիոնալիզմի, վոր յերբեմնակի վարարելում և կողիտ շովիներէ:

Միտնիզմի՝ ուժեղացումը հրեաների մեջ, անող շովինիզմը Լեհաստանում, պանիսլավիզմը՝ Թաթարների մեջ, նացիոնալիզմի ուժեղացումը հայերի, վրացիների, ուկրաինացիների մեջ, քաղցրենու ընդհանուր թեթումը հակասեմիտիզմի կողմը, — սրանք բոլորն էլ հանրամասնաբ փաստեր են:

Ավելի ու ավելի ուժեղորեն եր վրա տալիս նացիոնալիզմի ալիքը՝ սպառնալով իր մեջ առնել բանվորական մասսաները: Յե՛վ վորքան ավելի յեր նվազում ազատագրական շարժումը, այնքան փարթամորեն էլին փթթում նացիոնալիզմի ծաղիկները:

Այդ շփվարին մոմենտին սոցիալ-դեմոկրատիայի վրա մի վե՛հ միտքս յեր ընկած — հակահարված տալ նացիոնալիզմին, պաշտպանել մասսաներն ընդհանուր «համաճարակից» («новотрица»): Վորովհետև սոցիալ-դեմոկրատիան, և միմիայն նա յեր, վոր կարող եր այդ անել՝ հակադրելով նացիոնալիզմին ինտերնացիոնալիզմի փորձված դննքը, դասակարգային կռիվի միասնությունն ու անբաժանությունը: Յե՛վ վորքան ուժեղորեն եր վրա տալիս նացիոնալիզմի ալիքը, այնքան բարձր պետք է հնչեր սոցիալ-դեմոկրատիայի ձայնը՝ հանուն Ռուսաստանի բոլոր ազգությունների պրոլետարների յեղբայրության ու միասնության: Ընդամին՝ առանձին տեղումություն եր պահանջվում ծայրամասային սոցիալ-դեմոկրատներից, վորոնք անմիջականորեն բախվում էին նացիոնալիստական շարժման հետ:

Բայց ինդրի բարձրության վրա գանձեցին վոչ բոլոր սոցիալ-դեմոկրատները, և, ամենից առաջ, ծայրամասերի սոցիալ-դեմոկրատները: Բունդը՝, վոր առաջներում ընդգծում եր ընդհանուր խնդիրները, այժմ առաջին պլանի վրա սկսեց դնել իր առանձին, զուտ ազգայնական նպատակները. ըստն այնտեղը հասավ, վոր նա «շարաթ որը տանելը» և «ժարգանն ընդունելը» հայտարարեց իր ընտրական կամուրջի մտաբանական կետ՝: Բունդին հետևեց Կովկասը. կովկասյան սոցիալ-դեմոկրատները՝ մի մասը, վորն առաջներում կովկասյան մյուս ս.՝դ. հետ միասին ժխտում եր «կուլտուրական-ազգային ավտոնոմիան», այժմ առաջադրում է այն վորպես հերթական պահանջ՝: Ել մենք չենք խոսում լիկվիդատորների կոնֆերենցիայի՝ մասին, վորը դիվանագիտորեն սանկցիա եր տալիս նացիոնալիստական տասանուկներին՝:

Բայց սրանից հետևում է, վոր ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի հայացքներն ազգային հարցի վերաբերմամբ դեռևս վոչ բոլոր ս.՝դ. համար են պարզ:

Այնքանաբար, անհրաժեշտ է ազգային հարցի լուրջ ու համակող-

<sup>o</sup> Տես շրճագի IX կոնֆերենցիայի վերաբերյալ հաշվետվությունը՝:

<sup>oo</sup> Տես շրճատայն կոնֆերենցիայի ծանուցումը:

<sup>ooo</sup> Տես նաև սեղը:



մանի ընծարկումը: Հարկավոր և նեղեղական սոցիալ-դեմոկրատներին միասնաբար ու անզուգուրս աշխատանքը նացիոնալիստական մշուշի դեմ, վորակելից և վոր նա դաշու վնի:

### 1. ԱԶԳԸ

Ի՞նչ և ազգը:

Ազգը՝ դա, ամենից առաջ, ընդհանրութիւնն և, մարդկանց վորոշ ընդհանրութիւնն:

Այդ ընդհանրութիւնը վոչ ուստիական և և վոչ ևլ ցեղային Իստա-յական աշմայն ազգը գոյացել և հոռմայեցիներինց, գերմանացիներինց, ետրուսկներինց, հույներինց, արաբներինց և այլն: Յիւանսական ազգը կազմավորվել և դալլերինց, հոռմայեցիներինց, բրիտաներինց, գերմանացիներինց և այլն: Նույն աշու բանը պետք և ստել անդլլիացիներին, գերմանացիներին և այլոց մասին, վորոնք կազմավորվել են իբրև ազգեր սարբեր ուսաններին ու ցեղերն պատկանող մարդկանցինց:

Այսպես, սրբեմն, ազգը վոչ ուստիական և վոչ ևլ ցեղային ընդհանրութիւնն և, ալլ մարդկանց՝ պատմականորեն կազմավորված ընդհանրութիւնն և:

Մշուս կողմից, անկասկած և, վոր կշուրտսի կամ Ալեքսանդրի մեծ պետութիւնները չեյին կարող ազգեր կոչվել, թեև նրանք պատմականորեն ևյին գոյացել, զանազան ցեղերինց ու ուսաններինց ևյին գոյացեր: Նրանք ազգեր չեյին, ալլ խմբերի պատանական ու քիչ շարկապղծ կանգրմերաաներ, վորոնք տրոնվում ևյին կամ միավորվում ևյին՝ նայած աշու կամ այն աշխարհակալի հաջողութիւններին կամ պարտութիւններին:

Այսպես, սրբեմն, ազգը վոչ պատանական և վոչ ևլ վազանցիկ մի կանգրմերաու և, ալլ մարդկանց կայուն ընդհանրութիւնն և:

Բայց վոչ ամեն մի կայուն ընդհանրութիւնն ազգ և սակեծում: Ավստրիան ու Ռուսաստանը նույնպես կայուն ընդհանրութիւններ են, սակայն, վոչ վոր նրանց ազգ չի անվանում: Ինչմի և տարբերվում ազգային ընդհանրութիւնը պետական ընդհանրութիւնինց: Ի միջի ալլոց՝ նրանով, վոր սոցիալին ընդհանրութիւնն աներևակալելի յե տոանց ընդհանուր լեզվի, ախինչ պետութիւնն համար ընդհանուր լեզուն պարտապիր չե: Չեյտական ազգութիւնը՝ Ավստրիայում և լեհականը՝ Ռուսաստանում անհարին կլինեյին, յեթև նրանցինց յուրաքանչյուրն իր ընդհանուր լեզուն չունենար, մինչդեռ մի սմբողջ շարք լեզուների գոյութիւնը Ռուսաստանի ու Ավստրիայի ներսում չի խանդարում ալլ յերկրներին սմբողջականութիւնը: Յստքը, իհարկև, մոզովրգա-խասակցական լեզուների մասին և, և վոչ թե պաշտանական կանցեյարական լեզուներին մասին:

Այսպէս, ուրեմն, — լեզվի բնդնամբարւոյունը՝ վորպէս ազգի բնորոշ գծերից մեկը:

Սա, իհարկէ, չի նշանակում, թէ միշտ և ամենուրեք տարրեր ազգերը տարրեր լեզուներով են խոսում կամ թե՛ բոլոր միեւնույն լեզվով խոսողներն անպայման մի ազգ են կազմում: Ընդամենը լեզու յուրաքանչյուր ազգի համար, բայց վոչ անպայման տարրեր լեզուներ տարրեր ազգերի համար: Չկա ազգ, վորը մեկն զանազան լեզուներով խոսեր, բայց սա զեռուս չի նշանակում, թէ չի կարող լինել յերկու ազգ, վորոնք խոսեն միեւնույն լեզվով: Անգլիացիք ու հյուսիս-ամերիկացիք մի լեզվով են խոսում, և, ախուամենայնիվ, նրանք մի ազգ չեն կազմում: Նույն այս բանը պետք է ասել նորվեգացիների ու զանիացիների, անգլիացիների ու իռլանդացիների մասին:

Բայց ինչու, որինեկ, անգլիացիք ու հյուսիս-ամերիկացիք, ճշայամ ընդհանուր լեզու ունենալուն, մի ազգ չեն կազմում:

Ամենից առաջ՝ այն պատճառով, վոր նրանք վոչ թէ միատեղ են ապրում, այլ տարրեր տերիտորիաներում: Ազգը կազմավորվում է միայն տեսական ու կանոնավոր շփման հետեանքով, մարդկանց սերնդե-սերունդ միատեղ ապրելու հետեանքով: Իսկ ականանորեն միատեղ ապրելն անհնարին է՝ առանց ընդհանուր տերիտորիայի: Անգլիացիք ու ամերիկացիք առաջնորում բնակվում էյին միեւնույն տերիտորիայում՝ Անգլիայում և մի ազգ էյին կազմում: Հետո անգլիացիների մի մասն Անգլիայից արտագաղթեց նոր տերիտորիա՝ Ամերիկա և այստեղ, նոր տերիտորիայում, ժամանակի ընթացքում, կազմեց նոր՝ հյուսիս-ամերիկյան ազգը: Տարրեր տերիտորիաները հանգեցրին տարրեր ազգերի գոյացման:

Այսպէս, ուրեմն, — սերիտորիայի բնդնամբարւոյունը՝ վորպէս ազգի բնորոշ գծերից մեկը:

Բայց սա զեռ ամենը չէ: Տերիտորիայի ընդհանրութեան ըստինքյան տակավին ազգ չի տալիս: Դրա համար, բացի սրանից, հարկավոր է անտեսական ներքին կապ, վորն ազգի առանձին մասերը զոգի իրրէ մի ամբողջութեան: Անգլիայի ու Հյուսիսային Ամերիկայի միջև այդպիսի կապ չկա, և այդ պատճառով ել նրանք յերկու տարրեր ազգեր են կազմում: Բայց իրենք, հյուսիս-ամերիկացիք ել ազգ անուանը կրելու արժանի չեն լինի, յեթէ Հյուսիսային Ամերիկայի առանձին անկյունները միմյանց հետ շաղկապված չլինէյին իրրէ անտեսական մի ամբողջութեան՝ ճորհիվ նրանց միջև յեղած աշխատանքի բաժանման, ճորհիվ հաղորդակցութեան անապարհների զարգացման, և այլն:

Վերջնեք թեկուզ վրացիներին: Նախառնֆորմյան ժամանակների վրացիներն ապրում էյին մի ընդհանուր տերիտորիայում և խոսում էյին մի լեզվով, բայց և այնպէս, խստիվ սասած, նրանք մի ազգ չեն կազ-

մուս, վորովհետև նրանք, իրարից կարգված մի ամբողջ շարք իշխանությաններէ բաժանված լինելով. չնչին կարող սուրել անասնական ընդհանուր կյանքով, դարեւով միմյանց դեմ պատերազմներ ելին մղում և անասնապետ շայշայում ելին իրար, սաղորելով միմյանց դեմ պարսիկներին ու ի վարձերին: Իշխանությաններէ վազանցիկ ու պատահական միտվորումը, վոր չերբեմնակէ հաջողվում եր դուռն բերել մի վորևև հաջողակ-խաղափոր, լավապետն դեպքում ընդդրկում եր միայն մակերեսային-վարչական վորարար, արագորեն զանգվում եր՝ դեմ առնելով իշխաններէ բնահունւյթին ու գլուգացիներէ անասրբերությանը՝ Վրաստանի անտեսական մասնատվածության պայմաններում, ասեմք, ուրիշ կերպ չեր ել կարող լինել... Վրաստանը վորպես ազգ յերևան յեկավ միայն XIX դարի յերկրորդ կեսին, յերբ նորաստիության անկումը և յերկրի անտեսական կյանքի անուսը, հաղորդակցության անասարհներէ դարդացումը և կապիտալիզմի առաջացումը աշխատանքի բաժանում հաստատեցին Վրաստանի մարդերի միջև, բոլորովին սասանեցին իշխանությաններէ անտեսական ինքնամոզմությանը և նրանց կապակցեցին վորպես մի ամբողջության:

Նույն աչգ բանը պետք և ասել նաև ֆեոդալիզմի ստադիան անցած և իրենց մաս կապիտալիզմը դարդացրած ալլ ազգերի մասին:

Այսպես, ուրեմն, — անեսակա՞ն հյտնմի րնդհանուրլուծւմ, անեսական կապակցվածութլւմը՝ վորպես ազգի բնորոշ առանձնահատկությաններէ մեկը:

Բայց սա ել բոլորը չէ: Բայցի այն ամենից, ինչ ասվեց, պետք և նաև ուշադրության ասնել այն մարդկանց հոգեկան նկարագրի առանձնահատկությանները, վորոնք միտվորված են վորպես ազգ, Ազգերը միմյանցից տարբերվում են վոչ միայն իրենց կյանքի պայմաններով, այլև հոգեկան նկարագրով, վորն արտահայտվում և ազգային կուլտուրայի առանձնահատկությաններով: Անթե մի լեզվով խոսող Անգլիան, Հյուսիսային Ամերիկան ու Իտալիան ախտամենայնիվ յերեք տարբեր ազգեր են կազմում, սպա սրանում պակաս զեր չի խաղում պոլիթիկական (հոգեկան) այն յուրահատուկ կերտվածքը, վորը նրանցում մշակվել և սերնդե-սերունդ՝ գոյության վոչ միտանակ պայմաններէ հետևվածութլւմ:

Իհարկե, պոլիթիկական կերտվածքն ըստինքյան կամ — ինչպես ալլ կերպ անվանում են այն — շաղկային բնամիտությանը՝ զիտողի համար ինչ-վոր անըմբռնելի բան և, բայց վորքան վոր այն արտահայտվում և ազգի համար ընդհանուր կուլտուրայի յուրահատկութլւմը, այն ըմբռնելի և չի կարող անտեսվել:

Ինչ խոսք, վոր շաղկային բնամիտությանը՝ մի ինչ-վոր մի անգամ ընդմիջտ արված բան չէ, ալլ վոխտվում և կյանքի պայմաններէ հետ

միասին. բայց, վորքան վոր այն զոյությունն ունի ամեն մի տվյալ մոմենտում, այն զնում ե իր կնիքն ազգի կերպարանքի վրա:

Այսպես, ուրեմն, — կուլուրաբայի ընդհանրությամբ արտահայտվող՝ պսիխիկական կերտվածքի ընդհանրությունը՝ վորպես ազգի ընտրող գծերից մեկը:

Այսպիսով, մենք սպասեցինք ազգի բոլոր հատկանիշները:

Ազգը՝ դա յեզվի, սերիտիայի, սենսուական կյանքի յեվ կուլտուրայի ընդհանրությամբ արտահայտվող՝ պսիխիկական կերտվածքի պատմականորեն կազմավորված կայուն ընդհանրությունն է:

Ընդամենը ըստինքյան հատկանալի յե, վոր ազգը, ինչպես և պատմական ամեն մի յերևույթ, յենթակա յե փոփոխման որենքին, ունի իր պատմությունը, սկիզբն ու վերջը:

Անհրաժեշտ է ընդգծել, վոր մատնանշված հատկանիշներից և վոչ մեկը, առանձին վերցրած, բավական չէ ազգի ընտրողման համար: Դեռ ավելին՝ բավական է այդ հատկանիշներից թեկուզ մեկի բացակայությունը, վորպեսզի ազգը դադարի ազգ լինելուց:

Կարելի յե յերևակայել ընդհանուր «ազգային ընավորություն» ունեցող մարդիկ, և, այնուամենայնիվ, չի կարելի տեսլ, թե նրանք մի ազգ են կազմում, յեթե նրանք տնտեսապես անջատված են, տարբեր տերիտորիաներում են ապրում, տարբեր լեզուներով են խոսում և այլն: Այսպես են, որինակ, ռուսական, գալիցիական, ամերիկյան, վրացական, լեհական հրեաները, վորոնք, մեր կարծիքով, միասնական ազգ չեն կազմում:

Կարելի յե յերևակայել տերիտորիայի և տնտեսական կյանքի ընդհանրությունն ունեցող մարդիկ, և, այնուամենայնիվ, նրանք մի ազգ չեն կազմի՝ առանց լեզվի ու «ազգային ընավորության» ընդհանրության: Այսպես են, որինակ, գերմանացիներն ու լատիշները Մերձբայալյան յերկրում:

Վերջապես, նորվեգացիներն ու դանիացիները մի լեզվով են խոսում, բայց նրանք, մյուս հատկանիշների բացակայության հետևանքով, մի ազգ չեն կազմում:

Մեկեղ վերցրած՝ բոլոր հասկանալիներն առկայությունն է միայն, վոր մեզ ազգ է օայլո:

Կարող ե թվալ, թե «ազգային ընավորությունը» ազգի հատկանիշներից վոչ թե մեկն է, այլ միակ էյականը, ըստ վորում՝ մնացած. բոլոր հատկանիշները, իսկապես ասած, կազմում են ազգի զարգացման պայմանները, և վոչ թե նրա հատկանիշները: Այս տեսակետի վրա չեն կանգնած, որինակ, Ալստրիայում ազգային հարցի հայտնի ս. գեմուլբաուսական տեսաբաններ Ռ. Շպրինգերը և, մասնավորապես, Ռ. Բաուերը: Քննենք ազգի վերաբերյալ նրանց թեորիան:

Ըստ Նոյրիկեզերի՝ տաղը՝ զո միասնական մասանոց ու միասնակ խոսող մարդկանց մրտաթյունն է։ Դա՝ «մասնակիցից մարդկանց մը խմբիկ-ուսուցական աշխարհի բնականությունն է, զորը կազմված չի «նախնա նա»» (ընդգծումը մերն է)։

Այսպես, ուրեմն,— միասնական մասանոց ու խոսող մարդկանց «միասնական» վարքանն էլ վար նրանք իրարից անջատված լինեն, վարանդ էլ վար նրանք ապրելիս լինեն։

Բասուերը էլ ավելի նկատու չե դնում.

«Ի՞նչ է տաղը,— հարցնում է նա— Արդ՞մք զո լ՛զգի բնականությունն է, զորը միավորում է մարդկանց, զորպես ազգ։ Բայց անզլխացիները ու իւրանդացիները... խոսում են մի լ՛զգով չնանդիսանալով, սակայն, միասնական մտազուրկ. հրեաները բնավ չունեն ընդհանուր լեզու և, աշխատանքային, ազգ են կազմում»<sup>99</sup>։

Ուրեմն Բ՛նչ բան է տաղը։

«Ազգը՝ զո բնավորության հարաբերական ընդհանրությունն է»<sup>100</sup>։

Բայց Բ՛նչ է բնավորութ՞յունը, ավյալ գեկպըւմ՝ ազգային բնավորությունը։

Ազգային բնավորությունը՝ զո «այնպիսի հատկանիշների զուսմարն է, զորանք մի ազգության պատկանող մարդկանց տարբերում են մի այլ ազգության պատկանող մարդկանցից, զո ֆիզիկական ու հոգեկան հատկությունների կոմպլեքս է, զորը տարբերում է մի ազգը մյուսից»<sup>101</sup>։

Բասուերը, ինտրիկե, դիտել, վոր ազգային բնավորությունը չեք լինըքից չի բնկնում, ուստի և ավելացնում է.

«Մարդկանց բնավորությունը ուրիշ գոշնչով չի վորոշվում, բայց յեթե նրանց բոխտով, զոր... տաղը վոշ այլ ինչ է, բայց յեթե բոխտի ընդհանրությունն է. զորն իր հերթին վորոշվում է «յն պայմաններով, զորանց յեղձ մարդիկ աշտպարում են իրենց աղբուստի միջոցները և բաշխում են իրենց աշխատանքի արդյունքները»<sup>102</sup>։

Այսպիսով, մենք հասանք ազգի, ինչպես Բասուերն և արասնայտվում, աստվել յլիակատար» բնարոշմանը։

<sup>99</sup> Տես Նոյրիկեզերի՝ «Ազգային պորբիւրը», հրատ. «Обществѣнная польза», 1900 թ., էջ 42։

<sup>100</sup> Տես Ո. Բասուերի՝ «Ազգային հարցը և սոցիալ-գեմոկրատիան», հրատ. «Сорос»-ի 1909 թ., էջ 1—2։

<sup>101</sup> Տես նույն տեղը, էջ 6։

<sup>102</sup> Տես նույն տեղը, էջ 2։

<sup>103</sup> Տես նույն տեղը, էջ 24—25։

«Ազգը՝ դա այնպիսի մարդկանց անբող հավատականությունն է, զորով ազգապատկած են բնավորության ընդհանրությանը՝ բայիս լինիաներության հոգի վրա»:

Այսպես, ուրեմն, ազգային բնավորություն ընդհանրություն՝ բախտի ընդհանրություն հոգի վրա, մի ընդհանրություն, վոր վերջված է առանց անպայմանորեն կապակցված լինելու տերիտորիայի, լեզվի ու տնտեսական կյանքի ընդհանրություն հետ:

Բայց ել ի՞նչ է նույն ազգից այս դեպքում: Ազգային ի՞նչ ընդհանրություն մասին կարող է խոսք լինել այն մարդկանց վերաբերմամբ, վորոնք անտեսապես անջատ են միմյանցից, տարբեր տերիտորիաներում են ապրում ու սերնդե-սերունդ տարբեր լեզուներով են խոսում:

Բառերը հրեաների մասին խոսում է վորպես ազգի մասին, թեև Շրանք բնավ չունեն ընդհանուր լեզու<sup>88</sup>։ Բայց ի՞նչ բախտի ընդհանրությունն ու ազգային շաղկապվածություն մասին խոսք կարող է լինել որինակ, վրացական, զազստանյան, ռուսական ու ամերիկյան հրեաների վերաբերմամբ, վորոնք միանգամայն կարված են իրարից, ապրում են տարբեր տերիտորիաներում ու խոսում են տարբեր լեզուներով:

Հիշյալ հրեաները, անշուշտ, ապրում են անտեսական ու քաղաքական ընդհանուր կյանքով վրացիների, զազստանցիների, ռուսների ու ամերիկացիների հետ՝ նրանց հետ կուլտուրական ընդհանուր մթնոլորտում գտնվելով։ զա չի կարող իր կնիքը չչենել նրանց ազգային բնավորության վրա։ յեթե նրանց մոտ վորևե ընդհանուր բան է ննացել, ապա զա կրոնն է, ընդհանուր ծագումն ու ազգային բնավորություն մի քանի ննացորդները։ Այս ամենն անկասկած է։ Բայց ի՞նչպես կարելի յե լրջութամբ սասել, թե վոսկրացած կրոնական ձևերն ու հոգմահարվող հոգերանական ննացորդները հիշյալ հրեաների բախտի» վրա ազնելի ուժեղ են ազդում, քան նրանց շրջապատող ապիալ-անտեսական ու կուլտուրական կենդանի միջավայրը։ Իսկ չ՞ վոր միայն այսպիսի յենթադրություն կարելի յե խոսել առհասարակ հրեաների մասին, իրբև միանական ազգի մասին:

Այն ժամանակ ել ինչո՞վ է տարբերվում Բառերի ազգը սպիրիտուալիստների միտքիկական ու ինքնարավ շաղկային վորուցը:

Բառերն անանցանելի սահմանազիծ է անցկացնում ազգերի շտարբերիչ զծի» (ազգային բնավորություն) և նրանց կյանքի շպայմանների» միջև՝ զբանք միմյանցից անջատելով։ Բայց ի՞նչ է ազգային բնավորությունը, յեթե վոչ կյանքի պայմանների արտացոլում, յեթե վոչ

<sup>88</sup> Տես Ո. Բառերի «Ազգային հարցը և սպիրիտուալիստիստներ», հրատ. «Շքու-ի», 1900 թ., էջ 2:

<sup>89</sup> Տես նույն տեղը, էջ 139:


ախ ազգաբնակչությանը, զոր ստացվել են շքանշանային մեդալներով: Ինչպես կարելի չե սահմանափակվել լուսազգային բնակչությանը՝ ախ տոսնանապակչով ու կարելով նրան մնաց հոգից:

Այս, անգլիական ազգն իսկապես ինչով էր տարբերվում հյուսիս-ամերիկյան ազգից XVIII դարի վերջին ու XIX դարի սկզբին, չեք էլ չուստային Ամերիկյան տակավին «նոր Անգլիա» չեք կոչվում:

Իհարկե, վաղ ազգային բնակչությանը, զորովհետև հյուսիս-ամերիկացիները Անգլիայից գաղթածներ էին, բայց անգլիական լեզվից՝ նրանք իրենց հետ Ամերիկա տարան նաև անգլիական ազգային բնակչությանը և, հարկավ, չէին կարող այդքան արագությամբ կորցնել, թեև նոր պոստանները ազգեցությանը, չեքին, նրանցում մշակվում էր իրենց տոսնին բնակչությանը: Աեվ, ախուսմանախիվ, ճաշած բնակչության ազգի կամ պակաս ընդհանրությանը՝ նրանք ախ մասնակարգն կազմում էին Անգլիայից տարբեր ազգ: Ամերիկե և, զոր «նոր Անգլիան», իրեն ազգ, այն մասնակարգ տարբերվում էր Անգլիայից, իրեն ազգից՝ վաղ թե ազգային տոսնին բնակչությանը և կամ՝ վաղ ախն ազգային բնակչությանը, զորքան Անգլիայից տարբեր մեդալայրով, կյանքի պայմաններով:

Այսպիսով, պարզ և, զոր իրականության մեջ գոյություն չունի ազգի միակ տարբերիչ վաղ մե հասկանիչ: Գոյություն ունի հատկանիշների միտն գուտար, զորանցից, ազգերը զուգադրելիս, ազգից ցաշատն կերպով աչքի չե ընկնում մերթ մե հատկանիշը (ազգային բնակչության), մերթ մյուսը (լեզուն), մերթ չեբրտղը (տեղիտարիան, անտեսական պայմանները): Ազգը՝ միտսին վերջրած բոլոր հատկանիշներին համակցությունն և:

Բուտերի տեսակետը, զորով ազգը նույնացվում և ազգային բնակչության հետ, ազգը կարում և հոգից և ախ գարծնում և ինչ-զոր անտեսանելի, ինքնարտով ու: Մտացվում և վաղ թե կենդանի ու գործող ազգ, աչ ինչ-զոր միտսիական, անբարձնելի ու անդրդերեղտնային բան: Վարովհետև, կրկնում եմ, որինախ, աչ թեչ հրեական ազգ և, զորը բազկացած և զրացական, գաղսամայն, առսական, ամերիկյան ու աչ հրեաներից.— մի ազգ, զորն անգամները չեն հասկանում միտանց (տարբեր լեզուներով են խոսում), աչբում են չեբերազնից զանազան մտերում, չեբերք մեկը մյուսին չի տեսնի, չեբերք միտանց հանդես չեն գա՝ վաղ խազազ մասնակարգ, վաղ էլ պատերազմի մասնակարգ: Վաղ, աչգլխի թղթե «ազգերք» համար չե, զոր սցիտալ-դեմոկրատիան կազմում և իր ազգային ճրայերբը: Նա կարող և հաշվի նստել միտն իրական ազգերին հետ, զորանք գործում ու շարժվում են, ուստի և ստիպում են հաշվի նստել իրենց հետ:





Բառերը, ակնհերտրեն, չփոթում և պատմական կատեգորիա հանդիսացող ազգը՝ ազգագրական կատեգորիա հանդիսացող ցեղի հետ:

Ասենք, Բառերն ինքը, ըստ յերևութին, զգում և իր դիրքի թուլությունը, իր գրքի սկզբում վճռականորեն հայտարարելով հրեաների մասին, իբրև ազգի մասին՝ \* Բառերը գրքի վերջում ուզում և իր սխալը՝ պնդելով, թե շխարհալիստական հասարակությունն ընդհանրապես հնարավորություն չի տալիս նրանց (հրեաներին) իբրև ազգ պահպանվելու:<sup>100</sup> Աուրևով նրանց այլ ազգերի հետ: Բանից դուրս և զալիս՝ պատճառն այն և, զոր շրեաները չունեն ինքնամոտի կոմունիզացիոն մարզը<sup>101</sup>, այնինչ՝ ազգային մարզ ունեն, որինակ, չեխերը, վորոնք, ըստ Բառերի, պահպանվելու յեն իբրև ազգ: Կարճ՝ պատճառը սերիտորիայի բացակայությունն և:

Այսպես դատելով, Բառերն ուզում եր ապացուցել, թե ազգային ավտոնոմիան չի կարող լինել հրեա բանվորների պահանջը<sup>102</sup>, բայց նա դրանով իսկ անակնկալորեն տապալել էր սեփական թեորիան, զորը ժխտում և սերիտորիայի ընդհանրությունը, իբրև ազգի հատկանիշներից մեկը:

Բայց Բառերն ավելի հեռու յե գնում: Իր գրքի սկզբում նա վճռականորեն հայտարարում և, թե շրեաները բնավ չունեն բնդիտեուր լեզու և, այնուամենայնիվ, ազգ են կազմում<sup>103</sup>: Բայց նա, հազիվ հասնելով հարյուրյերեսուներորդ էջին՝ արդեն փոխեց ֆրոնտը՝ հայտարարելով նույնքան վճռականորեն, թանտրակույս և, վոր վոչ մի ազգ ճեարավոր չի՝ առանց բնդիտեուր լեզվի<sup>104</sup> (ընդգծումը մերն և):

Բառերն այստեղ ուզում եր ապացուցել, թե շրեան՝ զա մարդկային հազարակցության կարևորագույն գործիքն և<sup>105</sup>, բայց նա միաժամանակ անակնկալորեն ապացուցեց և այն, ինչ նա մտադիր չեղ ապացուցել, այն և՝ ազգի վերաբերյալ իր սեփական թեորիայի մասնակալությունը, — մի թեորիա, զորը ժխտում և լեզվի ընդհանրության նշանակալությունը:

Իզեալիստական թելերով կարված թեորիան այսպես ի ինքն իրեն հերքում:

\* Տես Ո՝ Բառերի Ընդդային Հարջը և «ցիտլ-գեմեկրատիան», հրատ. «Серж»-ի, 1909 թ., էջ 2.

<sup>100</sup> Տես նույն տեղը, էջ 359.

<sup>101</sup> Տես նույն տեղը, էջ 358.

<sup>102</sup> Տես նույն տեղը, էջ 396.

<sup>103</sup> Տես նույն տեղը, էջ 2.

<sup>104</sup> Տես նույն տեղը, էջ 130:

<sup>105</sup> Տես նույն տեղը, էջ 130.



## II. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ-ՈՒՄԸ

Ազգը վոչ թե սոսկ պատմական կատեգորիա չէ, այլ Վորոշ գարաշըջանի, բարձրացող կապիտալիզմի գարաշըջանի պատմական կատեգորիա չէ: Ֆեոդալիզմի վերացման ու կապիտալիզմի զարգացման պրոցեսը միաժամանակ մարզկանց իրրև ազգեր կազմավորվելու պրոցեսն է: Բանն այդպես է տեղի ունենում, որքնակ, Արևմտյան Յեվրոպայում: Անգլիացիները, Ֆրանսացիները, իտալացիները և այլք իրրև ազգեր կազմավորվել են ֆեոդալական, մասնատուլթյան դեմ հաղթանակող կապիտալիզմի հաղթական յերթի ժամանակ:

Բայց այնտեղ ազգերի գոյանալը դրա հետ մեկտեղ նշանակել է նրանց վերածվելն ինքնուրույն ազգային պետությունների: Անգլիական, ֆրանսական և այլ ազգերը միևնույն ժամանակ հանդիսանում են անգլիական և այլ պետությունների: Այդ պրոցեսից դուրս մնացած Իռլանդիան չի փոխում ընդհանուր պատկերը:

Բանը փոքր ինչ այլ կերպ է տեղի ունենում Արևելյան Յեվրոպայում: Այն ժամանակ, յերբ Արևմուտքում ազգերը գարգացան իրրև պետություններ, Արևելքում կազմավորվեցին ազգամիջյան (МЕЖДУНАРОДНЫМ) պետություններ, պետություններ, Վորոնք բաղկացած են միքանի ազգությունից: Այսպես են՝ Ավստրո-Հունգարիան, Ռուսաստանը: Ավստրիայում քաղաքական կողմից ամենից ավելի գարգացած հանդիսացան գերմանացիները—նրանք էլ իրենց վրա վերցրին ավստրիական ազգություններն իրրև պետություն միավորելու գործը: Հունգարիայում պետական կազմակերպվածության համար ամենից ավելի պատրաստ դուրս յեկան մաջարները—հունգարական ազգությունների կորիզը, հենց նրանք էլ Հունգարիայի միավորիչներն են: Ռուսաստանում ազգությունների միավորիչի դերն իրենց վրա վերցրին վելիկոռուսները, Վորոնց գլուխ էր կանգնած պատմականորեն կազմավորված ուժեղ և կազմակերպված ազնվական դինվորական բյուրոկրատիան:

Բանն այսպես էր տեղի ունենում Արևելքում:

Պետությունների գոյացման այս յուրատեսակ յեղանակը կարող էր տեղ գտնել տակավին չվերացված ֆեոդալիզմի պայմաններում միայն, թույլ գարգացած կապիտալիզմի պայմաններում միայն, յերբ դեպի հետին պլան քշված ազգությունները դեռևս չէին կարողացել անտեսապես կոնսոլիդացիայի յենթարկվել իրրև ամբողջական ազգեր:

Բայց կապիտալիզմը սկսում է գարգանալ նաև արևելյան պետություններում: Զարգանում են առևտուրը և հաղորդակցության ճանապարհները: Առաջանում են խոշոր քաղաքներ: Ազգերը անտեսապես կոնսոլիդացիայի յեն յենթարկվում: Հետ մղված ազգությունների անդորր ճյանքի մեջ ներխուժած կապիտալիզմը խոռվահույլ է անում այդ ազգու-

թյուններին և նրանց շարժման մեջ և դնում: Մասուլի ու թատրոնի դար-  
զացումը, ռալյուրաափ (Ավստրիայում) և Դուսայի (Ռուսաստանում)  
գործունեյությունը նպաստում են «ազգային զգացմունքների» ուժե-  
ղացմանը: Մնուսնդ առած ինտելիգենցիան տողորվում և «ազգային զա-  
ղափարով» և այս խնդրուկները ել գործում ե...

Բայց ինքնուրույն կյանքի համար արժնացած հետ մղված ազգերն  
արդեն իբրև անկախ ազգային պետություններ չեն կազմավորվում:  
Նրանք իրենց ճանապարհին ամենաուժեղ դիմադրության են հանդի-  
պում այն իշխող ազգերի զեկավար խավերի կողմից, վորոնք վաղուց  
արդեն պետության գլուխ եյին կանգնած: Ուշացել են...

Այսպես կազմավորվում են իբրև ազգեր՝ չեխերը, լեհերը և ուրիշ-  
ները՝ Ավստրիայում, իրվասները և ուրիշները՝ Հունգարիայում, լատիշ-  
ները, լիտվացիները, ուկրաինացիները, վրացիները, հայերը և ուրիշ-  
ները՝ Ռուսաստանում: Այն, ինչ բացատրություն եր Արևմտյան Յեվ-  
րոպայում (Իտալիայի), Արևելքում կանոն դարձավ:

Արևմուտքում Իտալիայի բացառիկ դրությանը պատասխանեց  
ազգային շարժումով: Արևելքում արժնացած ազգերը պետք ե նույն  
բանով պատասխանեյին:

Այսպես եյին դասավորվում հանդամանքները, վորոնք Յեվրոպա-  
յի արևելքի յերիտասարդ ազգերին պայքարի եյին մղում:

Պայքարը սկսվեց և բորբոքվեց, իսկպես, վոչ թե իրենց ամբող-  
ջությամբ առած ազգերի միջև, այլ իշխող ու հետ մղված ազգերի տիրա-  
պետող դասակարգերի միջև: Պայքարը մղում են սովորաբար կամ ճնշ-  
ված ազգի քաղաքային մանր բուրժուազիան՝ իշխող ազգի խոշոր  
բուրժուազիայի դեմ (չեխերն ու գերմանացիները), կամ ճնշված ազգի  
գյուղական բուրժուազիան՝ տիրապետող ազգի կարվածատերերի դեմ  
(ուկրաինացիները և հաստանում), կամ ճնշված ազգերի ամբողջ «ազգա-  
յին» բուրժուազիան՝ իշխող ազգի կառավարող ազնվականության դեմ  
(Լեհաստանը, Լիտվան, Ուկրաինան՝ Ռուսաստանում):

Բուրժուազիան գործող գլխավոր անձն ե:

Յերիտասարդ բուրժուազիայի համար հիմնական հարցը՝ շուկան ե:  
Վաճառահանել իր ապրանքները և այլ ազգության բուրժուազիայի  
հետ ունեցած կոնկուրենցիայում հաղթող հանդիսանալ՝ այս ե նրա  
նպատակը: Այստեղից բխում ե նրա ցանկությունը— ապահովել իր հա-  
մար «սեփական», «հայրենի» շուկա: Շուկան առաջին դպրոցն ե, վոր-  
անց բուրժուազիան նացիոնալիզմ ե սովորում:

Բայց, սովորաբար, բանը շուկայով չի սահմանափակվում: Պայքարին  
խառնվում ե տիրապետող ազգի կիսաֆեոդալական կիսաբուրժուական  
բյուրոկրատիան իր «քարշ տուր գեղի դուրս և ներս մի թողնի»-ի մե-  
թոդներով: Իշխող ազգի բուրժուազիան— միևնույնն ե՝ նա մանր, թե խո-

չոր բուրժուազիա յև—Շնարաջվորութիւնն և ստանում էազիւլի արագ ու  
 էազիւլի վնասականորեն» հաշիվ տեսնելու իր կոնկուրենտի հետ: Եվ ժեռը  
 միավորվում են, և սկսվում են էայլազիւլ բուրժուազիայի դեմ ուղղ-  
 վող մի ամբողջ շարք սահմանափակիչ միջոցներ, վորոնք ուսարեսիա-  
 ների յեն փոխարկվում: Պայքարը տեսնական վորտից փոխադրվում  
 և քաղաքական վորտարը: Տեղափոխութիւնն ազատութիւնն սահմանա-  
 փակում, լեզվի ճնշում, ընտրական իրավունքների սահմանափակում,  
 զարոյցների կրճատում, կրօնական ճնշումներ և այլն՝ հն թափվում են  
 սկսնկուրենտի» դիւին: Իհարկե, այսպիսի միջոցները հետապնդում են  
 իշխող ազգի վոչ միայն բուրժուական դասակարգերի շահերը, այլ և կա-  
 ռավարող բյուրոկրատիայի սպեցիֆիկ, այսպես ասած՝ կաստայական  
 նպատակները: Բայց հետեանքների տեսակետից դա բորտովին սեկ և  
 բուրժուական դասակարգերն ու բյուրոկրատիան ազլալ դեպքում ձեռք  
 ձեռքի տված են դնում—միեևունն և՛ խոսքը Ազատը—Հունգարիայի  
 մասին և, թե Ռուսաստանի մասին:

Ճնշված ազգի՝ բորտ կողմերից նեղված բուրժուազիան ընակա-  
 նարեն շարժվում եւ նա դիմում և շհայրենի ներքնախավերին» և սկսում  
 և ըզափել շհայրենիքի» մասին՝ հրամցնելով իր սեփական գործն իրը  
 համաժողովրդական գործ: Նա իր համար բանակ և հազաքաղրում շհայ-  
 րենակիցներից» ի շհա... շհայրենիքի»: Յեւ շհերքնախավերը» միշտ շհ,  
 վոր սնտարեր են մնում դեպի կոչերը՝ հազաքվելով բուրժուազիայի  
 դրոշի շուրջը: Վերեից յեկած ուսարեսիաները շհերքնախավերին» ել են  
 դիպում՝ նրանց մեջ դժգոհութիւնն առաջացնելով:

Այսպես և սկսվում ազգային շարժումը:

Ազգային շարժման ուժը վորտվում և ազգի լայն խավելի,—պրո-  
 լետարիատի ու գյուղացիութիւնն,—մասնակցութիւնն աստիճանով:

Պրոլետարիատն արդյոք կկանգնի բուրժուական նացիոնալիզմի  
 դրոշի ներքո՝ դա կախված և դասակարգային հակասութիւնների զար-  
 քացման աստիճանից, պրոլետարիատի գիտակցականութիւններից ու կազ-  
 մակերպվածութիւններից: Գիտակից պրոլետարիատն ունի իր սեփական  
 փորձված գրոշը, և նա կարիք շունի բուրժուազիայի դրոշի ներքո  
 կանգնելու:

Ինչ վերաբերում և գյուղացիներին, այս նրանց մասնակցութիւնն  
 ազգային շարժմանը ամենից առաջ կախված և ուսարեսիաների ընույ-  
 թից: Յեթե ուսարեսիաները շոշափում են շհողի» շահերը, ինչպես այդ  
 տեղի յե ունեցել իրլանդիայում, ապա գյուղացիութիւնն լայն դանգված-  
 ներն անհապաղ կանգնում են ազգային շարժման դրոշի ներքո:

Մյուս կողմից, յեթե, որինակ, Վրաստանում շհա փոքրիշատե լուրջ  
 հակառուսակամ նացիոնալիզմ, ապա դա, ամենից առաջ, նրանից և, վոր  
 ախտիզ շհան ուսա կազմատեղեր կամ ուսական խոշոր բուրժուազիա,

վորոնք կարողանալին մուռնոց տալ աշխարհի նացիոնալիզմին մասսաների մեջ, Վրաստանում կա հեղեղահայկական նացիոնալիզմ, բայց սանրանից ե, վոր ախտեղ գեռ կա հայկական խոշոր բուրժուազիա, վորը, հարվածելով մանր, տակավին չամբարադրված վրացական բուրժուազիային, վերջինիս մղում է դեպի հակահայկական նացիոնալիզմ:

Նայած այս գործոններին՝ ազգային շարժումն ընդունում է կամ մասսայական բնույթ, ավելի ու ավելի անհրով (Իռլանդիա, Գալիցիա), կամ մանր բաղխումների. մի շղթայի յե վերածվում՝ աշխարհիկով ու դաժնալով սկանդալներ և «պայքար»՝ ցուցանակների համար (Բուհեմիայի մի քանի վորը քաղաքները):

Ազգային շարժման բովանդակութունը, հարկավ, ամենուրեք չի կարող միատեսակ լինել. նա ամբողջովին վորոշվում է շարժման առաջադրած բազմազան պահանջներով: Իռլանդիայում շարժումն ազբարային բնույթ ունի, Բուհեմիայում—«լեղվական», մի տեղ պահանջում են քաղաքացիական իրավահավասարութուն ու դավանության ազատութուն, մի այլ տեղ—«իրենց» աստիճանավորները կամ իրենց սեյմը: Բազմազան պահանջների մեջ հաճախ նշմարվում են առհասարակ ազգը բնորոշող բազմազան դժեր (լեզուն, տերիտորիան և այլն): Ուշագրության արժանի յե այն, վոր վոչ մի տեղ չեն հանդիպում բուրժուային համապարփակ «ազգային բնավորության» պահանջին: Յեվ այդ հասկանալի յե. «ազգային բնավորութունը», վերցված ինֆնրսիսյան, անըմբռնելի յե և, ինչպես ճիշտ է նկատել Ի. Շարասերը, «քաղաքագետը նրա նկատմամբ բան չունի անելու»\*:

Ընդհանուր առմամբ սրանք են ազգային շարժման ձևերն ու բնույթը:

Մեր ասածից պարզ է, վոր բարձրացող կապիտալիզմի պայմաններում ազգային պայքարը բուրժուական դասակարգերի պայքար է միմյանց միջև: Բուրժուազիային յերբեմն հաջողվում է ազգային շարժման մեջ ներդրավել պրոլետարիատին, և այն ժամանակ ազգային պայքարն արտաքուստ է և Իր կյուրյամբ այդ պայքարը միշտ էլ Մնում է բուրժուական պայքար, վորը ձեռնառու է հարմար և գլխավորապես բուրժուազիային:

Բայց սրանից բնավ էլ չի հետևում, թե պրոլետարիատը չպետք է պայքարի ազգությունների ճնշման քաղաքականության դեմ:

Ազատ տեղափոխումը սահմանափակելը, ընտրական իրավունքներից զրկելը, լեզուն ճնշելը, գաղտնիքը կրճատելը և այլ ունայրեխիաները բանվորներին յեթե վոչ ավելի՝ պակաս չափով չեն դիպչում, քան բուրժ-

\* Տես նրա «Der Arbeiter und die Nation», 1912 թ., էջ 33:

ժուլայիս յինս Այսպիսի դրությունը կարող և միայն արգելակել ասորացի յալ ազգերի պրոլետարիատի հոգեկան ուժերի ազատ զարգացման գործը: Զի կարելի չըջորեն խոսել թաթար կամ հրեա բանվորի հոգեկան ընդունակությունների լիակատար զարգացման մասին, յերբ նրան հնարավորություն չեն տալիս ողտվելու մայրենի լեզվից ժողովներում ու դատախոսությունների ժամանակ, յերբ փակում են նրանց առջև զպրոց-նէրը:

Բայց ազգայնական սեպրեսիաների քաղաքականությունը մի այլ կողմով էլ և վտանգավոր պրոլետարիատի գործի համար: Նա լախ խազերի ուշադրությունը սոցիալական հարցերից, դասակարգային կռիվ հարցերից դրավում է՝ ազգային հարցերի, պրոլետարիատի ու բուրժուազայի համար շեղահանուրը հարցերի կողմը: Իսկ սահպատավոր հող և ստեղծում էշահերի ներդաշնակության՝ կեղծ քարոզի համար, պրոլետարիատի դասակարգային շահերը քողարկելու համար, բանվորների հոգեկան սարկացման համար: Դրանով իսկ լուրջ արգելք և զըրվում բոլոր ազգությունների բանվորների միավորման գործի առջև: Սեթի լեհ բանվորների նշանակելի մասը մինչև այժմ էլ բուրժուական նացիոնալիստներին հոգեպես ստրկացած և մնում, յեթև նա մինչև այժմ էլ բանվորական ինտերնացիոնալ շարժումից մի կողմ կանգնած և մնում, ապա այդ, գլխավորապես, ախ պատճառով և, վոր շիշխանություն ունեցողների՝ հակալեհական վազեմի քաղաքականությունը հող և ընձևուում այդպիսի ստրկացման համար, զժվարացնում և բանվորների ազատագրվելն այդպիսի ստրկացումից:

Բայց սեպրեսիաների քաղաքականությունը այսքանով չի բավականանում: Ճնշումն շարտեմից՝ նա հաճախակի անցնում և ազգերին միմյանց դեմ լարելու շարտեմին, կոտորածի ու ջարդերի շարտեմին: Իհարկե, վերջինս վոչ ամենուրեք և վոչ մշտապես և հնարավոր, բայց ախտեղ, վորտեղ ախ հնարավոր և, — սարբրական ազատությունների բացակայության պայմաններում, — ախտեղ ախ հաճախակի զարհուրելի շափեր և ընդունում՝ սպառնալով արյան ու արցունքների մեջ խեղճել բանվորների համախմբման գործը: Կովկասն ու Ռուսաստանի հարավը քիչ որինակներ չեն տալիս Վաթանիք ու իշխիք, — սա յև լարելու քաղաքականության նպատակը: Սեվ ինչ շափով վոր նման քաղաքականությունը հաջողվում է՝ զա պրոլետարիատի համար մեծագույն շարիք և, լրջագույն արգելք և պետության բոլոր ազգությունների բանվորներին համախմբելու գործի համար:

Բայց բանվորները շահագրգռված են իրենց բոլոր ընկերներին վորպես միասնական ինտերնացիոնալ բանակ լիովին միաձուլելու գործով, բուրժուազային հոգեպես ստրկացած լինելուց նրանց շուտով ու վերջնականապես ազատագրելու գործով, իրենց յեղբայրակիցների հոգեկան

ուժերը լիապես ու ազատորեն դարգացնելու գործով՝ ինչ ազդի էլ վոր նրանք պատկանելիս լինեն:

Ուստի և՛ բռնավորները պայքարում են և պայքարելու յեն ազգերին ճշելու քաղաքականության դեմ՝ ինչ ձևեր էլ վոր ունենա այդ քաղաքականությունը, սկսած ամենանուրբ ձևերից մինչև ամենաբիւրտ ձևերը, ինչպես և լարելու քաղաքականության դեմ՝ ինչ ձևեր էլ վոր ունենա վերջինս:

Ուստի և բոլոր յերկիրներէ սոցիալ-դեմոկրատիան հռչակում և ազգերի ինքնորոշման իրավունքը:

Ինքնորոշման իրավունք, այսինքն՝ միայն ազգը ինքը իրավունք ունի իր ճակատագիրը վորոշելու, վոչ վոք իրավունք չունի բռնի կերպով լուսնովելու ազգի կյանքին, Էսէզիլու նրա դպրոցները և այլ հիմնարկները, հեղաբեկելու նրա բարքերն ու սովորույթները, նե՛սելու նրա լեզուն, կրճածելու՝ իրավունքները:

Սա, հարկավ, չի նշանակում, թե սոցիալ-դեմոկրատիան պաշտպանելու յե ազգի բոլոր և ամեն տեսակի սովորույթներն ու հիմնարկները:

Պայքարելով ազգի վերաբերմամբ յեղած բռնությունների դեմ՝ նա պաշտպանելու յե միայն ազգի իրավունքը՝ վորոշելու իր ճակատագիրը, նույն այդ ժամանակ սոցիալ-դեմոկրատիան պլիտացիա յե մղելու այդ ազգի ֆիաստակար սովորույթների ու հիմնարկների դեմ՝ այն նպատակով, վորոշեսցի ավյալ ազգի աշխատավոր խավերին հնարավորություն տա ազատվելու դրանցից:

Ինքնորոշման իրավունք, այսինքն՝ ազգը կարող և տնորինիլ իր գործը սեփական ցանկությամբ: Նա իրավունք ունի իր կյանքը տնորինելու ավտոնոմիայի հիմունքներով: Նա իրավունք ունի ֆեդերատիվ հարաբերությունների մեջ մտնելու մյուս ազգերի հետ: Նա իրավունք ունի բոլորովին անջատվելու Ազգը սուվերեն է, և բոլոր ազգերն իրավահավասար են:

Սա, հարկավ, չի նշանակում, թե սոցիալ-դեմոկրատիան պաշտպանելու յե ազգի ամեն մի պահանջը: Ազգն իրավունք ունի մինչև անդամ վերադառնալու հին կարգերին, բայց այս տակավին չի նշանակում, թե սոցիալ-դեմոկրատիան իր ստորագրությունը կզնի ավյալ ազգի այս կամ այն հիմնարկի այդպիսի վորոշման տակը: Պրոլետարիատի շահերը պաշտպանող սոցիալ-դեմոկրատիայի պարտականությունները և զանազան դասակարգերից բազկացած ազգի իրավունքները— յերկու տարբեր բաներ են:

Ազգերի ինքնորոշման իրավունքի համար պայքարելով, սոցիալ-դեմոկրատիան իր առջև նպատակ է դնում վերջ տալ ազգի ճնշման քաղաքականությանը, այդ քաղաքականությունն անհնարին դարձնել

և դրանով ազգերի պայքարը ջլատել, բթացնել, հասցնել այն մի-  
նիմուսի:

Գիտակից պրոլետարիատի քաղաքականութիւնը սրանով եյապես  
տարբերվում է բուրժուազիայի քաղաքականութիւնից, բուրժուազիայի,  
վորը ջանում է խորացնել ու բորբոքել ազգային պայքարը, շարունա-  
կել ու սրել ազգային շարժումը:

Հենց այս պատճառով գիտակից պրոլետարիատը չի կարող կանգ-  
նել բուրժուազիայի «ազգային» դրոշի տակ:

Հենց այս պատճառով Բաուերի առաջարկած՝ այսպես կոչված  
«եւրոպացիոն-ազգային» քաղաքականութիւնը չի կարող պրոլետա-  
րիատի քաղաքականութիւն դառնալ: Բաուերի փորձը՝ նույնացնելու  
իր «եւրոպացիոն-ազգային» քաղաքականութիւնը բարդի բանվոր դա-  
սակարդի քաղաքականութիւն հետ, մի փորձ է՝ բանվորների դասա-  
կարգային պայքարը հարմարեցնելու ազգերի պայքարին:

Ազգային շարժման, իր ելութիւնով բուրժուական շարժման բախտը  
ընտանաբուն կապված է բուրժուազիայի բախտի հետ: Ազգային շարժ-  
ման վերջնական անկումը հնարավոր է լոկ բուրժուազիայի անկման  
պարագայում: Միայն սոցիալիզմի թագավորութիւն մեջ կարող է լիա-  
կատար լրագազութիւն հաստատվել: Բայց ազգային պայքարը մինի-  
մումի հասցնել, արժատապես ջլատել այն, առավելագույն չափով ան-  
լիտոս դարձնել պրոլետարիատի համար — հնարավոր է նաև կապիտալիզմի  
չըջանակներում: Այս են վկայում թեկուզ Շվեյցարիայի ու Ամերիկայի  
սրբնակները: Սրա համար պետք է դեմոկրատացնել յերկիրն ու ազգերին  
ազատ դարձացման հնարավորութիւն տալ:

### III. ՀԱՐՑԱԴՐՈՒՄԸ

Ազգն իր բախտն ազատորեն վորոշելու իրավունք ունի: Նա իրա-  
վունք ունի այնպես տնորինելու իր գործը, ինչպես նրան հանելի յե,  
հարկավ Վտանառակ չանելով այլ ազգերի իրավունքները: Սա անվի-  
ճելի յե:

Բայց իսկպաես ի՞նչպես նա պետք է տնորինի իր գործը, ի՞նչպիսի  
նեով պետք է ընդունի նրա ապագա սահմանադրութիւնը, յեթե նկա-  
տի ունենանք ազգերի մեծամասնութիւնն և ամենից առաջ ամբողջ պրո-  
լետարիատի շահերը:

Ազգը իր գործը ավտոնոմ կերպով տնորինելու իրավունք ունի:  
Նա անպոմ անջատվելու իրավունք ունի: Բայց այդ դեռ չի նշանա-  
կում, թե այս բանը նա պետք է անի ամեն տեսակի պայմաններում:

\* Տես Ո. Բաուերի «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան», հրատ. «Շորտ-ը,  
1909 թ., էջ 106.



թե ազատամիտն կամ սեպարացիան (անջատումը) ամենուրեք ու միշտ ձեռնառու կլինեն ազգի. այսինքն՝ նրա մեծամասնության, այսինքն՝ անշխատավոր խավերի համար: Անշրկավիստայան թաթարները, վորպես ազգ, կարող են հավաքվել, ասենք, իրենց սեյմում և յննթարվելով իրենց բեկերի ու մոլլաների ազդեցությանը՝ վերականգնել իրենց մասին կարգերը, վճռել պետութայնից անջատվելը: Ինքնորոշման վերաբերյալ կետի իմաստի համաձայն՝ նրանք այս բանի լիակատար իրավունք ունեն: Բայց արդյո՞ք սա համապատասխան կլինի թաթարական ազգի աշխատավոր խավերի շահերին: Արդյո՞ք սոցիալ-դեմոկրատիան կարճ և անտարբեր նայել այն բանին, թե ինչպես բեկերն ու մոլլաներն իրենց հետևից են տանում մասսաներին՝ ազգային հարցի լուծման գործում: Սոցիալ-դեմոկրատիան արդյո՞ք չպետք և միջամտի գործին և վորոշ կեցավով ազգի ազգի կամքի վրա: Արդյո՞ք նա չպետք և հանդես գա հարցի լուծման այնպիսի կոնկրետ պլանով, վորն առավել ձեռնառու և թաթարական մասսաների համար:

Բայց վճիռ լուծումն և ամենից ավելի համատեղելի աշխատավոր մասսաների շահերի հետ: Ազատամիտն, ֆեդերացիան, թե սեպարացիան:

Այս բոլորն այնպիսի հարցեր են, վորոնց լուծումը կախված և ավելալ ազգին շրջապատող կոնկրետ պատմական պայմաններից:

Ինչ ավելին: Պայմանները, ինչպես և ամեն ինչ, փոխվում են, և մի լուծում, վորը ճիշտ և ավելալ մոմենտի համար, կարող և միանգամայն անընդունելի լինել մի այլ մոմենտի համար:

XIX դարի կեսերին Մարքսը կողմնակից եր ուսուսական Ահասասանի անջատմանը, և նա իրավացի չի, վորովհետև այն ժամանակ հարցը վերաբերում եր բարձր կուլուրան նրան կործանող ցածր կուլուրայից ազատագրելուն: Յեվ այն ժամանակ հարցը զրված եր վոչ թե միայն տեսականապես, վոչ թե ակադեմիկորեն, այլ գործնականում, բուն իսկ կյանքում...

XIX դարի վերջին լեհական մարքսիստներն արդեն դեմ են արտահայտվում Ահասասանի անջատմանը, և նրանք նույնպես իրավացի չեն, վորովհետև վերջին 50 տարում խորը փոփոխություններ են տեղի ունեցել՝ Ռուսաստանի ու Ահասասանի անտեսական ու կուլուրական մերձեցման իմաստով: Բացի դրանից, անջատման հարցն այս ժամանակում պրակտիկայի առարկայից դարձել և ակադեմիական այնպիսի վեճերի առարկա, վորոնք հուզում են թերևս միայն արտասահմանյան ինտելիգենտներին: Մա, իհարկե, չի բացառում ներքին և արտաքին վորոշ կոնյուկուրաների հնարավորությունը, վորոնց առկայության դեպքում Ահասասանի անջատման հարցը նորից կարող և հերթի գրվել:

Սրանից հետևում և, վոր ազգային հարցի լուծումը հնարավոր և



միայն իրենց դարդացման մեջ վերցրած պատմական պայմաններէ կապակցութեամբ: Տվյալ ազգը շրջապատող տնտեսական, քաղաքական ու կուլտուրական պայմանները, — սա յե այն հարցի լուծման միակ բանալին, թե իսկապէս ի՞նչպէս պետք է իբր գործը անորինի այս կամ այն ազգը, ի՞նչպիսի անվեր պետք է ընդունի նրա ազազա սահմանադրութեանը: Ընդամին՝ հնարաւոր է, զոր յուրաքանչյուր ազգի համար հարցի առանձին լուծում պահանջվի: Յեթն կա մի տեղ, վորտեղ անհրաժեշտ է հարցի դիւրեկտիւ գրուելը, ապա զա հենց այստեղ, ազգային հարցումն է:

Այս պատճառով՝ մենք վճռապէս պետք է դեմ արտահայտվենք ազգային հարցի լուծման մի շատ տարածված, բայց և շատ հախուռն (орыгиналь) յեղանակին, զորն իբր սկիզբը Բուռնից է առնում: Մենք խոսում ենք ավստրիական և հարավ-սլավոնական սոցիալ-դեմոկրատիային՝ վկայակոչելու թեթև մեթոդի մասին, սոցիալ-դեմոկրատիայի, զորը, իբրև թե, արդեն լուծել է ազգային հարցը, և զորից ուսուսական սոցիալ-դեմոկրատները ուղղակի պետք է փոխ առնեն լուծումը: Ընդամին՝ յենթադրվում է, թե այն ամենը, ինչ, ասենք, ճիշտ է Ավստրիայի համար, ճիշտ է նաև Ռուսաստանի համար: Աչքաթող և արվում ամենակարևորն ու ամենավճռապէս սովյալ դեպքում, այն է՝ պատմական կոնկրետ պայմաններն ընդհանրապէս Ռուսաստանում և մասնավորապէս՝ առանձին յուրաքանչյուր ազգի կյանքում՝ Ռուսաստանի սահմաններում:

Լսեցեք, որինակ, հայանի բուռնական Վ. Կոստովսկուն:

«Յերբ Բուռնի IV համազումարում քննարկվում էր հարցի սկզբունքային կողմը (խոսքը ազգային հարցի մասին է Ե. Սե.), ապա ընդհանուր հովանութեան արժանացով հարավ-սլավոնական սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան բանակի զոգով հարցի այն լուծումը, զոր առաջարկեց համազումարի անդամները մեզը»<sup>\*\*</sup>:

Վորպէս հետևանք՝ «համազումարը միաձայն ընդունեց»... ազգային ավտոնոմիան:

Եեվ միայն այս Վոչ ուսուսական իրականութեան վերլուծում, զոչ էլ Ռուսաստանի հրեաների կյանքի պայմանների պարզարանում. առաջ լուծումը փոխ առան հարավ-սլավոնական ս. - դ. կուսակցութեանից, հետո՝ «հավանութեան տվին», և ապա «միաձայն ընդունեցին»: Բուռնականներն այսպէս են դնում ու լուծում ազգային հարցը Ռուսաստանում...

Այնինչ, Ավստրիան ու Ռուսաստանը միանգամայն տարբեր պայմաններ ունեն: Հենց սրանով է բացատրվում, զոր Բրյուսնում հարավ-

\* Հարավ-սլավոնական սոցիալ-դեմոկրատիան աշխատում է Ավստրիայի հարավում:

\*\* Տես Վ. Կոստովսկու «Ազգութեան հարցերը», էջ 16—17, 1907 թ.:

սրազմանկան ա.-դ. կուսակցութեան բանասէիք վոգով (1899 թ.)<sup>5</sup> ընդունած ազգային ծրագրում (ճիշտ է, մի քանի աննշան ուղղումներով) Ավստրիայի սոցիալ-դեմոկրատիան, այսպէս ասած, բնավ վոչ ուսուս-վարի չէ մտանում հարցին և, իհարկէ, վոչ սուսաւարի չէ լուծուած այն:

Ամենից առաջ՝ հարցադրուելը: Ինչպէս են դնում հարցն ազգային ավանտմիայի ավստրիական տեսարանները, Բրյուննի ազգային ծրագրի և հարաւ-սրազմանկան սոցիալ-դեմոկրատիական կուսակցութեան բանասէիք մեկնիչները—Շպրինգերն ու Բաուերը:

«Մենք—ասում է Շպրինգերը,—այսօր սոցիալատիան ենք թագում ախ կարցը, թէ արդոք ընդհարակն նարավոր է ազգութունները պետութեանը և արդոք մասնավորապէս ավստրիական ազգութունները հարկազրկած են կազմելու քաղաքական մը ամբողջութեան, այս հարցերը մենք լուծած ենք համարելու: Մեր նկատարութեանը, հարկով, կոչ չի ունենա նրա համար, ով կրոյալ նարավորութեանը և անհրաժեշտութեանը համարել չի: Մեր թեման ասում է՝ ավոյ ազգերը նարկարկած են միասեղ գոյութեան ունենալը: Բնչ իրավանք մեկը նրանց նարավորութեան կտան ամենից լավ ապրելու» (Շպրինգերին է):<sup>6</sup>

Այսպէս ուրեմն, Ավստրիայի պետական ամբողջութեանը՝ վարպետ մեկնակետ:

Նույն այդ բանը Բաուերն և ասում.

«Մենք այն յենթազգութունից ենք յիշում, թէ ավստրիական ազգերը կ՞ան պետական նույն միութեան մեջ, վորի մեջ սրանք ներկայումս ազգում են, և կարց ենք ապրելու, թէ այդ միութեանը չընտանկներում ազգերն ինչպիսի հարարութեաններ կունենան միմյանց հետ ու նրանք բոլորը՝ պետութեան նկատմամբ»:

Կրկին ու կրկին Ավստրիայի ամբողջութեանը՝ ամենից առաջ:

Ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիան արդոք կարո՞ղ է հարցն այսպէս դնել: Վնչ, չի կարող: Յեզ նա չի կարող այն պատճառով, վոր նենց են դիտից նա կանգնած է ազգերի ինքնորոշման տեսակետի վրա: Ըստ վորի ազգը անջատվելու իրազմուք ունի: Նույնիսկ բունպական Գոլդբաւարը սուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի յերկրորդ համագումարում ընդունեց, վոր սուսաստանյան սոցիալ-դեմոկրատիան չի կարող հրաժարվել ինքնորոշման տեսակետից: Անա թէ ինչ է ասել այն ժամանակ Գոլդբաւարը:

«Վնչնչ չի կարելի առարկել ինքնորոշման իրազմուքի գծի: Այն դեպքում, յերբ վորնն ազգ պայքարում է ինքնուրույնութեան համար, զրան չի կարելի ընդդրմանու: Յեթն կենտասանը չկամենա արիւնական ստուսնութեանը միանալ Ռուսաստանի հետ, ապա մենք չենք, վոր պետք է խանգարենք նրան:

<sup>5</sup> Տես Շպրինգերի «Ազգային պրոբլեմը», էջ 16:

<sup>6</sup> Տես Բ. Բաուերի «Ազգային կարցը և սոցիալ-դեմոկրատիան», էջ 299:

Այս ամենը ճիշտ և Քայց սրանից հետևում է, զոր ավատորիական ու ուսուսական ա.-դ. մեկնակետերը վաղ միայն միատեսակ չեն, այլ ընդհակառակը, ուղղակի հակադիր են։ Արանից հետո արդյոք կարելի՞ չէ խոսել ավատորիականից ազգային ծրագրերը փոխ առնելու նախադրություն մասին։

Այնուհետև «Ազգային ազատութիւնները» ավատորիականները մտածում են իրականացնել մանր սեփորմների միջոցով, զանազազգայի Առաջարկելով ազգային ավտոնոմիան վերադառնալ մի դորնական միջոց՝ նրանք բնավ էլ հույս չեն կազում արմատական փոփոխութիւն, դեմոկրատիկ-ազատադրական շարժման հետ, զորը նրանց հեռանկարում չկա։ Այնինչ, ուսուսական մարքսիստները բազում թիւներով ազատութիւնն ազգային հարցը կազում են հազմական արմատական փոփոխութիւն հետ, դեմոկրատիկ-ազատադրական շարժման հետ՝ հիմք չունենալով հույս դնելու սեփորմների վրա։ Իսկ սա երազես փոխում է բանը՝ Ռուսաստանի ազգերի հազմական բախտի իմաստով առած։

«Եսկանալի չէ,—ասում է Քուրերը,—զձեզ է կարելի թե ազգային ավտոնոմիան կանգն կզս զորդես կանանք մի մեծ վեհի, մի կամարակ, վեհական գործողութիւն։ Ավտորիան զեղի ազգային ավտոնոմիա ընթացալու չէ քայլ առ քայլ, զանազալ ու տանջալից պրոցեսով, ծանր պայքարով, զորի պատեհում որն-որութիւնն ու կառավարութիւնը զտնվելու չեն իրանիկական յլտափութիւնի վեհակում Վոչ, պետական-իրազմական նոր կարգը ստեղծվելու չէ զոչ թե որն-որական մեծ սկիտի միջոցով, այլ բազմաթիվ առանձին որն-ընթացով, զորն-ը նրատարակվելու չեն առանձին մարգերի, առանձին կամայնքների կամար»։

Նույն այդ բանը Շարիբեզերն և ասում.

«Յես շատ լավ գիտեմ,—գրում է նա,—զոր նման տեսակի ինտախուտները (ազգային ավտոնոմիայի որդանները—Վ. Սե.) մի սարում կամ մի սասնյակ սարում չեն ստեղծվում։ Միմիայն պրուսական կառավարութիւնի վերակազմութիւնը պահանջից յերկարատե մասնակու. Իր նիմանկան վարչական նիմարիների վերջնական կասաստման կամար Պրուսիան յերկու տասնամյակի կարիք ունեցավ։ Ուստի՝ թաղ չկարծեն, զոր յես չգիտեմ, թե զորքան մասնակ է զորքան զժձարութիւններ կզատու՞ չվեն Ավտորիայի կամար»<sup>99</sup>.

Այս ամենը շատ վորոշ և Քայց ուսական մարքսիստներն արդյոք կարծիք են ազգային հարցը չկապել ճշմարտակ, վեհական գործողութիւններին հետ։ Արդյոք կարծիք են նրանք հույս դնել մասնակի սեփորմների, բազմաթիվ առանձին որն-ընթացի վրա, զորդես բազմութիւնների ազատութիւնն՝ նվազման միջոցի վրա։ Իսկ յեթե նրանք չեն կարող ու չկետք և անեն այս, ապա սրանից արդյոք պարզ չի՞, զոր

<sup>99</sup> Տես Ո. Քուրերի «Ազգային հարցը», էջ 422:

<sup>100</sup> Տես Շարիբեզերի «Ազգային պրոցեսը», էջ 281—282:

ավտորիտացիաների և ուսմաների պայքարի մեթոդները և հեռանկարները միանգամայն տարբեր են: Այս գրութիւնը պարագայում ինչպէս կարելի չէ սահմանափակել ավտորիտացիաների միակողմանի ու կրտստական (ПОЛОВОУЧНОՅ) ազգային ավտոնոմիայով: Յերկուսից մեկը՝ կամ փոխառելու կողմնակիցները հույս չեն դնում «վճռական» ու համարձակ դործողութիւնները վրա», կամ նրանք հույս են դնում գրանց վրա, բայց շէնք իմանում, թէ ինչ են անում»:

Վերջապես, Ռուսաստանն ու Ավստրիան միանգամայն տարբեր հերթական խնդիրների առջև են կանգնած, վորի շնորհիվ ազգային հարցի լուծման համար ել տարբեր մեթոդ է թելադրվում: Ավստրիան պառլամենտարիզմի պայմաններում և ազրում, ներկա պայմաններում առանց պառլամենտի անտեղ անհնարին է դարձացում: Բայց Ավստրիայի պառլամենտական կյանքն ու որենդրութիւնը, շնորհիվ ազգային կուսակցութիւնների խիստ սուր ընդհարումների, հաճախ միանգամայն դադարում են: Հինց սրանով էլ բացատրվում է այն խրոնիկական քաղաքական եղանակը, վորով վաղուց հիվանդ է Ավստրիան: Ազգային հարցն այս պատճառով անտեղ կազմում է քաղաքական կյանքի առանցքը, գոյութիւնը հարցը: Ուստի՝ դարմանալի չէ, վոր ավստրիական ս.-գ. քաղաքագետները աշխատում են այս թէ այն կերպ լուծել ամենից առաջ ազգային ընդհարումների հարցը, լուծել, իհարկէ, արդէն գոյութիւն ունեցող պառլամենտարիզմի հոգի վրա, պառլամենտական յեղանակով...

Բանն այդպէս չէ Ռուսաստանում: Ռուսաստանում, նախ, «փառք աստու»՝ պառլամենտ չկա»<sup>3</sup> Յերկրորդ— և սա գլխավորն է— Ռուսաստանի քաղաքական կյանքի առանցքը վոչ թէ ազգային հարցն է, այլ ազրարայինը: Ուստի և ուսուական հարցի, ուրեմն նաև ազգերի բազմաազրման» բախտը Ռուսաստանում կապակցվում է ազրարային հարցի լուծման հետ, այսինքն՝ ճորտատիրական մնացորդների վոչնչացման հետ, այսինքն՝ յերկրի դեմոկրատացման հետ: Սրանով էլ բացատրվում է, վոր Ռուսաստանում ազգային հարցը հանդես է գալիս վոչ թէ իբրև ինքնուրույն ու վճռողական մի հարց, այլ իբրև յերկրի ազանորտացման ընդհանուր ու ավելի կարևոր հարցի մի մասը:

«Ավստրիական պառլամենտի ավտոթիւնը,— գրում է Շորինգերը,— Ընց նրանից է առ-լացել, վոր յարաքանչյուր սեփորմ ազգային կուսակցութիւններ: Ներում կոխսութիւններ է մնում, վորոնք կործանում են նրանց կամ իրավոթիւնը, և կուսակցութիւնների առաջնորդները այս պատճառով կոպտութիւնը խուսափում են այն ամենից, ինչից սեփորմների հետ է փշուր: Ավստրիայի առաջնորդութիւնը կարելի չէ յերկուսից առտարակ միայն այն դեպքում, յեթ ազգերին արվեն անկապակել իրավական դիրքեր. սա նրանց կապտի պառլամենտում մշտական մարտական ջոկտանք պակելու անհրաժեշ-

ուսթյանից և նրանց նաբաժորության կտա գիտելու անստական ու սոցիալական խնդիրները լուծմանը»<sup>91</sup>։

Նույն այդ բանը Բաուերն և ասում.

«Ազգային խոզազությունը ամենից առաջ պետությանն և անհրաժեշտ Գեաությունը բնավ չի կարող հանդուրժել, զոր սրենսզորությունը զազարի լեզվի հիմարագույն հարցի պատճառով, զբողոքած մարդկանց միջև զորն սեղանավ ազգային սանձանի վրա ծագած ամենաշնչին զննի պատճառով, ամեն մի նոր զգրոցի պատճառով»<sup>92</sup>։

Այս ամենը հասկանալի չեւ Բայց՝ պակաս հասկանալի չեւ, զոր Ռուսաստանում ազգային հարցը բոլորովին այլ մակարդակի վրա չե զբոված։ Ռուսաստանում առաջադիմության բախտը վճռում և վոչ թե ազգային հարցը, այլ ազրարային հարցը. ազգային հարցը ստորագաս և։

Այսպես ուրեմն, տարբեր հարցադրում, պայքարի տարբեր հեռանկարներ և մեթոդներ, տարբեր հերթական խնդիրներ։ Մի՞թե պարզ չեւ, զոր իրերի այս գրության դեպքում Ավստրիայից սրբնական վերցնել և ծրագիր փոխ անելով զրազվել կարող են միայն թղթե մարդիկ, զորոնք ազգային հարցը շլուծում են՝ տարածությունից ու ժամանակից դուրս։

Նորից ենք շեշտում՝ կոնկրետ պատճական պայմանները — իրեր յեւլակեա, հարցի գիտելիտիկ դրումը — իրեր միակ ճիշտ դրում, — այս և ազգային հարցի լուծման բանալին։

#### IV. ԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՆՈՄԻԱՆ

Վերը մենք խոսեցինք ազատրիական ազգային ծրագրի ձևական կողմի մասին, մեթոդաբանական հիմքերի մասին, զորոնց շնորհիվ ուստական մարքսիստները չեն կարող պարզապես որինակ վերցնել ազատրիական սոցիալ-դեմոկրատիայից և նրա ծրագրերը իրենցը դարձնել։ Այժմ խոսենք բուն ծրագրի մասին՝ ըստ էյության։

Այսպես ուրեմն, զժրն և ազատրիական սոցիալ-դեմոկրատների ազգային ծրագրերը։

Այն յերկու բառով և արտահայտվում — ազգային ազտոնոմիա։

Ասաջին՝ սա նշանակում և, զոր ազտոնոմիան արվում և, ասենք, վոչ թե Չեխիային կամ Լեհաստանին, զորոնք քնակեցված են զլլստավորապես չեխերով ու լեհերով, — այլ առհասարակ չեխերին ու լեհերին, անկախ տերիտորիայից, միևնույն և՛ Ավստրիայի ինչ վայրում ևլ զոր նրանք բնակված լինեն։

<sup>91</sup> Տեա Եզրինգերի «Ազգային պրոբլեմը», էջ 36։

<sup>92</sup> Տեա Ռ. Բաուերի «Ազգային հարցը», էջ 401։

Այս պատճառով էլ այս ավտոնոմիան արգելին և կոչվում, և վոչ թե տերիտորիալ՝

Յերկրորդ՝ սա նշանակում և, վոր Ավստրիայի դամազան անկյուններում ջրված չեխերը, լեհերը, գերմանացիները և այլն, վերջված անհատապես, իբրև առանձին անձեր, կազմակերպվում են վորպես ավտոնոմիական ազգեր և, իբրև ազգայինք, մտնում են ավստրիական պետութան կազմի մեջ։ Այս դեպքում Ավստրիան ներկայացնելու յն վոչ թե ավտոնոմ մարզերի միություն, այլ տերիտորիայից անկախ կազմված ավտոնոմ ազգությունների միություն։

Յերրորդ՝ սա նշանակում և, վոր լեհերի, չեխերի և այլոց համար այս նպատակներով ստեղծվելիք համազգային հիմնարկները վարելու յնն վոչ թե «քաղաքական» հարցեր, այլ միմիայն «կուլտուրական» հարցեր։ Սպեցիֆիկ քաղաքական հարցերը կկենտրոնացվեն համաավստրիական պետականում (ռախարատում)։

Ուստի այս ավտոնոմիան նաև կուլտուրական և կոչվում, կուլտուրազգային։

Այս էլ այն ծրագրի տեքստը, վոր ավստրիական սոցիալ-դեմոկրատիան ընդունել և Բրյուննի կոնգրեսում 1899 թ.<sup>6</sup>

Հիշատակելով այն, վոր Եազգային յերկպառակությունները Ավստրիայում խոչընդոտ են հանդիսանում քաղաքական առաջադիմությունը, վոր Եազգային հարցի վերջնական լուծումը... ամենից առաջ կուլտուրական անհրաժեշտությունն է, վոր շլուծուժը նախավոր և ընդհանուր, ուղղակի և հաժախ ընտրական իրավունքի հիման վրա կառուցված խիստական դեմոկրատիկ հասարակության պայմաններում միայն, — ծրագրերը շարունակում և.

«Ավստրիայի ժողովուրդների ազգային առանձնահատկությունների պահպանումը յնվ դարգացումը<sup>66</sup> նախավոր և միայն յիսկառար իրավապատարության պարագայում և անեն մի ճնշման բացակայության պարագայում Ուստի՝ ամենից առաջ պետք և մերժի պետական բյուրոկրատիկ ցենտրալիզմի սխառնը, ինչպես նաև առանձին յերկրամասերի ֆեոդալական արտոնությունները։

Այս և միմիայն այս պայմաններում Ավստրիայում կարող կլինի կատարվել ազգային կարգ ու կանոն, փոխանակ ազգային յերկպառակությունների, այն և՛ նեանկալ կոչվելով։

<sup>6</sup> Նրան ձայն են ավել նաև հարավ-արևմտական ս. գ. կուլտուրական ներկայացուցիչները։ Տես «Ազգային հարցի վերաբերյալ վերաբանությունները Բրյուննի պարտադատում», էջ 72, 1906 թ.

<sup>66</sup> Մ. Պանինի՝ առևտրական թարգմանության մեջ (տես Բուսների գիրքը Պանինի թարգմանությունը) Եազգային առանձնահատկություններ-ի փոխարեն ազգում և Եազգային անհատականությունները։ Պանինը այս տեղը սխալ և թարգմանել գերմանական ըմբռում չկա առևտրականությունը քառը. այլևայլ խոսվում և «Nationalen Eigenart»-ի մասին, այսինքն, առանձնահատկությունների մասին, վոր բնավ էլ միևնույնը չէ։

1. Ավստրիան պետք է փոխանկերպի ազգությունների գեմոկրատիկ միություն ներկայացնող մի պետության:

2. Փոխանակ պատճառան թաղապական հողերի՝ պետք է կազմվեն ազգայնորեն-առանձնազատված ինքնավար կորպորացիաներ, վարոնցից յուրաքանչյուրում որևէպարությունն ու կոռապարումը գանձին՝ ընդհանուր, ուղղակի և հավասար ձայնադուրթյամբ ընտրվող ազգային պալատների ձեռքում:

3. Միևնույն ազգի ինքնավար մարզերը միասին կազմում են ազգայնորեն-միասնական միություն, վորն իր ազգային գործերը վճարում է միանգամայն ավստրիական կերպով:

4. Ազգային փոքրամասնությունների իրավունքներն ազանովում են կայսերական պալատինսի կողմից հրատարակվող հատուկ որենքով:

Մրազիրը վերջանում է Ավստրիայի բոլոր ազգերին համերաշխության կոչելով<sup>91</sup>:

Դժվար չէ նկատել, վոր այս ծրագրում մնացել են «տերիտորիալիզմի» վորոշ հետքեր, բայց ընդհանուր առմամբ այն ազգային ավստրիայի ձևակերպումն է:

Հուր չէ, վոր Շպրինգերը, ազգային ավստրիայի առաջին ազատատորը, նրան հրեզմնքով է դիմավորում<sup>92</sup>, Բաուերը նույնպես համամիտ է նրան՝ անվանելով այն ազգային ավստրիայի «տեսական հազթություն»<sup>93</sup>։ միայն թե ավելի մեծ պարզության համար՝ նա առաջարկում է 4-րդ կետը փոխարինել ավելի վորոշ մի ձևակերպումով, վորը խոսի՝ «ազգային փոքրամասնությունը յուրաքանչյուր ինքնավար մարզի ներսում վորպես հանրային-իրավական կորպորացիա կազմակերպելու մասին»<sup>94</sup>՝ գալրոցական ու կուլտուրական այլ գործերը վարելու համար<sup>95</sup>։

Այս և ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի ազգային ծրագիրը:

Բննարկենք նրա դիտական հիմունքները:

Տեսնենք, թե ավստրիական սոցիալ-դեմոկրատիան ինչպես և հիմնավորում իր քարոզած ազգային ավստրիան:

Դիմենք վերջինիս տեսաբաններին—Շպրինգերին ու Բաուերին:

Ազգային ավստրիայի յերակետն ազգի այնպիսի հասկացողությունն է, վոր ազգը վերցնում է վորպես անձերի մի միություն՝ անկախ վորոշ տերիտորիայից:

«Ազգությունը,—բոս Շպրինգերի,—եյական զո՛ւ մի կողի մե՛ջ չի գանձում տերիտորիայի հետ. ազգերը՝ ավստրիական պերսոնալ միություններ են»<sup>96</sup>։

Բաուերը նույնպես խոսում է ազգի վորպես «պերսոնալ ընդհան-

<sup>91</sup> Տես «Verhandlungen des Gesamtparteitages» Բրյուննում, 1899 թ.

<sup>92</sup> Տես Շպրինգերի՝ «Ազգային պրոբլեմը», էջ 286:

<sup>93</sup> Տես Ո. Բաուերի «Ազգային հարցը», էջ 549:

<sup>94</sup> Տես նույն տեղը, էջ 555:

<sup>95</sup> Տես Շպրինգերի «Ազգային պրոբլեմը», էջ 19:



բության» մասին, վորին չի վերապահված բացառիկ տիրապետության վորևէ վորոշ մարզում»<sup>99</sup>

Բայց ազգը կազմող անձերը միշտ չեն, վոր ապրում են հոծ մասսայով—նրանք հաճախ բաժանվում են խմբերի և այս կերպ մտնում են սուսար ազգային որդանիզմների մեջ: Կապիտալիզմն և այդ, վոր նրանց քրում և զանազան մարդեր ու քաղաքներ դատումիւ Բայց, մտնելով սուսար ազգային մարդեր և այնտեղ կազմելով փոքրամասնություն՝ այս խմբերը հալածվում են ազգային տեղական մեծամասնությունների կողմից՝ լեզվի, գույրոցի ճնշման խմաստով և այն մյուստեղից կը՝ ազգային ընդհարումներ: Այստեղից ել՝ տերիտորիալ ավանտիստիկ Վճռի պիտանի լինելը: Միակ յիջքը այս դրությունից,—Շարինգերի ու Բաուերի կարծիքով,—պետության զանազան տեղերում՝ ավյալ ազգության ցրված փոքրամասնությունները վորպես մի ընդհանուր միջդասակարգային ազգային միություն կազմակերպեն և նրանց կարծիքով, միայն այսպիսի միությունը կարող կլինի պաշտպանել ազգային փոքրամասնություններին կուլտուրական շահերը, միայն նա յի ընդունակ դադարեցնելու ազգային դժտությունները:

«Անհրաժեշտ է, —տում և Շարինգերը,—ազգություններին առ ճիշտ կազմակերպում, սժտել նշանք իրավունքներով ու պարտականություններով»... Լարկով, «Ենչ և շքնեք ստեղծելը, ըսյց՝ արդյոք նա անձն և այն ներքաղծությունը, վոր սպասում են նրանից»... «Յեթն ուզում են ազգերի կամք որևեք ստեղծել, ապա տանից առաջ՝ պետք է՝ ստեղծել բուն ազգերը»... «Անանց ազգությունները կազմելու անկարելի յի ստեղծել ազգային իրավունք ու վերացնել ազգային դժտությունները»<sup>100</sup>:

Նույն այդ վորով և խոսում Բաուերը, յերբ առաջադրում և, վորպես «բանվոր դասակարգի պահանջ», «փոքրամասնությունները կազմել վորպես հանրային—իրավական կորագրացիաներ՝ պերսոնալ սկզբբունքի հիման վրա»<sup>101</sup>:

Բայց ի՞նչպես կազմակերպել ազգերը: Ի՞նչպես վորոշել վորևէ անձի պատկանելին այս կամ այն ազգին:

«Այս պատկանելիությունը, —տում և Շարինգերը,—վորոշվում և ազգային մատրիկուլներով (ցուցակներով). մարդում ապրող տանն մեկը պետք և հայաստանի վորևէ ազգի իր պատկանելու մասին»<sup>102</sup>:

«Գերանալ սկզբունքը, —տում և Բաուերը,—յնթագրում է, թե ընտելչությունը կբաժանվի ըստ ազգությունների... չափազան քաղաքացիների ազրա հայաստանի»

<sup>99</sup> Տես Ո. Բաուերի «Ազգային հարցը», էջ 156.

<sup>100</sup> Տես Շարինգերի «Ազգային պրոբլեմը», էջ 74.

<sup>101</sup> Տես նույն տեղը, էջ 88-89.

<sup>102</sup> Տես նույն տեղը, էջ 89.

<sup>103</sup> Տես Ո. Բաուերի «Ազգային հարցը», էջ 553.

<sup>104</sup> Տես Շարինգերի «Ազգային պրոբլեմը», էջ 226.



բարութիւններէ հիման վրայ, վորք համար էլ բոլորք եւ պարաստօքն ազգային կազմասրներ»<sup>6</sup>:

Ապա.

«Բոլոր գերմանացիները, — սուս եւ Բաուերը, — ազգայնորեն — միասնակ դաժանեցում, այնուհետեւ՝ յերկակի դաժանեցիկ ազգային կազմասրներէ մեջ մտած բոլոր գերմանացիները կազմում են գերմանական ազգը եւ ընտրում են ազգային խորհուրդ»<sup>7</sup>:

Նույնը պէտք է տեսի չեխներէ, լեհներէ եւ այլոց մասին:

«Ազգային խորհուրդը. — ըստ Եղբրնոցերի, — զա կուտուր — ազգային պաշտմենտ է, վորին վերաբերում է հիմունքներ սահմանելը եւ այն միջոցներին հաճանութիւն տալը, վճռոց կարկազուր են ազգային գործընկան գործի, ազգային գրականութիւն, արվեստի ու գիտութիւն մասին կազմասրութիւն ունենալու համար, ակադեմիաներ, թանգարաններ, պատկերասրահներ, թատրոններ եւ այլն բացելու համար»<sup>8</sup>:

Արանք են ազգի կազմակերպումը եւ ազգի կենտրոնական հիմնարկը:

Ստեղծելով միջդասակարգային այսպիսի ինտալտուաներ՝ ազատրեական ու գեմեոկրատական կուսակցութիւնը, Բաուերի կարծիքով, այն բանին է ձգտում, վոր բարձրային կուտուրան դարձնի... ամբողջ ժողովրդի սեփականութիւնը եւ այսպիսի միակ հնարավոր միջոցով համախմբի ազգի բոլոր տնտեսական վորպես ազգային — կուլտուրական մի բնդնաւորութիւն»<sup>9</sup> (ընդգծումը մերն է):

Կարելի չե կարծել, թե այս ամենը միայն Ազատրեային եւ վերաբերում Բայց Բաուերը սրան համաձայն չե: Նա վճռապես պնդում է, վոր ազգային ազատնամիան պարտադիր է նաև Ազատրեայի նման միջանի ազգութիւններէից բազկացած այլ պետութիւններում:

«Ունեալ զատկարգելի ազգային քաղաքականութիւնը, ազգութիւններէ պետութիւն մեջ ինտալտութիւնը նմանելու քաղաքականութիւնը, Բաուերի կարծիքով, բոլոր ազգերի պրոլետարիատը հակազդում է ազգային ազատնամիայի իր պատենը»<sup>10</sup>:

Ապա, ամենկատեւիտրեն նենդադիտելով (подмечая) ազգերի ինքնորոշումը ազգային ազատնամիայով՝ շարունակում է.

«Ազգային ազատնամիան, ազգերի ինքնորոշումը անխուսափելիորեն այսպիսով

<sup>6</sup>Տես Ո. Բաուերի «Ազգային կարգը», էջ 368:

<sup>7</sup>Տես նույն տեղը, էջ 375:

<sup>8</sup>Տես Եղբրնոցերի «Ազգային գործընկած», էջ 224:

<sup>9</sup>Տես Ո. Բաուերի «Ազգային կարգը», էջ 353:

<sup>10</sup>Տես նույն տեղը, էջ 357:

գառնում ե բուր այն ազգերի պրոլետարիատի սահմանադրական ծրագրերը, զորոնք ազգում են ազգութունների պետութան մեջ»<sup>\*</sup>։

Բայց նա էլ ավելի հետևան և դնում

Նա խորապես հավատում է, Վոր նրա ու Եպրինգերի շնորհած՝ միջդասակարգային շարժային միությունները՝ կոտուային վարպես ազգագր սոցիալիստական հասարակութան նախատիպը՝ Վորովհետև նա գիտես, Վոր սոցիալիստական հասարակակարգը ... մարդկությունը կրամանի ազգայնորեն-սահմանադրած հասարակությունները<sup>\*\*</sup>, Վոր սոցիալիզմի որով տեղի կունենա «մարդկության խմբավորումը վարպես ազգային ավտոնոմ հասարակությունները»<sup>\*\*\*</sup>, Վոր, այսպիսով, սոցիալիստական հասարակությունը, անկասկած, կենդանացնի անձնական ազգային միությունների ու տերիտորիալ կորպորացիաների խայտարակապատկեր<sup>\*\*\*\*</sup>, Վոր, հետևաբար, շարժության սոցիալիստական սկզբունքը հանդիսանում և ազգային սկզբունքի ու ազգային ավտոնոմիայի գերազույն սինթեզը<sup>\*\*\*\*\*</sup>։

Թվում է, բավական և ...

Այսպես և ազգային ավտոնոմիայի հիմնավորումը Բաուերի և Եպրինգերի աշխատություններում

Ամենից առաջ, աչքի չե ընկնում ազգերի ինքնորոշումը ազգային ավտոնոմիայով նենդափոխելը, Վորը միանգամայն անհասկանալի չե ու վոնչնով չի արդարացվում Յերկուսից մեկը. կամ Բաուերը չի հասկացել ինքնորոշումը, կամ նա հասկացել է, բայց չգիտես ինչու գիտակցաբար նեղացնում և այն Վորովհետև անկասկած է, Վոր՝ ա) ազգային ավտոնոմիան յենթադրում և ազգությունների պետության ամբողջությունը, իսկ ինքնորոշումը դուրս և դալիս աշգլիսի ամբողջության շրջանակներից. բ) ինքնորոշումը ազգին հանձնում և իրավունքների ամբողջ լրիվությունը, իսկ ազգային ավտոնոմիան՝ միայն «կուլտուրական» իրավունքներու Սա՝ առաջինը։

Յերկրորդ, ապագայում հնարավոր և ներքին ու արտաքին կոնյունկտուրաների մի այսպիսի համակցություն, Վորի պարագայում այս կամ այն ազգությունը կվեռի դուրս գալ ազգությունների պետությունից, թեկուզ Ավստրիայից, — առախնական սոցիալ-դեմոկրատները Բրյուննի պարտադատում չէ՞ Վոր հայտարարեցին իրենց ժողովրդի «յերկու մասը» Վորչես մի ամբողջություն միավորելու իրենց պատրաստակամության

\* Տես Բ Բաուերի «Ազգային հարցը», էջ 333։

\*\* Տես Նույն տեղը, էջ 555։

\*\*\* Տես Նույն տեղը, էջ 556։

\*\*\*\* Տես Նույն տեղը, էջ 543։

\*\*\*\*\* Տես Նույն տեղը, էջ 542։

մասին<sup>6</sup>։ Այն ժամանակ ինչպես վարվել էր ընդ ազգերի պոլիտեստիաֆի համար անխուսափելի է ազգային ավտոնոմիայի հետ։

Հարցի այդ ինչ շրջանում է, վերը ազգերին մեխանիկորեն խցկում է պետություն մտնող ժողովրդային պրոկրուստյան մահիճը։

Այնուհետև Ազգային ավտոնոմիան հակասում է ազգերի դարգացման մտնող ընթացքին։ Նա ազգեր կազմակերպելու լողանդ է տալիս, բայց արդյոք կարելի չէ նրանց արհեստականորեն զոդել, յեթե կյանքը, յեթե սնտեսական գարգացումը նրանցից մտնող խմբեր են պոկում է ցրում զանազան մարզերում։ Կասկած չկա, վեր ազգերը կապիտալիզմի առաջին ստադիաներում համախմբվում են։ Բայց անկասկած է նաև այն, վեր կապիտալիզմի բարձրագույն ստադիաներում սկսվում է ազգերի ցրման պրոցեսը, ազգերից մտնող շարք խմբերի անջատվելու պրոցեսը, խմբեր, վերոնք դատումի յեն զնում, իսկ հետո էլ բուրժուական տեղափոխվում են պետություն այլ մարզերը։ Ընդ մին՝ տեղափոխվածները կորցնում են հին կապերը, ձևք են բերում նորերը՝ նոր տեղերում, սերնդն-սերունդ յուրացնում են նոր բարքեր ու նաշակներ, զուցե նաև նոր լեզու...

Հարց է ծագում՝ իրարից առանձնացած այդպիսի խմբերն արդյոք կարելի չէ միավորել վերպես ազգային միասնական միություն։ Ո՛ւր են հրաշալուրծ այն սղակապերը (объединение), վերոնց միջոցով կարելի լինեի միավորել անմիավորելին։ Արդյոք յերևակայելի չէ համախմբել վերպես մի ազգ, որինսկ, մերձալիյան ու անդրկովկասյան գերմանացիներին։ Բայց յեթե այս ամենը աներևակայելի ու անկարելի չէ, ապա, այս զեպքում, ինչձվ է տարբերվում ազգային ավտոնոմիան հին նացիոնալիստները ուսուցիչից, վերոնք աշխատում էյին պատմության անիվը հետ դարձնել։

Բայց ազգի շաղկապվածությունն ու միասնությունը միայն տարբերակման (расселение) շնորհիվ չեն վերանում։ Դրանք վերանում են նաև ներքուստ՝ շնորհիվ դասակարգային կռիվի սրման։ Կապիտալիզմի առաջին ստադիաներում տակավին կարելի չէ խոսել պրոլետարիատի ու բուրժուազիայի շիտաբան ընդհանրությունների մասին։ Բայց խոշոր ինդուստրիայի դարգացմամբ ու դասակարգային կռիվի սրմամբ շնորհանրությունը սկսում է հալվել։ Չի կարելի լրջորեն խոսել ազգի շիտաբան ընդհանրությունների մասին, յերբ միևնույն ազգին պատկանող տեղերն ու բանվորները դադարում են միմյանց հասկանալուց։ Այլ ինչ էրախտի ընդհանրությունների մասին կարող է խոսք լինել, յերբ բուրժուազիան ծարավի չէ պատերազմի, իսկ պրոլետարիատը շախտարազմի պատերազմ է հայտարարում։ Արդյոք կարելի չէ այսպիսի

<sup>6</sup> Տե՛ս Ազգային հարցի վերաբերյալ վերաբանությունները Բրյուսնի պարտյապագում, էջ 48։

հազարիք տարբերից կազմակերպել միասնական միջդասակարգային ազգային միութիւն: Սրանից հետո արդյոք կարելի՞ չե խոսել բարձր անդամներին վորպէս ազգային կուլտուրական ընդհանրութիւն համախմբելու: մասին\*։ Արդյոք պարզ չէ, վոր ազգային ավտոնոմիան հակասում է դասակարգային կռիւի ամբողջ ընթացքին։

Բայց մի բողոք յենթադրենք, թե բարձր կազմակերպիչ լողունըն իրագործելի լողունը և։ Ելի կարելի չե հասկանալ բուրժուա-ազգայնական պառլամենտարներին, վորոնք ավելորդ ձախեր ստանալու համար ջանում են ազգ էկազմակերպել։ Բայց այդ յերբվանից և, վոր ս. գ. սկսել են զբաղվել ազգ էկազմակերպելով, ազգեր էկազմելով, ազգեր բաեղծելով։

Այդ թիւ ս. գ. են, վորոնք դասակարգերի կռիւի զորեղագույն սըրման դարաշրջանում կազմակերպում են միջդասակարգային ազգային միութիւններ։ Մինչև այժմ ավստրիական—ինչպէս նաև ամեն մի ուրիշ—սոցիալ-դեմոկրատիա ունեցել է մի խնդիր՝ կազմակերպել պըրլամտարիաբար։ Բայց այս խնդիրը, ակնբևտրեն, «նացել է։ Այժմ Շպըրլինզերն ու Բաուերը «նոր», ավելի ուշադրով խնդիր են դնում ազգ բաեղծել, էկազմակերպել։

Ասենք, արամարանութիւնը պարտադրում է. ազգային ավտոնոմիան ընդունողը պետք է ընդունի և այս «նոր» խնդիրը, բայց ընդունել վերջինս, նշանակում է դուքս դալ դասակարգային դիրքից, նացիոնալիզմի նանապարհը բռնել։

Շպըրլինզերի ու Բաուերի ազգային ավտոնոմիան նացիոնալիզմի նուրբ սեսակն և։

Թե՛վ այս բնավ պատահական չե, վոր ավստրիական սոցիալ-դեմոկրատների ազգային ծրագիրը պարտադրում է հոգ տանել «ժողովուրդների ազգային առանձնահատկութիւնների պանպանմամ ու զարգացմամ մասին։ Ապա մի մտածեցեք «պահպանել» անդրկովկասյան թաթարների ախպխի բարգային առանձնահատկութիւնները», ինչպիսին ինքնախարազանուկն և «Շախսեյ-Վախսեյ» տոնին։ «Զարգացնել» վրացիների ախպխի բարգային առանձնահատկութիւնները», ինչպիսին «Վրեն-ժի իրավունքն» և...

Ախպխի կետի տեղը թունդ բուրժուական ազգայնական ծրագիրն է, և յեթե այն տեղ ե գտնել ավստրիական ս. դեմոկրատների ծրագրում, ապա այն պատճառով, վոր ազգային ավտոնոմիան հանդուրժում է այսպիսի կետեր, այն չի հակասում դրանց։

Բայց ներկայի համար անպետք ազգային ավտոնոմիան Ել ավելի անպետք է ալպագա, սոցիալիստական հասարակութիւն համար։

\* Տե՛ս Ո. Բաուերի «Ազգային հարցը», էջ 353.

Բառերի մարզարևութունը՝ «մարդկությունն ազգայնորեն-սահմանադատված հասարակությունների բաժանման» մասին հերքվում է արդի մարդկության զարգացման ամբողջ ընթացքով: Ազգային միջնապատերը զոչ թե ամբանում, այլ քանդվում ու ընկնում են:

Մարքսը տակավին քառասնական թվականներին ասել է, վոր «զանազան ժողովուրդների ազգային առանձնացումը և շահերի հակադրությունն արդեն այժմ ավելի ու ավելի չքանում են», վոր «պրոլետարիատի տիրապետությունը ավելի ևս կարողացնի նրանց չքացումը»<sup>10</sup>: Մարդկության հետագա զարգացումը կապիտալիստական արտադրությունն իր հակայական անունով, ազգությունների իր վերախառնումով (перетасовка) և մարդկանց միավորումով ավելի ու ավելի ընդարձակ տերիտորիաներում, — վեուսուց հաստատում են Մարքսի միտքը:

Սոցիալիստական հասարակութունը բանների ազգային միությունների ու տերիտորիալ կորպորացիաների խայտարակտ պատկերիչ և նեղ ներկայացնելու Բառերի ցանկությունը մի յերկչուտ փորձ է՝ սոցիալիզմի մարքսյան կոնցեպցիան նենդափոխելու Բակունինի բարեփոխված կոնցեպցիոնով: Սոցիալիզմի պատմությունը ցույց է առել, վոր ամեն տեսակի նմանորինակ փորձերը, իրենց մեջ պարունակում են անխուսափելի կրախի տարրեր:

Մենք այլևս չենք խոսում Բառերի կողմից զովարանվող ինչ-վոր բազմության սոցիալիստական սկզբունքի» մասին, վորը, մեր կարծիքով, հանդիսանում է դասակարգային կռվի սոցիալիստական սկզբունքի փոխարինումը բազմությամբ՝ բուրժուական սկզբունքով: Յեթե ազգային ավտոնոմիան մի այսպիսի կասկածելի սկզբունքից է յեղնում, ապա անհրաժեշտ է ընդունել, վոր այն բանվորական շարժմանը միայն Ֆլասկարոզ է բերել:

Ճիշտ է, այս նաոցիոնալիզմը այնքան էլ թափանցիկ չէ, վորովհետև այն հմտորեն դիմակավորված է սոցիալիստական Ֆրադներով, բայց այն առավել ևս Ֆլասկար է պրոլետարիատի համար: Բացահայտ նաոցիոնալիզմին միշտ կարելի չի դիմադրավել, այն լավ տեսնելը դժվար չէ: Շատ ավելի դժվար է պայքարել դիմակավորված ու իր դիմակով անճանաչելի դարձած նաոցիոնալիզմի դեմ: Մանկվելով սոցիալիզմի դրահով՝ այն ավելի քիչ խոցելի չի ու ավելի կենսունակ: Իսկ ապրելով բանվորների մեջ՝ այն թունավորում է մթնոլորտը՝ տարածելով տարբեր ազգությունների բանվորների փոխազարձ անվստահության ու առանձնացման ֆլասկար գաղափարներ:

Բայց ազգային ավտոնոմիայի ֆլասք սրանով չի սպառվում: Այն հող է պատրաստում զոչ միայն ազգերի առանձնացման համար, այլև բանվորական միասնական շարժման արոհման համար: Ազգային ավտոնոմիայի գաղափարը հոգեբանական նախադրյալներ է ստեղծում բան-

վորական միասնական կուսակցութիւնը առանձին, ըստ ազգութիւնների կառուցված կուսակցութիւնների բաժանելու համար: Կուսակցութեան հետեից արոհվում են միութիւնները, և ստեղծվում և լիակատար առանձնացում: Միասնական, դասակարգային շարժումն այսպէս բաժան-բաժան և լինում առանձին ազգային առվակների:

Ավստրիան, Եւրոպային ավտոնոմիայի» հայրենիքը, տալիս և նման յերևույթի ամենատիւր որինակներ: Ավստրիական յերբեմնի միասնական ս.-գեմեոկրատական կուսակցութիւնը սկսել և առանձին կուսակցութիւնների արոհվել տակաւին 1897 թվականից (Վիմրերգի պարտայտազը)<sup>11</sup>: Բրչուննի պարտայտազից հետո (1899 թ.), վորն ընդունեց ազգային ավտոնոմիան, արոհումն ավելի ևս ուժեղացավ: Վերջապէս, բանն այնտեղն և հասել, վոր միասնական ինտերնացիոնալ կուսակցութեան փոխարեն այժմ կա ազգային վեց կուսակցութիւն, վորոնցից չեխական ս.-գեմեոկրատական կուսակցութիւնը նույնիսկ չի ևլ ուզում գործ ունենալ գերմանական ս.-գեմեոկրատիայի հետ:

Բայց կուսակցութիւնների հետ կապված են արհեստակցական միութիւնները: Ավստրիայում ինչպէս սրանց, այնպէս և նրանց մեջ զլիխավոր աշխատանքը միևնույն ս.-գեմեոկրատ բանվորներն են կատարում: Ուստի կարելի յեր յերկյուղ կրել, վոր կուսակցութեան մեջ յեղած սեպարատիզմը կտանի գեպի սեպարատիզմ միութիւնների մեջ, վոր միութիւնները նույնպէս կպառակաւին: Դա այդպէս ևլ յեղավ. միութիւնները նույնպէս բաժանվեցին ըստ ազգութիւնների: Այժմ բանը հաճախ այնտեղն և հասնում, վոր չեխ բանվորները վիժեցնում են գերմանական բանվորների գործադուլը կամ մուսիցիպալիտետների ընտրութիւնների ժամանակ հանդիս ևն զալիս չեխական բուրժուաների հետ միասին՝ ընդդէմ գերմանական բանվորների:

Մրանից յերևում և, վոր ազգային ավտոնոմիան, ազգային հարցը չի լուծում: Այդ բավական չի. նա սրում և խճնում և ազգային հարցը՝ նպաստավոր հոգ ստեղծելով բանվորական շարժման միասնութիւնը քանդելու համար, բանվորներին ըստ ազգութիւնների առանձնացնելու համար, նրանց միջև բաղխումներն (трещина) ուժեղացնելու համար:

Այս և ազգային ավտոնոմիայի հուճը:

## V. ԲՈՒՆԿԸ, ՆՐԱ ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԸ, ՆՐԱ ՍԵՊԱՐԱՏԻԶՄԸ

Վերը մենք ասացինք, թե Բաուերը, վորն ազգային ավտոնոմիան անհրաժեշտ և համարում չեխերի, լեհերի և այլոց համար, այնուամենայնիվ՝ այդպիսի ավտոնոմիայի գեմ և արտահայտվում հրաների նկատմամբ: Այն հարցին, թե Եւրոպոք բանվոր դասակարգը հրեա ժողովրդի համար պէտք և պահանջի ավտոնոմիա, Բաուերը պատաս-

խանութ և, վոր բազմային աժտոնութիան չի կարող լինել հրեա բան-  
վորների պահանջը\*։ Բառերի կարծիքով պատճառն այն և, վոր կա-  
պիտալիստական հասարակութունը նրանց (հրեաներին՝ Ռ. ԱՅ.) չի  
թողնում, վոր ինչպես ազգ պահպանվեն\*\*։

Կարճ հրեա ազգը դադարում և զոյութուն ունենալուց,—հետևա-  
բար, ել մեծ համար ազգային աժտոնութիա պահանջես։ Հրեաները ա-  
սիականացիայի յեն յենթարկվում։

Հրեաների՝ վորպես ազգի՝ նահատագրի վերաբերյալ այս հայաց-  
քը նոր չէ։ Այս հայացքը արտահայտել և Մարքսը տակալվին քառաս-  
նական թվականներին\*\*\*, 13 զլխավորապես նկատի ունենալով դեր-  
ժանական հրեաներին։ Այն կրկնեց 1903 թվականին Կաուցկին\*\*\*\*, նկատի  
ունենալով ուստական հրեաներին։ Այժմ այն կրկնում և Բաու-  
երն աժտորիական հրեաների վերաբերմամբ, սակայն այն տարբերու-  
թյամբ, վոր նա միտում և հրեական ազգի վոչ թե ներկան, այլ ա-  
պագան։

Հրեաների՝ վորպես ազգի՝ պահպանման անհնարինութունը Բաու-  
երը բացատրում և նրանով, վոր «հրեաները չունեն ինքնամիտով կոլո-  
նիզացիոն մարզ»\*\*\*\*\*, Իր հիմքում ճիշտ այս բացատրութունը, սա-  
կայն, չի արտահայտում ամբողջ ճշմարտութունը։ Ամենից առաջ, բանն  
այն և, վոր հրեաները չունեն հողի հետ կապված լայն կայուն խավ,  
վորը բնականորեն խաբարապնդում և ազգը վոչ միայն վորպես նրա  
կմախք, այլ և վորպես բազմային՝ շուկա։ Ռուսական 5—6 միլիոն  
հրեաներից միայն 3—4 տոկոսն են այսպես թե այնպես կապված գյու-  
ղատնտեսության հետ։ Մնացած 96<sup>0</sup>/0-ը զրազված են առևարի, ար-  
դյունաբերության մեջ, քաղաքային հիմնարկներում և, առասարակ,  
ապրում են քաղաքներում, ըստ վորում, Ռուսաստանով մեկ ցրված լի-  
նելով՝ վոչ մի նահանգում մեծամասնութուն չեն կազմում։

Այսպիսով, վորպես ազգային փոքրամասնութուններ ցիրուցան  
յկզած լինելով այլազգի մարզերում՝ հրեաները զլխավորապես սպա-  
տարկում են «տտար» ազգերին՝ թե իբրև արդյունաբերողներ ու առև-  
արականներ և թե իբրև ազատ պրոֆեսիայի տեր անձեր՝ բնականորեն  
հարմարվելով «տտար ազգերին» լեզվի խմաստով և այլն։ Այս ամենը,  
ազգությունների աճող վերախառնման կապակիցությամբ.—վերախառ-  
նում, վոր հատուկ և կապիտալիզմի զարգացած ձևերին,—հանդեցնում

\* Տես Ռ. Բաուերի «Ազգային հարցը», էջ 381—396.

\*\* Տես Նույն տեղը, էջ 389.

\*\*\* Տես Մարքսի «Հրեական հարցի շուրջը», 1906 թ.:

\*\*\*\* Տես Կաուցկու «Քիչնեվի կոտորածը և հրեական հարցը», 1906 թ.:

\*\*\*\*\* Տես Ռ. Բաուերի «Ազգային հարցը», էջ 389.



և հրեաների ասիմիլացիային: «Մշտակեցության սահմանադիր» ժողնչացումը կարող է միայն արագացնել ասիմիլացիան:

Ռուսական հրեաների ազգային ավտոնոմիայի հարցը այս պատճառով ստանում է փոքր ինչ կուրյոզ բնույթ. ավտոնոմիա չեն առաջարկում մի ազգի համար, ժողի ազգական ժխտվում է, ժողի գոյությունը տակադին պետք է պահպանել:

Այնուամենայնիվ Բուճը, իբր VI համագումարում (1905 թ.)<sup>12</sup> ընդունելով «ազգային ծրագիրը»՝ ազգային ավտոնոմիայի ժողով, կանգնեց այս կուրյոզ ու խախուռ գիրքի վրա:

Բուճին այս քայլն անելուն զրդել է յերկու հանգամանք:

Առաջին հանգամանքը՝ դա Բուճի, վորպես հրեա ս.-դ. բանվորների և միայն հրեա բանվորների կազմակերպության գոյությունն և Դեռևս մինչև 1897 թիվը ս.-դ. այն խմբերը, վորոնք աշխատում էին հրեա բանվորների մեջ, իրենց առջև նպատակ էին դնում ստեղծել «հատուկ հրեական բանվորական կազմակերպություն»<sup>13</sup>, Յեվ 1897 թ. նրանք այդպիսի կազմակերպություն ստեղծեցին՝ միավորվելով վորպես Բուճը: Սա տակադին այն ժամանակ էր, յերբ ուսաստանյան սոցիալ-դեմոկրատիան, իբրև ավրոյլություն, փաստորեն գոյություն չունեի: Այն ժամանակից սկսած Բուճն անընդհատ առում ու շայնանում էր՝ ավելի ու ավելի աչքի ընկնելով ուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի դորը որերի ֆունի վրա... Բայց ահա դալիս են իննհարյուրական թվականները: Բանվորական մասսայակալ շարժում է սկսվում: Անում է լեհական ս.-դ. և հրեա բանվորներին ներքաշում է մասսայական պայքարի մեջ: Անում է ուսաստանյան ս.-դ. և իբր կողմն է գրավում բուճական բանվորներին: Նեղ են դառնում Բուճի ազգային շրջանակները՝ դուրի լինելով տերիտորիալ բազայից: Բուճի առջև ծառանում է մի հարց՝ կամ լուծվել ընդհանուր լնտեքնացիոնալ ալիքի մեջ, կամ պաշտպանել իբր, վորպես արտատերիտորիալ կազմակերպության, ինքնուրույն գոյությունը: Բուճը վերջինս է ընտրում:

Այսպես ստեղծվում է Բուճի, իբրև «հրեական պրոլետարիատի միակ ներկայացուցիչ» «թեորիան»:

Բայց անկարելի չէ դառնում այս տարրերնակ «թեորիան» մի կերպ պարզորեն՝ արդարացնելը: Անհրաժեշտ է «սկզբունքային» վորևն աստու, «սկզբունքային» արդարացում: Այսպիսի աստու հանդիսացավ հենց ազգային ավտոնոմիան: Բուճը հենց դրանից էլ կառչեց, այն փոխառնելով ավտորիտան ս.-դեմոկրատիայից: Յեթն ավտորիտացիները այդպիսի ծրագիր չունենային՝ Բուճը կմոզոներ այն նրա համար, վորպեսզի «սկզբունքորեն» արդարացնի իբր ինքնուրույն գոյությունը:

<sup>12</sup> Տես «Ազգային շարժան մեքը» etc. Կաստիյանկու խմբագրությամբ, էջ 772:



Այսպիսով, 1901 թ. յերկշուտ փորձից հետո (IV համագումարը) Բուճղը վերջնականապես ընդունում է «ազգային ծրագիրը» 1905 թ. (VI համագումարը):

Յերկրորդ հանդամանքը՝ զա հրեաների հասուկ դրությունն է վորսպես առանձին ազգային փոքրամասնությունների, վորոնք զտնվում են ամբողջական մարզերի այլազգի կոմպակտ մեծամասնությունների ներսում:

Մենք արդեն ասել ենք, վոր այսպիսի դրությունը խարխուլում է հրեաների՝ իբրև ազգի՝ գոյությունը, նրանց զնում է ասիմիլացիայի նանապարհի վրա: Բայց սա որյեկտիվ պրոցես է: Սուբյեկտիվորեն, հրեաների զլիում նա սեակցիա յե առաջացնում է զնում է ազգային փոքրամասնության իրավունքներն ապահովելու, ասիմիլացիայից ապահովելու հարցը:

Քարոզելով հրեա «ազգության» կենսունակութունը՝ Բուճղը չեր կարող չկանգնել «ապահովության» տեսակետի վրա: Իսկ կանգնելով այս զիրքի վրա՝ նա չեր կարող չընդունել ազգային ավտոնոմիան: Վորովհետև Բուճղը յեթև կարող եր կառչել վորևս ավտոնոմիայից, ապա միայն ազգային, այսինքն՝ կոլյտուր-ազգային ավտոնոմիայից, հրեաների տերիտորիալ-քաղաքական ավտոնոմիայի մասին խոսք էլ չեր կարող լինել այն պատճառով, վոր հրեաները չունեն ամբողջական վորոշ տերիտորիա:

Բնորոշ է, վոր Բուճղը հենց սկզբից ընդգծել է ազգային ավտոնոմիայի, իբրև ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովման, իբրև ազգերի «ազատ զարգացման» ապահովման ընույթը: Գոտտահական չե նաև այն, վոր Բուճղի ներկայացուցիչ Գորդըլաաը ուսուստանյան ս.-դեմոկրատիայի II համագումարում՝ ազգային ավտոնոմիան ձևակերպում եր վորպես «հիմնարկներ, վորոնք ազգացվում են նրանց (ազգերի: Ն. Աս.) համար կուլտուրական զարգացման լիակատար ապատությունը»\*, Բուճղի զադափարների կողմնակիցները նույն այս առաջարկով մասան Դուճայի չորրորդ ս.-դեմոկրատական Ֆրակցիան...

Բուճղը այսպես կանգնեց հրեաների ազգային ավտոնոմիայի կուրյոզ զիրքում:

Վերը մենք վերլուծեցինք ազգային ավտոնոմիան առհասարակ: Վերլուծումը ցույց տվեց, վոր ազգային ավտոնոմիան տանում է դեպի նացիոնալիզմ: Ստորև մենք կտեսնենք, վոր Բուճղը նույնպիսի վախճանի հասով, Բայց ազգային ավտոնոմիան Բուճղը զիւում է նաև հատուկ կողմից, — ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովությունների կողմից: Հարցը վերլուծենք նաև այս, հատուկ կողմից: Մա առավել ևս անհրա-

\* Տես II համագումարի արևանագրությունները, էջ 176:

ժեշտ ե, վորովհետև ազգային փոքրամասնությունները, — և վոչ միայն հրեական փոքրամասնությունները, — հարցը սոցիալ-դեմոկրատիայի համար լուրջ նշանակություն ունի:

Այսպես ուրեմն՝ «հիմնադրվեք, վորո՞՞ք ազատվում եմ» ազգերի համար «կուլտուրական զարգացման լիակատար ազատություն» (ընդգծումը մերն է Ի. Սո.):

Բայց այդ ի՞նչ «հիմնարկներ են, վորո՞ք ապահովում են» և այն: Սա, ամենից առաջ, Շարլինգեր—Բաուերի «ազգային խորհուրդն է», վոր կուլտուրական դործերի սեյմի նման մի բան է:

Բայց այդ հիմնարկները արդյոք կարճը են ապահովել ազգի «կուլտուրական զարգացման լիակատար ազատությունը»: Կուլտուրական դործերի վերաբերյալ վորևե սեյմեր կարճը են արդյոք ապահովել ազգերն ազգայնական «եղբերականները»:

Բունդը յենթադրում է, վոր կարող են:

Բայց պատմությունը հակառակն է ասում:

Ռուսական Լեհաստանում մի ժամանակ զոյություն ուներ սեյմ, քաղաքական սեյմ, և այն, հարկավ, քանում էր ապահովել լեհերի «կուլտուրական զարգացման» ազատությունը, բայց նա վոչ միայն հաջողություն չունեցավ սրանում, այլ — ընդհակառակը — ինքն ընկավ Ռուսաստանի ընդհանուր քաղաքական պայմանների դեմ մղած անհավասար պայքարում:

Ֆինլանդիայում վաղուց և վոր զոյություն ունի սեյմ, վորը նույնպես քանում է պաշտպանել ֆինն ազգությունը «հանցափորձերից» («покушения»), բայց թե նրան արդյոք շատ բան է հաջողվում անել այս ուղղությամբ, — այդ բոլորն են տեսնում:

Իհարկե, սեյմ ել կա, սեյմ ել, և դեմոկրատներն կազմակերպված ֆինլանդական սեյմից այնպես հեշտ չե գլուխ թռփել, ինչպես լեհական արխատոկրատական սեյմից: Բայց, այնուամենայնիվ, վնասակամը վոչ թե սեյմն ինքն է, այլ Ռուսաստանի ընդհանուր կարգերը. յեթե Ռուսաստանում ներկայումս լինեյին բիրտ-ասիական հասարակական-քաղաքական այնպիսի կարգեր, ինչպես անցյալում, լեհական սեյմի վերացման տարիներում, — ֆինլանդական սեյմի վերակին անհամեմատ ավելի վատ կլիներ: Բացի սրանից, Ֆինլանդիայի դեմ ուղղված «հանցափորձերի» քաղաքականությունը աճում է, և չի կարելի ասել, թե այդ քաղաք. վիճությունը պարտություններ է կրում...

Յեթե այսպես է բանի վերակը հին, պատմականորեն-կազմավորված հիմնարկների, քաղաքական սեյմերի վերաբերմամբ, — ապա առավել ևս չեն կարող ազգերի ազատ զարգացումն ապահովել յերիտասարդ սեյմերը, յերիտասարդ հիմնարկները. այն ել՝ այնպիսի թույլ հիմնարկները, ինչպիսիք «կուլտուրական» սեյմերն են:

Բանք, ակնբերեորեն, «հիմնարկները» չեն, այլ յերկրի ընդհանուր հարզերն են Ձկա յերկրում դեմոկրատացում՝ չկա նույնպես ազգությունների «կուլտուրական զարգացման լիակատար ազատության» ապահովումը։ Վստահ կարելի չե ստել, վոր ինչքան դեմոկրատիկ լինի մի յերկիր, այնքան քիչ «հանցավորներ» կլինեն «ազգությունների ազատության» դեմ, այնքան ավելի շատ ապահովություններ կլինեն «հանցավորներին»։

Ռուսաստանը կիսաասիական յերկիր է, և այդ պատճառով էլ «հանցավորներին» քաղաքականությունն այնտեղ հանախ ընդունում է ամենակողիտ ձևեր, ջարդի ձևեր. ինչ սակ էլույթ, վոր Ռուսաստանում «ապահովությունները» հասցված են նայրահեղ միջիմուռի։

Գերմանիան արդեն Յեվրոպա յե ավելի կամ պակաս քաղաքական ազատությամբ. գարմանայի չե, վոր «հանցավորներին» քաղաքականությունն այնտեղ յերբեք ջարդի ձևեր չի ընդունում։

Ֆրանսիայում, իհարկե, էլ ավելի «ապահովություններ» կան, վորովհետև Ֆրանսիան Գերմանիայից ավելի դեմոկրատիկ է։

Մենք այլևս չենք խոսում Եվեյցարիայի մասին, վորտեղ, ջորհիվ նրա բարձր, թեկուզ և բուրժուական, դեմոկրատականության, ազգություններն ազատ են ազրում—միևնույնն է՝ նրանք փոքրամասնություն են, թե մեծամասնություն։

Այսպես ուրեմն, Բուճդը սխալ ճանապարհի վրա յե կանգնած՝ պնդելով, թե «հիմնարկներն» ըստինքյան կարող են ապահովել ազգությունների կուլտուրական լիակատար զարգացումը։

Կարող են նկատել, թե Բուճդն ինքը Ռուսաստանի դեմոկրատացումը համարում է «հիմնարկների ստեղծման» և ազատության ապահովությունների նախնական պայմանը։ Բայց սա ճիշտ չե։ Բուճդի VIII կոնֆերանցիայի հաշվետվությունին<sup>14</sup> յերևում է, վոր Բուճդը մտածում է ձեռք բերել «հիմնարկներ»՝ Ռուսաստանի աշխարհային կարգերի նիւնն վրա, հեծեկան համայնքի «բարեփոխման» ճանապարհով։

«Համայնքը, — սում էր այդ կոնֆերանցիայում Բուճդի լիդերներից մեկը, — կարող է զուճուկ ազգա կուլտուր-ազգային պատմության կորիզը։ Կուլտուր-ազգային պատմության ազգի ինքնագասարկման ձև է, ազգային պահանջների բավարարման ձև։ Համայնքի ներսույ թաղնված է նույն բովանդակությունը։ Գրանք միևնույն շղթայի աղաներն են, միևնույն եզրույթայի ետապները»<sup>15</sup>։

Մրանից յինչելով՝ կոնֆերանցիան վճռեց, վոր պետք է պայքարել «հրեական համայնքի բարեփոխում և այն արեմադրական նսնուպանով աշխարհիկ հիմնարկ դարձնելու համար», դեմոկրատորեն կազմակերպված հիմնարկ<sup>16</sup> (ընդգծումը մերն է Ի. Սո.)։

<sup>14</sup> Տես Բուճդի VIII կոնֆերանցիայի հաշվետվությունը, 1911 թ., էջ 63։

<sup>15</sup> Տես նույն տեղը, էջ 83-84։

Պարզ է, վոր Բուճղը պայման ու ապահովություն համարում է վոչ թե Ռուսաստանի զեմոկրատացումը, այլ հրեաների ապագա «աշխարհիկ հիմնարկը», ստացված «հրեական համայնքի բարեփոխման» հանապարհով, այսպես ասած՝ «որհնոգրական» կարգով, Դուճայի միջոցով:

Բայց մենք արդեն տեսնեք, վոր «հիմնարկներն» իրենք ըստինքյան, առանց ամբողջ պետութայն մեջ զեմոկրատիկ կարգեր լինելու, չեն կարող ծառայել վորպես «ապահովություններ»:

Լավ, բայց, այնուամենայնիվ, ինչ է լինելու ապագա զեմոկրատիկ կարգերում: Գեմոկրատիզմի ժամանակ եւ արդյոք հարկավոր չլին լինի հատուկ «կուլտուրական հիմնարկներ, վորոնք ապահովեն» և այլն: Այս տեսակետից ինչպես և դրությունը, որինակ, զեմոկրատական Շվեյցարիայում: Արդյոք այնտեղ կան շարքինգերյան «ազգային խորհրդի» նման հատուկ կուլտուրական հիմնարկներ: Այնտեղ ալյուրիք չկան, Բայց այս պատճառով արդյոք չլին տուժում, որինակ, այնտեղ փոքրամասնություն կազմող իտալացիների կուլտուրական շահերը: Ալյուրիս բան չենք լսում: Յեզ այդ հասկանալի չէ. զեմոկրատիան Շվեյցարիայում ավելորդ է դարձնում ամեն տեսակի հատուկ-կուլտուրական «հիմնարկները», վորոնք իբրև թե «ապահովում են» և այլն:

Այսպես ուրեմն, ներկայումս՝ անգոր, ապագայում ավելորդ—այսպես են կուլտուր-ազգային ավտոնոմիայի հիմնարկներ, այսպես և ազգային ավտոնոմիան:

Բայց այն ավելի ևս վտանգավոր է դառնում, յերբ այն փաթաթում են այնպիսի մի «ազգի» վզին, վորի գոյությունն ու ապագան կասկածի չեն յենթակա: Ազգային ավտոնոմիայի կողմնակիցները համար ալյուրիս զեպքերում հարկ է լինում պահպանել ու կոնսերվացնել (консервировать) «ազգի» բուր առանձնահատուկությունները, — վոչ միայն ուղտակաղնները, այլև ֆուսակաղնները, — միայն թե՛ «իբրև են ազգը» ասիմիլացիայից, միայն թե՛ «պահեն» այն:

Բուճղը անխուսափելիորեն պետք է վտար դներ այս վտանգավոր ուղին:

Յեզ նա իրոք վտար է դրել: Մենք նկատի ունենք Բուճղի վերջին կոնֆերենցիաների վորոշումները «շարաթ որվա», «ժարգմնի» մասին և այլն:

Սոցիալ-զեմոկրատիան ձգտում է մայրենի լեզվի իրազուց ատանալ բոլոր ազգերի համար, բայց Բուճղը արանով չի բավարարվում, — նա պահանջում է, վոր «հատուկ հաստատակամությամբ» պաշտպանեն «հիմնական լեզվի իրավունքները» (ընդգծումը մերն է: Ն. Սե.)<sup>6</sup>, ըստ վորում Բուճղն ինքը, IV Դուճայի ընտրությունների ժամանակ, տալիս է «նա-

<sup>6</sup> Տես «Բուճղի VIII կոնֆերենցիայի հաշվազությունը», էջ 80.

խաղաղապետութիւնը նրանցից (այսինքն՝ ընտրողներէց) այն մարզուն, ով պարտավորուած և պաշտպանել հրեական լեզվի իրավունքները»:

Վոչ թե մայրենի լեզվի ընդհանուր իրավունք, այլ հրեական լեզվի, մարդանի առանձին իրավունքը: Թող առանձին ազգութիւնների բանփոխներն ամենից առաջ պայքարեն իրենց լեզվի համար — հրեաները՝ հրեյերենի համար, վրացիները՝ վրացիների համար և այլն: Բայց ազգերի ընդհանուր իրավունքի համար պայքարելը յերկրորդական բան և: Բայց նշմարել ազգութիւնների մայրենի լեզվի իրավունքները զուք կարող եք և չընդունել: Բայց յեթե զուք ընդունեցիք մարդանի իրավունքը, ապա իմացած յեզեք՝ Բունդը ձեր սգոխն կզվեարկի, Բունդը «նախապատմութիւն կտա» ձեզ:

Բայց այն ժամանակ ինչեզ և սարբերվում Բունդը բուրժուական նացիոնալիստներից:

Սոցիալ-դեմոկրատիան ձգտում և շարաթվա մեջ հանդատի մի պարտադիր, որ սահմանելու, բայց Բունդը դրանով չի բավարարվում, — նա պահանջում է, զոր «որենադրական կարգով ազահոված լինի հրեա պրոլետարիատի համար շարաթ որը տոնելու իրավունքը՝ վերացնելով հանդերձ նաև ուրիշ որ տոնելու հարկադրանքը»<sup>99</sup>:

Պետք և կարծել, զոր Բունդը «մի քայլ առաջ կգնա» և կպահանջի բայց հին-հրեական տոները տոնելու իրավունք: Իսկ յեթե, ի դժբախտութիւն Բունդի, հրեա բանփոխները ձեռք են վերցրել նախապաշարմունքներից և չեն կամենում տոնել, ապա Բունդը «շարաթ որվա իրավունքի» իր ապիտացիայով նրանց հիշեցնելու յե շարաթ որվա մասին, արմատազորելու յե նրանց մեջ, այսպես ասած, «շարաթ որվա լողին»...

Ուստի, միանգամայն հասկանալի յեն հոկտոբերի «բողոքական հիմնադրանքներ» պահանջ ևք արվում, ըստ վորում՝ այդ պահանջը նրանով ևք հիմնադրվում, թե «հիմնադր իրեն ավելի լավ և զգում յուրայինների շըրջանում», թե «հրեա բանփոխ իրեն վատ և զգալու լե՛ք բանփոխների շըրջանում», նա իրեն լավ և զգալու հրեա խանութայանների շըրջանում»<sup>100</sup>:

Պահպանել ամեն բան, ինչ հրեական և, կոնսերվացնել հրեաների բայց ազգային առանձնահատկութիւնները՝ ընդհուպ մինչև պրոլետարիատի համար հայտնապես ֆիասակարները, սահմանադատել հրեաներին այն ամենից, ինչ հրեական չե, մինչև անգամ կաղմակերպել առանձին հիմնադրանքներ, — ահա թե ինչ աստիճանի ընկել և Բունդը:

Ընկելը Պլենիտնովը հազար անգամ իրավացի յեր՝ տանելով, թե Բունդը «սոցիալիզմը հարմարեցնում են սոցիոնալիզմին»<sup>101</sup>: Իհարկե, Վ. Կոսով-

<sup>99</sup> Տես «Բունդի IX հոկտեմբերեցիայի հաշիվաբութիւնը», 1913 թ., էջ 48:

<sup>100</sup> Տես «Բունդի VIII հոկտեմբերեցիայի հաշիվաբութիւնը», էջ 83:

<sup>101</sup> Տես նույն տեղը, էջ 88:

սկին և նրա նման բունդակները կարող են Պլեխանովին հայտնի՝  
 «գեմազոզ» անվանելով նրան<sup>16</sup>, — թուղթն ամեն ինչ և հանդուրժում, —  
 բայց Բունդի գործունեյությանը ծանոթ մարդկանց համար դժվար չե  
 հասկանալ, վոր այս կտրին մարդիկ պարզապես վախենում են իրենց  
 մասին ճշմարտությանն ասելուց՝ վարագուրվելով «գեմազոզիայի» վե-  
 բարերյալ թունդ բառերով...

Բայց, ազգային հարցում այսպիսի դիրքում մնալով, Բունդը, ընա-  
 կանորեն, կազմակերպական հարցումն ել պետք է բունը հրեա բանվոր-  
 ներին առանձնացնելու ճանապարհը, ազգային կուրիաների ճանապարհը՝  
 սոցիալ-դեմոկրատիայի մեջ: Այս և ազգային ավստոմիայի տրամա-  
 բանությանը:

Յեղ իսկապես, Բունդը «միակ ներկայացուցչության» թեորիայից  
 անցնում է բանվորների «ազգային սահմանազժման» թեորիային: Ռուսաս-  
 տանյան սոցիալ-դեմոկրատիայից Բունդը պահանջում է, վոր նա թիբ  
 կազմակերպական կառուցվածքում անցկացնի սահմանազժումն ըստ ազ-  
 գությանների<sup>17</sup>: Իսկ «սահմանազժումից» «մի քայլ առաջ» է դը-  
 նում դեպի «առանձնացման» թեորիան: Բունդի VIII կոնֆերենցիայում  
 ղուր չեյին հնչում ճառեր այն մասին, թե «առանձնացման մեջ է ազ-  
 գային գոյությունը»<sup>18</sup>:

Կազմակերպական ֆեդերալիզմը իր մեջ կրում է քայքայման ու սե-  
 պարատիզմի տարրեր: Բունդը դեպի սեպարատիզմ է դնում:

Ասենք, նա իսկապես ուրիշ դնալու տեղ չունի ել նրա՝ վորպես  
 արտատերիտորիալ կազմակերպության՝ բուն իսկ գոյությունը նրան  
 քշում է դեպի սեպարատիզմի ուղին: Բունդը վորոշ ամբողջական տե-  
 ռիտորիա չունի, նա գործում է շտաբ՝ տերիտորիաներում, մինչդեռ  
 նրա հետ շփվող լեհական, լատիշական ու ուսաստանյան սոցիալ-դե-  
 մոկրատիաներն ինտերնացիոնալ-տերիտորիալ կոլեկտիվներ են: Բայց  
 սա հանգեցնում է այն բանին, վոր այդ կոլեկտիվների յուրաքանչյուր  
 լատիշացումը Բունդի համար նշանակում է «կորուստ», նրա գործունեյու-  
 թյան դաշտի նեղացում: Յերկուսից մեկը՝ կամ ուսաստանյան ամբողջ  
 սոցիալ-դեմոկրատիան պետք է վերակառուցվի ազգային ֆեդերալիզմի  
 սկզբունքներով, — և այն ժամանակ Բունդը հնարավորություն է ստա-  
 նում «ապահովելու» իր համար հրեական պրոլետարիատը. կամ այդ  
 կոլեկտիվների տերիտորիալ-ինտերնացիոնալ սկզբունքն իր ուժի մեջ է  
 մնում, — և այն ժամանակ Բունդն է վերակառուցվում ինտերնացիոնալ  
 սկզբունքներով, ինչպես այդ տեղի ունի լեհական ու լատիշական սո-  
 ջիալ-դեմոկրատիայում:

<sup>16</sup> Տես «Նալա Ջարյա», 1918 թ., № 9-10, էջ 120:

<sup>17</sup> Տես «Ծանուցում Բունդի VII համագումարի մասին»<sup>17</sup>, էջ 7:

<sup>18</sup> Տես «Բունդի VIII կոնֆերենցիայի հաշվազմությունը», էջ 72:

Մրանով էլ բացատրվում և այն, Վոր Բունդն են գլխից պահանջում և փոխակերպելու ուսաստանյան սոցիալ-դեմոկրատիան ֆեդերատիվ սկզբունքներով»<sup>6</sup>։

Բունդը 1906 թվականին, գիջելով ներքնախավերում յեղած միավորման այլերին. ընտրեց միջին նանապարհը՝ մտնելով ուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի մեջ։ Բայց ինչպես նա այնտեղ մտավ։ Մինչդեռ լեհական ու լատիշական սոցիալ-դեմոկրատիաները մտան խաղաղ միատեղ աշխատանքի համար, Բունդը մտավ ֆեդերացիայի համար պատերազմելու նպատակով։ Բունդականների լիզեր Մեդեմը այն ժամանակ հենց այսպես էլ ստում էր.

«Մենք իզիլայի համար չենք զնում, այլ պայքարելու համար Իզիլա չկա և այն մոտ ապագայում կարող են սպասել միայն Մանիլիները։ Բունդը կուսակցություն պետք և մանի՛ վտարից մինչև գլուխ գինգած»<sup>7</sup>։

Սխալ կլիներ սրա մեջ Մեդեմի շար կամքը տեսնել։ Բանը շար կամքը չէ, այլ Բունդի հատուկ դիրքը, վորի պատճառով նա չի կարող չբացարձակ ուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի դեմ, վորը կառուցված է ինտերնացիոնալիստիկ սկզբունքներով։ Իսկ նրա դեմ պայքարելով, Բունդը, բնականորեն, խախտում էր միասնություն շահերը։ Վերջապես, բանն այնտեղն է համարում, վոր Բունդը ձևականորեն խզում է իր կազմերը ուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայից՝ խախտելով կանոնադրությունը և IV Դուսայի ընտրությունների ժամանակ միավորվելով լեհական նացիոնալիստների հետ, լեհական ս.-դ. դեմ<sup>8</sup>։

Բունդը, ակնբերորեն, գտել է, վոր խզումը նրա ինքնագործունեություն ամենալավ ապահովությունն է։

Կալմակերպական «սահմանագծման» ակզրունքը» այսպես հանդեցրեց սեպարատիզմի, լիակատար խզման։

Ֆեդերալիզմի մասին քանավիճելով հին «Լիկրայի» դեմ<sup>9</sup> ժամանակով Բունդը գրել է.

«Երկրան ուզում է մեզ հախառցնել, թե Բունդի ֆեդերատիվ հարաբերությունները ուսաստանյան ս.-դ.-այի վերաբերմամբ պետք և թուլացնեն նրանց միջև յեղած կապը, ը։ Մենք չենք կարող հերքել այս կարծիքը Ռուսաստանի պրակտիկայի վրա հենվելով՝ այն պարզ պատճառով, վոր ուսաստանյան սոցիալ-դեմոկրատիա՝ իբրև ֆեդերատիվ միացություն գոյություն չունի։ Բայց մենք կարող ենք հենվել Ավստրիայի սոցիալ դեմոկրատիայի շփազանց ուսանելի փորձի վրա, վորը (ս.-դ.) ֆեդերատիվ բնույթ ընդունեց 1897 թ. պարտադարձի վնի հրաման վրա»<sup>10</sup>։

<sup>6</sup> Տես «Ազգային ազատամարտի և ուսաստանյան սոցիալ դեմոկրատիան ֆեդերատիվ սկզբունքներով փոխակերպելու հարցի շուրջը», 1902 թ., հրատ. Բունդի։

<sup>7</sup> Տես «Նաչև Մյուխեն», № 3, էջ 21, Վիեննա, 1908 թ.։

<sup>8</sup> Տես «Ազգային ազատամարտի շուրջը» ըլ. 1902 թ., էջ 17, հրատ. Բունդի։



Մա գրվել է 1902 թ.:

Բայց այժմ 1913 թվականն և Մենք այժմ արդեն ունենք թե ուսաստանյան պարակտիկան», թե «Ավստրիայի ս.-դ. փորձը»:

Իսկ ինչի մասին են զբանք խոսում:

Սկսենք «Ավստրիայի ս.-դ. չափազանց ուսանելի փորձից»: Տակավին մինչև 1896 թվականն Ավստրիայում գոյութուն ունի միամանական ս.-դ. կուսակցություն: Այդ թվականին չեխերն առաջին անգամ պահանջում են Լոնդոնի միջազգային կոնգրեսում առանձին ներկայացուցչություն և ստանում են այն: 1897 թ., Վիեննայի պարտադրարարում (Վիեննա դեբարում), միամանական կուսակցությունը ձևականորեն վերացվում է, և նրա փոխարեն հաստատվում է ազգային վեց «ս.-դ. խմբերի» ֆեդերատիվ միութունը: Այս այդ խմբերը դառնում են ինքնուրույն կուսակցություններ: Կուսակցությունները կամաց-կամաց խզում են միմյանց միջև յեղած կապերը: Կուսակցություններից հետո բաժան-բաժան է լինում պառլամենտական ֆրակցիան — կազմվում են ազգային բաժանումներ: Այս դալիս են միութունները, վորոնք նույնպես արոճվում են ըստ ազգությունների: Բանը հասնում է նույնիսկ կոպերատիվներին, վորոնց արոճմանն են կոչ անում բանվորներին չեխական սեպարատիստները: Մենք այլևս չենք խոսում այն մասին, վոր սեպարատիստական ազդեցության թուլացում է բանվորների համերաշխության զգացմունքը՝ հաճախ մղելով նրանց դեպի շարակրթելու թյան ուղին:

Այսպես ուրեմն, «Ավստրիայի սոցիալ-դեմոկրատիայի չափազանց ուսանելի փորձը» խոսում է Բուռնդի դեմ, հոգուս հին «Բակրայի»: Ձեռքերալիցն ալստրիական կուսակցության մեջ հանգեցրեց ամենաալստրիական սեպարատիզմի, բանվորական շարժման միամտության կործանման:

Մենք վերը տեսանք, վոր «Ռուսաստանի պրակտիկան» նույն այդ մասին է խոսում: Բուռնդական սեպարատիստները այնպես, ինչպես և չեխականները, խղի են իրենց կապերը ընդհանուր՝ ուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայից: Ինչ վերաբերում է միութուններին, բուռնդական միութուններին, ապա նրանք են զլիսից կազմակերպված են յեղել ազգությունների սկզբունքներով, այսինքն՝ կտրված են յեղել այլ ազգությունների բանվորներից:

Իրակատար առանձնացում, լրակատար խզում — ահա թե ինչ է ցույց տալիս ֆեդերատիզմի բուռնդական պրակտիկան:

Չարմանալի չէ, վոր իրերի այսպիսի զինակը բանվորների վրա անդրադառնում է համերաշխության զգացմունքի թուլացմամբ ու բարոյալքմամբ, ըստ վորում վերջինս թափանցում է և Բուռնդի մեջ: Մենք

\* Տե՛ս «Documente des Separatismus»-ում Վանկի բերուրից<sup>21</sup> բերված խոսքերը, էջ 20:



Նկատի ունենք հրեական ու լեհական բանվորներին ավելի հանախակի գործող բաղխումքները գործադրելու ձևի հոգի վրա: Ահա թե Բուճղի IX կոնֆերենցիայում այս առթիվ ինչ նաևեր ելին հնչում:

«... Մեզ արտադրող լեհ բանվորներին մենք դիտում ենք վորպես շարժարաններ, վորպես զեղիներ, չենք աշակցում նրանց գործադրելուն մտնողում ենք գրանք: Ենթերոջ, արտադրումը դատասխանում ենք արտադրումով: Հրեական բանվորներին գործարանները չթողնելուն ի պատասխան՝ մենք լեհ բանվորներին չենք թողնում ձեռքի հաստոցներին մոտենալ... յեթ այս գործը մե՞ք մեր ձեռքը չառնե՞ք թանկագին ուրիշների հետևից կզմանք» (ընդգծումը մերն է: Ի՝ ՍԵ):

Համերաշխության մասին այսպես են խոսում բուճղական կոնֆերենցիայում:

«Մահամնագծման» ու «առանձնացման» ասպարեզում ավելի հեռուն գնալու տեղ չկա: Բուճղը հասել է նպատակին. տարբեր ազգութայունների բանվորներին նա սահմանազատում է մինչև տուրուզբոցի, մինչև շտրայկերիսերութայն աստիճանի հասցնելը: Ուրիշ կերպ չի կարելի. «յեթն այս գործը մենք մեր ձեռքը չառնենք, բացվարենք ուրիշների հետևից կզմանք»...

Բանվորական շարժման կազմալուծում, բարոյալքում սոցիալ-դեմոկրատիայի շարքերում—ահա թե նրա և հասցնում բուճղական ֆեզեքայիզմը:

Այսպիսով, ազգային ավտոնոմիայի այն զազափարը, այն մթնոլորտը, վոր ստեղծում է նա, Ռուսաստանում ել ավելի վնասակար դուրս չեկավ. քան Ավստրիայում:

## VI. ԿՈՎԿԱՍՏԻՆԵՐԸ, ԼԻԿՎԻԴԱՏՈՐՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ

Վերը մենք խոսեցինք կովկասյան սոցիալ-դեմոկրատների մի մասի յերերուկների մասին, վորը չդիմացավ ազգայնական «համաճարակի» հանդեպ: Այդ յերերուկները նրանով արտահայտվեցին, վոր հիշյալ սոցիալ-դեմոկրատները—վորքան ել տարորինակ է այդ—գնացին Բուճղի հետքերով՝ կուլտուր-ազգային ավտոնոմիա հռչակելով:

Մարզային ավտոնոմիա՝ ամբողջ կովկասի համար և կուլտուր-ազգային ավտոնոմիա՝ կովկասի կազմի մեջ մտնող ազգերի համար—այսպես են ձևակերպում իրենց պահանջը այդ սոցիալ-դեմոկրատները, վորոնք,—իդեպ ասած,—հարում են ռուսական լիկվիդատորներին:

Լսենք նրանց նանաչված լիդերին, վոչ անհայտ Ն.—ին՝

«Բուճղին հայանի յե, վոր կովկասը խորապես տարբերվում է կենտրոնական հասնոցներից ինչպես իր քնակչութայն ուստայական կազմով, այնպես ել տերիտորիայով ու գյուղատնտեսական մշակույթով: Մի այսպիսի յերկրի շահագոր-

\* Տես շուճղի IX կոնֆերենցիայի հաշիվագրությունը, էջ 10:

ծուծն ու նյութական զարգացումը պահանջում են ունենալ տեղական աշխատողներ, տեղական տառնձնասահմանափակումների դիտակներ, վարոնք սովոր են տեղական կլիմային ու կուլտուրային։ Անհրաժեշտ է, վոր տեղական տերիտորիայի շահագործման նպատակներ հետազննող բոլոր որևէքները տեղում հրատարակվեն ու կիրառվեն տեղական ուժերով։ Հետևաբար, կովկասյան ինքնավարութայն կենտրոնական սրբանի իրավասութայն մեջ կմտնի տեղական հարցերի վերաբերյալ որևէքների հրատարակումը ... Այսպիսով, կովկասյան կենտրոնի Փուսկոցիաները կայանում են այնպիսի որևէքներ՝ հրատարակելու մեջ, վորոնք հետապնդում են տեղական տերիտորիայի տնտեսական շահագործման նպատակներ, յերկրի նյութական բարգավաճման նպատակները ։

Այսպես ուրեմն, կովկասի մարզային ավտոնոմիա:

Յեթն վերանանք (ОТВѢЧЕНІЯ) Ն.—ի փոքր ինչ շփոթ ու անհարիր պատահաբանություններից, պետք է ընդունել, վոր նրա յեղրահացությունը ճիշտ է։ Համապետական սահմանադրութայն շրջանակներում գործող կովկասի մարզային ավտոնոմիա,— մի բան, վոր Ն.—ն էլ չի ժխտում,— իսկապես վոր անհրաժեշտ է՝ նկատի ունենալով կովկասի կազմի ու կենցաղային պայմանների առանձնահատկությունները։ Սա ընդունել է նաև ուսուսաստանյան սոցիալ-դեմոկրատիան, վորը II համադումարում հռչակել է՝ մարզային ինքնավարություն այն ծայրամասերի համար, վորոնք իրենց կենցաղային պայմաններով ու բնակչութայն կազմով տարբերվում են բուն-ուսասական մարզերիցը։

Այս կետը մտցնելով II համադումարի քննարկման՝ Մարտովը նրանով էր պատահաբանում այդ կետը, վոր «Ռուսաստանի հակայական տարածությունը և մեր կենտրոնացված կառավարչութայն փորձը մեզ առիթ են տալիս, վոր մարզային ինքնավարութայն դոյությունն անհրաժեշտ ու նպատակահարմար համարենք այնպիսի խոշոր միավորների համար, ինչպիսիք են Ֆինլանդիան, Լեհաստանը, Լիտվան ու կովկասը»։

Բայց սրանից հետևում է, վոր մարզային ինքնավարութայն ասելով պետք է հասկանալ մարզային ավտոնոմիա:

Բայց Ն.—ն ավելի հեռուն է գնում։ Նրա կարծիքով՝ կովկասի մարզային ավտոնոմիան ընդգրկում է «հարցի միայն մի կողմը»։

«Մինչև այժմ մենք խոսում ենք տեղական կյանքի ժխտի նյութական զարգացման մասին։ Բայց յերկրի տնտեսական զարգացմանը նպաստում է վոր միայն տնտեսական զարմանելությունը, այլև հոգեկանը, կուլտուրականը... «Հուլյուտուրական ուժեղ ազդը և նույնպես տնտեսական վոլորումում ... Բայց ազգերի կուլտուրական զարգացումը հարավոր է միայն ազգային լեզվով» — «Ռուսի բոլոր այն հարցերը, վորոնք կազմած են մայրենի լեզվի հետ, կուլտուրա-ազգային հարցեր են։ Այդպիսիք են՝ լուսավորութայն, դատավարութայն յեկեղեցու, գրականութայն, արվեստի, գիտութայն, թատրոնի և այլ հար-

\* Տես վրացական «Չվեթի ծիովերբա» («Մեր կյանքը»)՝ Թեթբլ, 1912 թ., № 12:

ցերբ: Յեթն յերկրի Նյութական գարգացման գործը ազդերին մեղմորում է, ապա ազդային-կուլտուրական գործերն անխառնում են նրանց՝ յարաբանչյուրին առանձին ապարեղ գերազանելով: Առաջին տեսակի գործունեությունը կազմած է ժողով տերիտորիայի նեո-...Այլ են կուլտուր-ազգային գործերը: Մշակույթ կազմած են ժողովն ժողով տերիտորիայի նեո, այլ ժողով ազգի գոյություն նեո: Կրթական լիզվի բոխող համասարացն ենաբարբրում է վրացուն, վրացից ել ժողով տարրերի լինել: Մեծ ազիտություն կլինիք սակ, թե վրացական կուլտուրան գերաբերում է միայն Կրասսանում ապրող վրացիներին: Վերջնանք, որինսկ, հայոց յնկեղցիներ նրա գործերը վարելուն մասնակցում են տարբեր տեղերի ու պետություններին հայերը: Տերիտորիան այստեղ ժողովի դեռ չէ յնպուում կամ որինսկ, վրացական Քանդաբան տեղեկու գործով շահագրգռված են ինչպես Քիֆլիսի վրացին, այնպես ել Բազվի, Բոթայիսի, Գետեբուրդի ե այլ տեղերի վրացիները: Նշանակում է, ըստ կուլտուր-ազգային գործերը վարելն ու ղեկավարելը պետք է թողնել շահագրգռված ազդերին իրենց: Մենք հուշակում ենք կովկասյան ազգությունների կուլտուր-ազգային ավանդմանը:

Կարն ասած՝ վորովնետե կուլտուրան՝ տերիտորիա չէ, իսկ տերիտորիան՝ կուլտուրա չէ, ուստի անհրաժեշտ է կուլտուր-ազգային ավանդումիս: Մա այն ամենն է, ինչ կարող է ասել Ն.-ն հոգուտ վերջինի:

Մենք այստեղ կրկին անդամ չենք շոշափի ընդհանրապես ազգային կուլտուրական ավանդումիայի հարցը. վերը մենք արդեն խոսել ենք նրա բացասական բնույթի մասին: Մենք կուղեյինք միայն նշել, ժողովունըրապես անպետք կուլտուր-ազգային ավանդումիան նաև անմիտ ու անհեթեթ է կովկասյան պայմանների տեսակետից:

Յեզ ահա թե ինչն է:

Կուլտուր-ազգային ավանդումիան յնթադրում է շատ թե քիչ դարգացած ազգություններ՝ զարգացած կուլտուրայով, զբաղանությունով: Այդ ավանդումիան առանց այս պայմանների կորցնում է ամեն մի իմաստ, անհեթեթություն է դառնում: Բայց կովկասում կան մի շարք ժողովուրդներ՝ պրիմիտիվ կուլտուրայով, առանձին լիզվով, բայց առանց մայրենի զբաղանություն, այն ել՝ անցողիկ ժողովուրդներ, վորոնք մասամբ ասիմիլացիայի յնն յնթարկվում, մասամբ ել շարունակում են զարգանալ: Ի՞նչպես կիրառել նրանց նկատմամբ կուլտուր-ազգային ավանդումիան: Ի՞նչպես վարվել այդպիսի ժողովուրդների հետ: Ի՞նչպես «կազմակերպել» նրանց իրրև առանձին կուլտուր-ազգային միություններ, վոր անկասկած յնթադրում է կուլտուր-ազգային ավանդումիան:

Ի՞նչպես վարվել մինչդեռներին, արխանդներին, աշարացիներին, սվաններին, լեզգիներին և այլոց հետ, վորոնք տարբեր լեզուներով են խո-

<sup>2</sup> Տես վրացական «Ձգնի Յիսկերու թերթը, 1912 թ., № 12.

սուս, բայց չունեն իրենց գրականութիւնը: Նրանց ինչ ազգերի վերագրել: Արդո՞ք հնարավոր է նրանց «կազմակերպել» վորպէս ազգային միութիւններ: Ի՞նչ «կուլտուրական գործերի» չուրջը «կազմակերպել» նրանց:

Ի՞նչպէս վարվել ոսերի հետ, վորոնցից անդրկողկասյան ոսերը աւստրիացիայի յեն յենթարկվում (բայց զեռես աստրիացիայի յենթարկված չեն) վրացիների կողմից, իսկ նախակողկասյանները մասամբ աւստրիացիայի յեն յենթարկվում ուսաների կողմից, մասամբ էլ շարունակում են զարգանալ՝ ստեղծելով իրենց գրականութիւնը: Ի՞նչպէս նրանց «կազմակերպել» վորպէս միասնական ազգային միութիւն:

Ազգային ինչ միութեան վերագրել աշխարհայիններին, վորոնք վրացիներն են խոսում, բայց ապրում են թյուրքական կուլտուրայով և դավանում են իսլամ: Արդո՞ք նրանց չ«կազմակերպել» վրացիներից առանձին՝ կրօնական գործերի հողի վրա և վրացիների հետ միասին՝ այլ կուլտուրական գործերի հողի վրա: Իսկ կորուսեացիք: Իսկ ինգուշները՝ Իսկ ինգիլոյցիք:

Դա ինչ ավտոնոմիա յե, վոր ցուցակից հանում է մի ամբողջ շարք ժողովուրդներ:

Վճշ, զա ազգային հարցի լուծում չե, — զա պարտալ յերեակայութեան արդյունք է:

Բայց ընդունենք անընդունելին ու յենթագրենք, թե մեր Ն.—ի ազգային-կուլտուրական ավտոնոմիան իրականացա՞վ: Դա ինչի՞ կհանգեցնի, ինչ հետեանքների: Վերցնենք, որինակ, անդրկողկասյան թաթարներին՝ զրազիտութեան նրանց նվազագույն տոկոսով, նրանց զպրօցներով, վորոնց զլուսն են կանգնած ամենագոր մուլանները, նրանց կուլտուրայով, վոր տարածած է կրօնական վողով... Դժվար չե հասկանալ, վոր նրանց կազմակերպել, վորպէս կուլտուր-ազգային միութիւն՝ այդ նշանակում է նրանց զլուսն կանգնեցնել մուլաններին, այդ նշանակում է նրանց զցնել ևեակցիոն մուլաների յերախը, այդ նշանակում է նոր բաստիոն ստեղծել՝ թաթարական մասսաներին իրենց վոխերիմ թշնամու կողմից հոգեպէս ստրկացնելու համար:

Բայց այդ յերբովանից է, վոր սոցիալ-գեմոկրատները սկսել են ջուր ածել ևեակցիոններնեի ջրադացին:

Անդրկողկասյան թաթարներին սահմանադատել վորպէս կուլտուր-ազգային միութիւն, վորը մասսաներին զարծնում է ամենաշար ևեակցիոններնեի ստրուկը, — մի՞թե կողկասյան լիկվիդատներնը չեյին կարող ափել լավ բան «հոշակել»:

Վճշ, այդ ազգային հարցի լուծում չե:

Ազգային հարցը կողկասում կարող է լուծվել ուսացած ազգերն ու ժողովուրդներ բարձր կուլտուրայի բնդհամուր հուրը մերգրավելու վողով:

վրայն: Միայն այսպիսի լուծումը կարող է առաջադիմական և ընդունելի լինել սոցիալ-դեմոկրատիայի համար: Կովկասի մարզային ավտոնոմիան հենց այն պատճառով է ընդունելի, վոր ուշացած ազգերին ներքաշում է կուլտուրական ընդհանուր զարգացման մեջ, ոգնում է նրանց դուրս գալու մանր-ազգային ինքնամոխոխության կեղևից, նրանց առաջ է մղում և հեշտացնում է բարձր կուլտուրայի բարիքներին նրանց հազարակից լինելը: Այնինչ, կուլտուր-ազգային ավտոնոմիան ուղղակի հակադիր ուղղությամբ է զործում, վորովհետև ազգերին պարփակում է հին կեղևների մեջ, նրանց հաստատում է կուլտուրայի զարգացման ցածր աստիճանների վրա, նրանց խանգարում է կուլտուրայի բարձր աստիճաններին բարձրանալու:

Ազգային ավտոնոմիան սրանով իսկ չեզոքացնում է մարզային ավտոնոմիայի դրական կողմերը, զերտ յե դարձնում մարզային ավտոնոմիան:

Հենց այդ պատճառով էլ պիտանի չէ նաև ազգային-կուլտուրական ու մարզային ավտոնոմիայի զուգակցումից ստացվող այն խառն արդյւր, վոր առաջարկում է Ն.-ն: Այդ հակաբնական զուգակցումը զործը չի լավացնում, այլ վատացնում է, վորովհետև դա, բացի այն բանից, վոր կասեցնում է ուշացած ազգերի զարգացումը՝ մարզային ավտոնոմիան էլ զեռ դարձնում է վորպես ազգային միություններ կազմակերպված ազգերի ընդհարումների ասպարեզ:

Այսպիսով, առհասարակ անպետք լինելով, կուլտուր-ազգային ավտոնոմիան Կովկասում կդառնար անմիտ ուսուցիչին հորինվածք:

Այսպիսին է Ն.-ի և նրա կովկասյան համախոհների կուլտուր-ազգային ավտոնոմիան:

Ապագան ցույց կտա, թե կովկասյան լիկվիդատորներն արդյոք կզնան՞ ամի քայլ առաջ՞ և արդյոք կհետևեն Բուճդին նաև կազմակերպական հարցում: Մինչև այժմ սոցիալ-դեմոկրատիայի պատմության մեջ կազմակերպական Ֆեդերալիզմը միշտ նախորդել է ծրագրով նախատեսված ազգային ավտոնոմիային: Ավստրիական ս.-դեմոկրատները զեռևս 1897 թվականից կիրառում էին կազմակերպական Ֆեդերալիզմը և միայն յերկու տարի անց (1899) ընդունեցին ազգային ավտոնոմիան: Բուճդականները ազգային ավտոնոմիայի մասին առաջին անգամ պարզորոշ խոսեցին 1901 թվականին, այնինչ կազմակերպական Ֆեդերալիզմը զործադրում էին տակավին 1897 թվականից:

Կովկասյան լիկվիդատորները զործը սկսեցին վերջից, ազգային ավտոնոմիայից: Յեթև նրանք Բուճդի հետքերով շարունակեն զնալ, ապա հարկադրված կլինեն կանխապես քանդել ներկա ամբողջ կազմակերպական շինքը, վոր կառուցված է տակավին 90-ական թվականների վերջին ինտերնացիոնալության սկզբունքներով:

Բայց վորքան վոր հեշտ եր ընդունել բանվորների համար առաջմ անհասկանալի ազգային ավտոնոմիան, նույնքան ել զժվար կլինի քանդել աարխներով կառուցված մի շենք, վոր փայտայել ու մնել են կոփկասի բոլոր ազգութունների բանվորները: Բավական ե ձեռնամուխ լինել հերոսաբաստյան այս հորինվածքին, վորդեսողի բանվորներն աչքերը բաց անեն և հասկանան կուլտուր-ազգային ավտոնոմիայի նացիոնալիստական եյութունը:

Յեթե կոփկասցիները լուծում են ազգային հարցը սովորական յեղանակով, բանավոր վիճարանութունների ու գրական դիսկուսիայի միջոցով, ապա լիկվիդատորների համառուսաստանյան կոնֆերենցիան հնարել ե միանգամայն արտասովոր մի յեղանակ՝ Հեշտ ու հասարակ յեղանակը կսեցնեք:

«Լսելով կփկասյան պատվերակութան հաղորդումը... ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջ առաջագրելու անհրաժեշտութան մասին, կոնֆերենցիան շտրտաշարվելով այս պահանջի եյության մասին՝ Էսփաստում ե, վոր ծրագրի այս կետի մեկնաբանութունը, վորն ընդունում ե ինքնորոշման իրավունքը յաւաքանչյուր ազգության վերաբերմամբ, հակահակ չե ծրագրի հիտ իմաստին»:

Այսպես ուրեմն, ամենից առաջ— Էշարտահայտվել այս հարցի եյության մասին», իսկ ապա Էհավաստել: Որիդինալ մեթոդ ե...

Իսկ թնչ ե Էհավաստումս այդ որիդինալ կոնֆերենցիան:

Այն, վոր ազգային-կուլտուրական ավտոնոմիայի Էպահանջը ազգերի ինքնորոշման իրավունքն ընդունող ծրագրի Էհիտ իմաստին հակահակ չե»:

Դնտարկենք այս դրույթը:

Ինքնորոշման վերաբերյալ կետը խոսում ե ազգերի իրավունքների մասին<sup>2</sup>: Ըստ այս կետի՝ ազգերը վոչ միայն ավտոնոմիայի իրավունք ունեն, այլև անշտափելու: Խոսքը Էազգական ինքնորոշման մասին ե: Լիկվիդատորները ձև եյին ուղում խարել՝ փորձելով ծուռումուռ վերամենհարանել ազգերի քաղաքական ինքնորոշման այս իրավունքը, վոր վաղուց իվեր սահմանված ե միջազգային ամբողջ սոցիալ-դեմոկրատիայի կողմից:

Կամ, գուցե լիկվիդատորներն սկսեն խորամանկութուն բանեցնել՝ պաշտպանվելով սոփեստությամբ, թե իբր կուլտուր-ազգային ավտոնոմիան Էազգերի իրավունքներին հակահակ չե»: Այսինքն, յեթե սըվյալ պետության բոլոր ազգերը համաձայնվեն անորինել իրենց գործերը կուլտուր-ազգային ավտոնոմիայի սկզբունքներով, առա նրանք, ազգերի տվյալ գումարը, այդ բանի լիակատար իրավունք ունեն, և վոչ

վոր չի կարող բռնաւթյամբ երանց վզին փարարել քաղաքական կյանքի մի այլ ձև։ Թե նոր է, թե յետագիւր Արդյոք չափեալանքի, վոր, ընդհանրապես ասած՝ ազգերն իրավունք ունեն վերացնելու իրենց սահմանադրութեանը, այն փոխարինելու կամայականութեան սխառնով, վերացանալու հին կարգերին, վորովհետև ազգերն են, միմիայն իրենք ազգերը, վոր իրավունք ունեն վորոշելու իրենց սեփական բախտը։ Ներկում ենք՝ այս մտքով վերցրած—վոչ կուտուր-ազգային ավտոնոմիան, վոչ էլ ամեն մի ազգային սեակցիոնութեան ազգերի իրավունքներին։

Արդյոք այս բանը չե՞, վոր ուղեցել է ասել պատմութեան կոնֆերենցիան։

Վոչ, այս չէ։ Այն ուղղակի ասում է, վոր կուտուր-ազգային ավտոնոմիան հակառակ չէ՞ վոչ թե ազգերի իրավունքներին, այլ ծրագրի «ճիշտ իմաստին»։ Այստեղ խոսքը ծրագրի մասին է, և վոչ թե ազգերի իրավունքների մասին։

Յեւ վայր հասկանալի չէ։ Յեթե լիկվիդատորների կոնֆերենցիային վորևէ ազգ գիմեր, ապա կոնֆերենցիան ուղղակի կհամարուի, վոր ազգը կուտուր-ազգային ավտոնոմիայի իրավունք ունի։ Բայց կոնֆերենցիային գիմել և վոչ թե մի ազգ, այլ կովկասյան սոցիալ-դեմոկրատներին, ճիշտ է, վաստոցիալ-դեմոկրատներին, բայց և այնպես սոցիալ-դեմոկրատներին՝ պատմութեանը։ Յեւ նրանք հարցրել են վոչ թե ազգերի իրավունքների մասին, այլ այն մասին, թե կուտուր-ազգային ավտոնոմիան արդյոք չի՞ հակասում սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքներին, արդյոք այն հակառակ չի՞ սոցիալ-դեմոկրատիայի ծրագրի «ճիշտ իմաստին»։

Այսպես ուրեմն, ազգերի իրավունքները և սոցիալ-դեմոկրատիայի ծրագրի «ճիշտ իմաստը»—միևնույնը չեն։

Ակնհերտքին, կան և այնպիսի պահանջներ, վորոնք հակառակ չլինելով ազգերի իրավունքներին՝ կարող են հակառակ լինել ծրագրի «ճիշտ իմաստին»։

Մի որինակ։ Սոցիալ-դեմոկրատներին ծրագում մի կետ կա դամանութեան ազատութեան մասին։ Ըստ այդ կետի՝ անձերի ամեն մի խումբ իրավունք ունի դամանելու ցանկացած կրոնը՝ կաթոլիկութեան, ուղղափառութեան և այլն։ Սոցիալ-դեմոկրատիան պայքարելու չի կրոնական ամեն տեսակի ճշունքների դեմ, ուղղափառներին, կաթոլիկներին և բողոքականներին հալածելու դեմ։ Արդյոք սա նշանակում է, թե կաթոլիկութեանն ու բողոքականութեանը և այլն՝ ծրագրի «ճիշտ իմաստին» հակառակ չեն։ Վոչ, չի նշանակում։ Սոցիալ-դեմոկրատիան միշտ բողոքելու չի կաթոլիկութեանն ու բողոքականութեանը հալածելու դեմ, նա միշտ պաշտպանելու չի ազգերի իրավունքը՝ դամանելու



ցանկացած կրօնը, բայց նա միևնույն ժամանակ, յեղևելով պրոլետարիատի ճիշտ ըմբռնված շահերից, ազիտացիա յե մղելու թե կաթոլիկության, թե բողոքականության և թե ուղղափառության դեմ՝ հետամուտելով սոցիալիստական աշխարհայացքի հաղթանակը:

Եեզ նա այս բանն անելու յե, այն պատճառով, վոր բողոքականությունը, կաթոլիկությունը, ուղղափառությունը և այլն, անկասկած, ճակատակ են՝ ծրագրի ճճիշտ իմաստին, այսինքն պրոլետարիատի ուղիղ ըմբռնված շահերին:

Նույն այդ բանը պետք և ասել ինքնորոշման մասին: Ազգերն իրավունք ունեն անորինելու իրենց դործերն ըստ իրենց ցանկության, նրանք իրավունք ունեն պահպանելու իրենց ազգային ցանկացած հիմնարկը՝ թե ֆեոստակարը և թե ոգտակարը,—վոչ վոք չի կարող (իրավունք չունի) բռնի միջամտելու ազգերի կյանքին: Բայց այս դեռ չի նշանակում, թե սոցիալ-դեմոկրատիան չի պայքարելու, ազիտացիա չի մղելու ազգերի ֆեոստակար հիմնարկների դեմ, ազգերի աննպատակահարմար պահանջների դեմ: Ընդհակառակը, սոցիալ-դեմոկրատիան պարտավոր և այդպիսի ազիտացիա մղել և ազգերի կամքի վրա այնպես ազդել, վոր ազգերն իրենց դործերը անորինեն պրոլետարիատի շահերին ամենից ավելի համապատասխանող ձևով: Հենց այս պատճառով էլ նա, պայքարելով ազգերի ինքնորոշման իրավունքի համար, միաժամանակ ազիտացիա յե մղելու, ասենք, թե թաթարների անջատման դեմ, թե կովկասյան ազգերի կուլտուր-ազգային ավտոնոմիայի դեմ, վորոշվեալ թե մեկը և թե մյուսը հակառակ չլինելով այս ազգերի իրավունքներին, սակայն, հակառակ են ծրագրի ճճիշտ իմաստին, այսինքն՝ կովկասյան պրոլետարիատի շահերին:

Ալիներևորեն, թաղերի իրավունքները՝ և ծրագրի ճճիշտ իմաստը յերկու միանգամայն տարբեր մակարդակներ են: Այն ժամանակ, յերբ ծրագրի ճճիշտ իմաստը՝ արտահայտուած և պրոլետարիատի՝ զխտակաՆորին վերջինիս ծրագրուած ձևակերպված շահերը,— ազգերի իրավունքների մեջ կարող են արտահայտություն դառնել ամեն մի դասակարգի շահերը— բուրժուազիայի, արիստոկրատիայի, հոգևորականության և այլն՝ նայած այդ դասակարգերի ուժին ու ազդեցությանը: Այնտեղ՝ դործ ունենք մարքսիստի պարտականությունը: Այնտեղ՝ զանազան դասակարգերից բաղկացած ազգերի իրավունքների հետ: Ազգերի իրավունքներն ու սոցիալ-դեմոկրատիզմի սկզբունքները կարող են միմյանց այնպես ճակատակ լինել՝ կամ չլինել, ինչպես, ասենք, Խեռասյան բուրժը՝ լիվիդիատորների չարաբաստիկ կոնֆերենցիային: Նրանք պարզապես անհամեմատելի յեն:

Բայց սրանից հետևում է, վոր պատվարժան կոնֆերենցիան ամենամեծերի կերպով շփոթել և յերկու միանգամայն տարբեր բա-



Ներս Ստացվել է վոչ թե ազգային հարցի լուծում, այլ անմատչյուն, վորի հետևանքով ազգերի իրավունքներն ու սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքները միմյանց «հակառակ չեն», հետևաբար, ազգերի յուրաքանչյուր պահանջը կարող է համատեղվել պրոլետարիատի շահերի հետ, հետևաբար, ինքնորոշման ձգտող ազգերի վոչ մի պահանջը ծրագրի «ճիշտ իմաստին հակառակ չէ»:

Տրամաբանությանը չեն խղճացել...

Այս անմատչյան հողի վրա ել անել է լիկվիդատորների կոնֆերենցիայի այժմյանից սկսած հռչակավոր ախ վորոշումը, վորի համաձայն ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջը ծրագրի «ճիշտ իմաստին հակառակ չէ»:

Բայց լիկվիդատորների կոնֆերենցիան խախտում է վոչ միայն տրամաբանության որևէ քննելը:

Նա ուսուստանյան սոցիալ-դեմոկրատիայի առջև ունեցած իր պարտքն էլ է խախտում՝ սանկցիա տալով կուլտուր-ազգային ավտոնոմիային: Նա ամենավորոշակի կերպով խախտում է ծրագրի «ճիշտ իմաստը», վորովհետև հայտնի չէ, վոր ծրագրին ընդունող II համագումարը վնասակարեմ մերժել է կուլտուր-ազգային ավտոնոմիան: Ահա թե այս առթիվ ինչ է ասվել այդ համագումարում.

«Գոյրյառ (բուժդական)՝... Յես անբաժնյա եմ գտնում հատուկ այնպիսի հիմնարկների ստեղծումը, վորոնք ապահովելիս ազգություններին կուլտուրական զարգացման ապաստաններ, ուստի է առաջարկում եմ. § 8-ին ավելացնել — Ելիլ այնպիսի հիմնարկների ստեղծումը, վորոնք կապահովելին նրանց կուլտուրական զարգացման լիակատար ապաստաններ (դա, ինչպես հայտնի չէ, կուլտուր-ազգային ավտոնոմիայի բուժդյան ձևակերպումն է Ի. Սն.):»

Մարտիմովը մասնանշում է, վոր ընդունուր հիմնարկներն այնպես պետք է կազմակերպվեն, վորպեսզի նրանք ապահովեն նաև մասնավոր բաները: Ազգության կուլտուրական զարգացման ապաստաններն ապահովող վճչ մի նպասկ հիմնարկ հնարավոր չէ ստեղծել:

Յեղորով՝ Ազգության հարցում մենք կարող ենք ընդունել միայն բացառական առաջարկներ, այսինքն՝ մենք զեմ ենք ազգության նկատմամբ յեզոյ ամեն անտիկ ճնշումներին: Բայց մենք, իբրև սոցիալ-դեմոկրատներ, գործ չունենք այն բանի հետ, թե այս կամ այն ազգությունը վորպես այդպիսին արդյոք զարգանալու չէ, թե վոչ: Ես տարերային պրոցեսի բան ե:

Կույրով՝ Բունդի պատվիրակները միշտ նեղանում են, յերբ խոսք է լինում նրանց նայիտանիվի մասին: Այսինչ Բունդի պատվիրակի մտքում ուղղումը դուս նայիտանիտական ընույթի չէ: Մեզանից հարձակողական միջոցներ են պահանջում անգամ այն ազգություններին աշակցելու համար, վորոնք մասնանում են:

... Վորպես հետևանք՝ ԵՊուրյառի ուղղումը մերժված է մեծամասնությամբ՝ ընդգեմ յերեկո:

Այսպես, ուրեմն, պարզ է, վոր լիկվիդատորների կոնֆերենցիան

ծրագրի ճշիշտ իմաստին հակառակ՝ և զնացել ևս խախտել և ծրագիրը Այժմ լիկվիդատորները փորձում են արգարանալ՝ վկայակոչելով Ստոկհոլմի համագումարը, Վորը իրեն թե անկեցիա յև ավել կուլտուրազգային ավտոնոմիային Այսպես, Վլ. Կոսովսկին գրում և.

«Ինչպես հայտնի յև, Ստոկհոլմի համագումարում ընդունված պայմանագրով Բուճղի իրավունք և արժան պահպանելու իր ազգային ծրագիրը (մինչև վոր ազգային հարցը լուծվի՝ համախոսակցական համագումարում) Այս համագումարն ընդունել և, վոր ազգային-կուլտուրական ավտոնոմիան համակուսակցական ծրագրին համեմատյ զեզա չի հակառուս՞».

Բայց զուր են լիկվիդատորների փորձերը։ Ստոկհոլմի համագումարը մտքովն ևլ չի անցկացրել սանկցիա տալու Բուճղի ծրագրին, նա պարզապես համաձայնել և հարցը ժամանակավորապես առկախ թողնել կըտրիճ Կոսովսկին արիություն չի ունեցել ասելու ամբողջ հշմարտությունը։ Բայց փաստերը իրենք են խոսում իրենց մասին։ Ահա գրանք.

«Փայինն ուղղում և մտնում. «Ազգային ծրագրի հարցը առկախ և մնում՝ համագումարի կողմից Ըննարկված շինելու պահանջով» (ԹԻԵ—50 ձայն, դեմ—33), Մի նայն՝ ԲՆՆ և նշանակում—առկախ։

Նսխագրան՝ Յեթն մենք առում ենք, թե ազգային հարցն առկախ և մնում, ազա ալ նշանակում և, վոր Բուճղը մինչև հաջորդ համագումարը կարող և պահպանել ալ հարցի վերաբերյալ իր վճիռը»<sup>\*\*</sup> (Ընդգծումը մերն և։ Ի. Ս.)։

Ինչպես տեսնում ևք, համագումարը նույնիսկ չչի քննարկել Բուճղի ազգային ծրագրի հարցը,—նա պարզապես շառկախ և թողել ալ հարցը՝ Բուճղին իրեն թողնելով վճռելու իր ծրագրի բախտը մինչև հետևյալ ընդհանուր համագումարը։ Ուրիշ խոսքով ասած՝ Ստոկհոլմի համագումարը խուսափել և հարցից՝ չտալով կուլտուրա-ազգային ավտոնոմիայի գնահատականը վոչ ալս, վոչ ևլ ալս ուղղությամբ։

Մինչդեռ, լիկվիդատորների կոնֆերենցիան ամենավորոշակի կերպով զրադվում և զործի գնահատականով, կուլտուրա-ազգային ավտոնոմիան ընդունելի յև նանաչում և կուսակցության ծրագրի անունով սանկցիա յև տալիս նրան։

Տարբերությունն աչքի յև դարնում։

Այսպիսով, լիկվիդատորների կոնֆերենցիան, չնայած բանեցրած ըտր խորամանկություններին, ազգային հարցը վոչ մի քայլ առաջ չի շարժել։

Պոչ խաղացնել Բուճղի ու կովկասյան նացիոնալ-լիկվիդատորները առջև—սա ալս ամենն և, ինչի ընդունակ յեղավ կոնֆերենցիան։

\* Տես «Նաչա Զարյա», 1913 թ., № 9—10, էջ 120.

\*\* Տես «Նաչա Սլավո», № 8, 1906 թ., էջ 53:

## VII. ԱԶԳԱՅԻՆ ԼՄՐԵՇ ՌՈՒՍԱՍՏԱՆՆՈՒՄ

Մեզ մնում է ուրվագծել ազգային հարցի զբաղման լուծումը:

Մենք յեխում ենք այն բանից, զոր հարցը կարող է լուծվել Ռուսաստանի ընթացիկ մոմենտի հետ անխղիճորեն կապակցվելով միայն:

Ռուսաստանը ապրում է անցողիկ շրջան, յերբ «նորմալ», բասն-մանագրական» կյանքը տակավին չի հաստատվել, յերբ քաղաքական եզրամասը տակավին չի լուծված: Մերրիկների ու բարդությունների» որերը առաջներս են: Այստեղից՝ առկա և զալիք շարժումը, մի շարժում, զորը իրեն նպատակ է դնում լիակատար դեմոկրատացումը:

Այս շարժման կազակցությամբ էլ պետք է քննարկվի ազգային հարցը:

Այսպես ուրեմն, յերկրի լիակատար դեմոկրատացումը վորպես ազգային հարցի լուծման ճիմունք ու պայման:

Հարցը լուծելիս պետք է հաշվի առնել վոչ միայն ներքին, այլև արտաքին դրությունը: Ռուսաստանը զանվում է Յեվրոպայի ու Ասիայի միջև, Ավստրիայի ու Չինաստանի միջև: Անխուսափելի յե դեմոկրատիզմի առումն Ասիայում:

Իմպերիալիզմի առումը Յեվրոպայում պատահականություն չե: Կապիտալի համար Յեվրոպան նեղ և դառնում, և նա բուռն կերպով ձեռնառնում է զկալի ոտար յերկիրներ՝ վորոնելով նոր շուկաներ, եժան բանվորներ, գործադրման նոր կետեր: Բայց սա տանում է զկալի արտաքին բարդություններ ու պատերազմ: Վոչ վոք չի կարող ասել, թե Բալկանյան պատերազմը՝ բարդությունների վերջն է, և վոչ թե սկիզբը: Միանգամայն հնարավոր է ներքին և արտաքին կոնյունկտուրաների մի այնպիսի դուպակցություն, զորի պարագայում այս կամ այն ազգությունը Ռուսաստանում հարկ կհամարի զնեղ ու լուծել իր անկախության հարցը: Յեվ, իհարկե, մարքսիստների գործը չէ արգելքներ դնել այնպիսի զեպքերում:

Բայց սրանից հետևում է, զոր ուստական մարքսիստները յուր չին գնա առանց ազգերի ինքնորոշման իրավունքի:

Այսպես ուրեմն, իմպերատամ իրավունքը վերպես ազգային հարցի լուծման ամբողջութե մի կէս:

Այնուհետև: Ինչպես վարվել այն ազգերի հետ, վորոնք այս կամ այն պատճառով կզերազատեն մեալ ամբողջության շրջանակներում:

Մենք տեսանք, զոր կուլտուր-ազգային ազատամիտան անպետք և նախ, այն արհեստական ու անկենսունակ է, վորովհետև յենթագրում է արհեստականորեն միատեղել իրրև մի ազգ այնպիսի մարդկանց, վորոնց կյանքը, իրական կյանքը, անջատում և պետության գանազան ծայրերն է նետում:

Յերկրորդ, այն մղումն է զեպի նացիոնալիզմ, վորովհետև տանում է զեպի՝ մարդկանց ըստ ազգային կուրիաների բասմանազատվելու՝ տեսակետը, զեպի ազգեր շեղումակերպելու՝ տեսակետը, զեպի «ազգային առանձնահատկությունները» պահպանելու՝ և պատվաստելու տեսակետը,— մի գործ, վորը ընամ սազական չի սոցիալ-դեմոկրատիային:

Դա պատահականություն չէ, վոր Մորավյան սեպարատիստները, ուսյաբարտում, անշատվելով զերմանական ս.-դ. պատգամավորներից, միավորվեցին մորավյան բուրժուական պատգամավորների հետ՝ վորպես մի՝ աշտես սասած՝ մորավյան եկոյ: Պատահականություն չէ և այն, վոր Բուռդին պատկանող ուսական սեպարատիստները խրվեցին նացիոնալիզմի մեջ՝ փառարանելով «շարաթ որն» ու «ժարգոնը»: Դուժմայում բունզական պատգամավորներ զեռես չկան, բայց Բուռդի ուսյոնում կա հրեական կղերական-ոհակցիոն համայնք, վորի «գեկավարող հիմնարկներում» Բուռդը կազմակերպում է հրեական բանվորների ու բուրժուաների, առայժմ, «միավորում»<sup>6</sup>: Այսպես է կուլտուր-ազգային ավտոնոմիայի տրամաբանությունը:

Այսպես ուրեմն, ազգային ավտոնոմիան հարցը չի լուծում:

Վերն և յեղք:

Միակ հիշտ լուծումը՝ դա—մարգային ավտոնոմիան է, ախպիսի պարզորոշված միավորների ավտոնոմիան, ինչպիսիք են Ահաստանը, Լիտվան, Ուկրաինան, Կովկասը և այլն:

Մարգային ավտոնոմիայի առավելությունը, ամենից առաջ, այն է, վոր նրա առկայությունը զեպում հարկ է լինում գործ ունենալ վոչ թե առանց տերիտորիայի մի ֆիզիկայի հետ, այլ վորոշ տերիտորիայի վրա ապրող վորոշ ընակչություն հետ:

Ապա, նա մարդկանց ըստ ազգերի չի սահմանազատում, նա չի արտաբնդում ազգային միջնապատերը,— ընդհակառակը, նա միայն քանդում է այդ միջնապատերը և ընակչությունը միավորում է նրա համար, վորպեսզի նանապար բաց անի մի այլ տեսակի սահմանազատման, ըստ դասակարգերի սահմանազատման համար:

Վերջապես, նա հնարավորություն է տալիս ամենալավ կերպով ոչ-տաղործելու մարդի ընական հարստությունները և զարգացնելու արտադրողական ուժերը՝ չսպասելով ընդհանուր կենտրոնի վերուներին, — ֆունկցիոններ, վորոնք հատուկ չեն կուլտուր-ազգային ավտոնոմիային:

Այսպես ուրեմն, մարգային ավտոնոմիան, վորպես ազգային հարցի լուծման անհրաժեշտ մի կես:

<sup>6</sup> «Հաշվեալություն Բուռդի VIII կոնֆերենցիայի մասին», համայնքի վերաբերյալ բանաձևի վերջը:

Կասկած չկա, Վոր մարդերից վոչ մեկը չունի ազգային միապաշար միասնակություն, Վորովհետև նրանցից ամեն մեկի մեջ ցրված են ազգային փոքրամասնություններ: Այսպես են հրեաները՝ Լեհաստանում, շատիշները՝ Արևմտյան, հունները՝ Կովկասում, լեհերը՝ Ուկրաինայում և այլն: Ուստի՝ կարելի չէ յերկյուղ կրել, Վոր փոքրամասնությունները կենսովն ազգային մեծամասնությունների կողմից: Բայց յերկյուղը միայն այն դեպքում հիմք ունի, յեթե յերկիրը մեծ հին կարգերում: Տվեք յերկրին լիակատար ղեմնկրատիվ, — և յերկյուղ կրելը կզրկվի Վորեն հիմքից:

Առաջարկում են չազկապել ազգային ցիրուցան փոքրամասնությունները Վորպես մեկ միասնական ազգային միություն: Բայց փոքրամասնությունները կարիք ունեն վոչ թե արհեստական միության, այլ սեռա իրավունքների՝ իրենց վայրում: Ի՞նչ կարող և տալ նրանց այդպիսի միությունը՝ առանց լիակատար ղեմնկրատացման: Կամ՝ ազգային միության ի՞նչ անհրաժեշտություն կա՝ լիակատար ղեմնկրատացման դեպքում:

Ազգային փոքրամասնությանը առանձնապես ինչն է հուզում:

Փոքրամասնությունը զժգոհ է վոչ թե ազգային միության բացակայությունից, այլ մայրենի լեզվի իրավունքի բացակայությունից: Թև այլ ավելք նրան ոգտվելու մայրենի լեզվից, — և զժգոհությունն ինքնիրեն կանցնի:

Փոքրամասնությունը զժգոհ է վոչ թե արհեստական միության բացակայությունից, այլ մայրենի դպրոցի բացակայությունից՝ իրենց մոտ: Տվեք նրան այդպիսի դպրոց, — և զժգոհությունը կզրկվի Վորեն հիմքից:

Փոքրամասնությունը զժգոհ է վոչ թե ազգային միության բացակայությունից, այլ խղճի, տեղափոխության ազատության բացակայությունից և այլն: Տվեք նրան այդ ազատությունները, — և նա կզազարի զժգոհ լինելուց:

Այսպես ուրեմն՝ ազգային իրավեհավաստությունը իր բոլոր անսովորով (լեզու, դպրոցներ և այլն) — Վորպես ազգային հարցի լուծման անհրաժեշտ կիս: Յերկրի լիակատար ղեմնկրատացման հիման վրա տըրված և ազգային արտոնությունների առանց բացառության բոլոր անսովորեն ու ազգային փոքրամասնությունների իրավունքների Վորեն անշուտը կամ սահմանափակումը արդելոց համապետական որենք:

Սա և միմիայն սակարող է լինել փոքրամասնության իրավունքների իրական, և վոչ թե թղթե ապահովությունը:

Կարելի չէ վիճարկել կամ չվիճարկել արամարանական կապի գոյությունը կազմակերպված Ֆեդերալիզմի ու կուլտուր-ազգային ավտոնոմիայի միջև: Բայց չի կարելի վիճարկել այն, Վոր վերջինս նպաստա-

վոր մթնոլորտ և ստեղծում սահման չունեցող ֆեդերալիզմի համար, վորը փոխարկվում և կապերի լիակատար խզման, սեպարատիզմի, Յեթի չեխերն Ավստրիայում և բուճակահանները Ռուսաստանում, բունը սկսելով ավտոնոմիայից և հետո անցնելով ֆեդերացիայի՝ վերջացրին սեպարատիզմով, — ապա սրանում, անկասկած, խոշոր դեր խնայաց նացիոնալիստական այն մթնոլորտը, վորը բնականորեն տարածում և ազգային ավտոնոմիան: Դա պատահականություն էլ չէ, վոր ազգային ավտոնոմիան ու կազմակերպական ֆեդերացիան ձեռք-ձեռքի աված են ընթանում: Յեզ այդ հասկանալի յե թե մեկը և թե մյուսը պահանջում են սահմանադատում ըստ ազգությունների, թե մեկը և թե մյուսը յենթադրում են կազմակերպումն ըստ ազգությունների, նմանությունն անկասկած է: Տարբերությունը միայն այն է, վոր այնտեղ առհասարակ բնակչությունն են սահմանադատում, իսկ այստեղ՝ սոցիալ-դեմոկրատ բանվորներին:

Մենք գիտենք, թե ինչի յե հանդեպում բանվորներին ըստ ազգությունների սահմանադատելը: Բանվորական միասնական կուսակցություն քայքայում, միությունների բաժանումն ըստ ազգությունների, ազգային բազիլումների սրում, ազգային շարայիքի խնդրություն, կատարյալ բարոյալքում սոցիալ-դեմոկրատիայի շարքերում, — սրանք են կազմակերպական ֆեդերալիզմի արդյունքները: Այս մասին պերահատուկ բարով վկայում են Ավստրիայի սոցիալ-դեմոկրատիայի պատմությունը և Բուճակ գործունեությունը Ռուսաստանում:

Միակ միջոցը սրա դեմ՝ ինտերնացիոնալության սկզբունքներով կազմակերպելն է:

Ռուսաստանի բոլոր ազգությունների բանվորներին տեղերում վորպես միտոմեալում ու ավելողական կուլիտիվներ համախմբելը, այդպիսի կոլիտիվները վորպես միասնական կուսակցություն համախմբելը — այս է ինչերը: Ըստինքյան հասկանալի յե, վոր կուսակցության այսպիսի կառուցումը վոչ թե բացասում, այլ յենթադրում է մտղերի լայն ավտոնոմիա՝ կուսակցական միասնական մտղղությունն ներսում:

Կովկասի վորձը ցույց է տալիս կազմակերպության այսպիսի արտի մտղղը նպատակահարմարությունը: Յեթե կովկասցիներին հաջողվեց հաղթահարել ազգային բազիլումները հայ ու թաթար բանվորներին միջև, յեթե նրանց հաջողվեց բնակչությունն ապահովել կոտորածի ու փոխողարձ հրաձգությունների հնարավորություններից, յեթե Բաղվում, ազգային խմբերի այդ կալիյոսկոպում, այժմ արդեն անհնարին են ազգային ընդհարումները, յեթե այնտեղ հաջողվեց բանվորներին ներգրավել հուժկու շարժման միասնական հուճի մեջ, — ապա սրանում վերջին դեր յիստաց կովկասյան սոցիալ-դեմոկրատիայի ինտերնացիոնալ կառուցվածքը:

Կազմակերպության տիպն ազդոււմ է ժող միայն գործնական աշխատանքի վրա: Այն անհնչելի կնիք է դնում բանվորի ամբողջ հոգեկան կյանքի վրա: Բանվորն ապրում է իր կազմակերպության կյանքով, նա այնտեղ հոգեպես աճում է ու դաստիարակւիւմ: Յն՞վ ահա, շփոխելով իր կազմակերպության հետ և ամեն անդամայնտեղ հանդիպելով իր աշխատի ընկերներին, նրանց հետ միասին ընդհանուր սլաքաբանդակով ընդհանուր կուկիտիվի ղեկավարութեամբ, — նա խորապես տոգորւում է այն մտքով, զոր բանվորներն ամենից առաջ՝ մի դասակարգային ընտանիքի անդամներ են, սոցիալիզմի միասնական բանակի անդամներ: Իսկ սա չի կորոզ հսկայական դաստիարակչական նշանակութեան չունենալ բանվոր դասակարգի լայն խափերի համար:

Ուստի կազմակերպության ինտերնացիոնալ տիպն ընկերական զգացմունքներն մի դպրոց է, մեծագույն ազխտացիա յն՝ հողուտ ինտերնացիոնալիզմի:

Նույնը չէ ըստ ազգութեանների կազմակերպվելը: Կազմակերպվելով ազգութեան հիմունքով՝ բանվորները պարզակվում են ազգային կեղևների մեջ՝ անջրպետվելով միմյանցից կազմակերպական միջնապատերով: Ընդգծվում է ժող թե այն, ինչ քնդհանուր է բանվորների միջև, այլ այն, ինչով նրանք տարբերվում են միմյանցից: Այստեղ բանվորն ամենից առաջ իր ազգի անդամն է, — հրեա յե, լեհ է և այլն: Զարմանալի չէ, զոր կազմակերպութեան մեջ ազգային ֆեդերալիզմի կերտուածը ազգային առանձնացման ժողի յե դաստիարակում բանվորների մեջ:

Ուստի և կազմակերպութեան ազգային տիպը ազգային սահմանափակութեան ու անշարժութեան դպրոց է:

Այսպիսով, մեր առջև կան կազմակերպութեան սկզբունքներն յերկու տարբեր տիպեր, այն է՝ ինտերնացիոնալ համախմբածութեան տիպը և բանվորներին ըստ ազգութեանների կազմակերպորեն բաժանաշարակուծ տիպը:

Այս յերկու տիպը հաշտեցնելու փորձերը մինչև այժմ հաջողութեան չեն սանցել:

Այստեղիկան սոցիալ-դեմոկրատիայի հաշտվողական կանոնադրութեանը, զոր մշակվից Վիմբերգում 1897 թվականին, որում կախված մնաց: Այստեղիկան կուսակցութեանը բաժան-բաժան յիդով մասերի՝ իր հետևից տանելով միութեանները: «Հաշտեցումը» ժող միայն ուսուցիչ էր դուրս դալիս, այլև ֆրասակուր: Շտրասերն իրավացի յե՝ պնդելով, թե «սեպարատիզմը իր առաջին հաղթանակը ստացավ Վիմբերգի պարտայտագում»<sup>9</sup>:

<sup>9</sup> Տե՛ս նրա «Der Arbeiter und die Nation», 1912 թ.:



Նույն այդ բանն և և Ռուսաստանում: Բուճդի ֆեդերալիզմի հետ Ստոկհոլմի համագումարում կայացած «հաշտությունը» կատարյալ կրախով վերջացավ: Բուճդը վիժեցրեց Ստոկհոլմի կոմպրոմիսը: Ստոկհոլմից հետո առաջին խսկ որից սկսած Բուճդը խոչընդոտ դարձավ բանվորներին տեղերում վորպես միասնակամ այնպիսի կազմակերպություն միաձուլելու նանապարհին, զորը ներառում է բոլոր ազգությունների բանվորներին: Յեւ Բուճդը համառորեն շարունակում էր իր սեպարատիստական տակտիկան՝ հնայած այն բանին, զոր թե 1907 և թե 1908 թվականին ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիան միջանի անգամ պահանջել է, զոր բոլոր ազգությունների բանվորների միջև, վերջապես, իրականացվի միասնությունը վարից<sup>26</sup>: Բուճդը, զոր սկսել էր կազմակերպական ազգային ավտոնոմիայից, իրականում ֆեդերացիայի անցավ նրա համար, վորպեսզի վերջացնի կապերի լիակատար խզումով, սեպարատիզմով: Իսկ կապերը խզելով ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայից՝ նա վերջինիս մեջ մտցրեց տարամություն ու կազմալուծում: Հիշենք, թեկուզ, Յագելլոյի գործը<sup>27</sup>:

Ուստի և՛ «հաշտեցման» ուղին պետք է թողնել, զորպես ուտոպիկական ֆասսակար ուղի:

Յերկուսից մեկը՝ կամ Բուճդի ֆեդերալիզմը, և այն ժամանակ— ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիան վերակառուցվում է՝ բանվորներին ըստ ազգությունների բաժանանազատելու՝ սկզբունքներով: Կամ կազմակերպության ինտերնացիոնալ տիպ, և այն ժամանակ— Բուճդը, կոճկասյան, լատիշական ու լեհական սոցիալ-դեմոկրատիայի որինակով, վերակառուցվում է տերիտորիալ ավտոնոմիայի սկզբունքներով՝ նանապարհ բաց անելով՝ հրեա բանվորներին Ռուսաստանի մյուս ազգությունների բանվորների հետ անմիջականորեն միավորելու գործի համար:

Միջին նանապարհ չկա. սկզբունքները հաղթում են, և զոչ թե «հաշտվում»:

Այսպես ուրիմն՝ բանվորների ինտերնացիոնալ համախմբման սկզբունքը, վորպես ազգային հարցի լուծման անհրաժեշտ կետ:

<sup>26</sup> «Տոսվեչենիե» № 18 3-5,

1913 թ. մարտ—մայիս.



ՌՍԴԻԿ Համառուսացան VII (ապրիլյան) կոնֆերենցիայում 1917 թ.  
ապրիլի 29-ին (մայիսի 12-ին)<sup>38</sup>

Հարկազուր եր ազգային հարցի վերաբերյալ ընդարձակ զեկուցում ներկայացնել, բայց զորովհետև ժամանակը քիչ է, յես պետք է կրճատեմ զեկուցումս:

Նախքան բանաձևի նախագծին անցնելը՝ անհրաժեշտ է սահմանել մի քանի նախադրյալներ: Ի՞նչ է ազգային ճնշումը: Ազգային ճնշումը՝ դա ճնշված ժողովուրդների շահագործման ու թալանի այն սխտեմն է, ճնշված ազգությունների պետականության իրավունքի սահմանափակման այն բանի միջոցները, զոր կիրառում են իմպերիալիստական շրջանները: Ամբողջությամբ վերցրած այս ամենը տալիս է այն քաղաքականության պատկերը, զորն ընդունված է անվանել ազգային ճնշման քաղաքականություն:

Առաջին հարց՝ զորո՞նք են այն դասակարգերը, զորոնց զրա հենվելով՝ այս կամ այն իշխանությունը կիրառում է ազգային ճնշման իր քաղաքականությունը: Այս հարցի լուծման համար անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ՞ու տարրեր պետությունների մեջ գոյություն ունեն ազգային ճնշման տարրեր ձևեր, թե ինչ՞ու ազգային ճնշումը մի պետություն մեջ ավելի ծանր ու կոպիտ է, քան մյուսում: Որինակ, Անգլիայում ու Ավստրո-Հունգարիայում ազգային ճնշումը յերբեք չի ստացել ջարդի ձևեր, բայց այն գոյություն է ունեցել ճնշված ժողովուրդների ազգային իրավունքների սահմանափակման ձևով, մինչդեռ Ռուսաստանում այն հաճախ ստանում է ջարդերի ու կոտորածի ձև: Իսկ մի քանի պետություններում բնավ գոյություն չունեն ազգային փոքրամասնությունների դեմ ուղղված հատուկ միջոցներ: Որինակ, ազգային ճնշում չկա Շվեյցարիայում, զորտեղ ազատորեն ապրում են ֆրանսացիները, իտալացիները, գերմանացիները:

Ապա ինչ՞ով բացատրել դեպի ազգությունները յեղած տարրեր վերաբերմունքը տարրեր պետություններում:

Այդ պետությունների դեմոկրատականության աստիճանի տարբերություններ: Յերբ Ռուսաստանում առաջվա տարիներում պետական

իշխանության գլուխ կանգնած եր հողային արխատկրատիան, ազգային ճնշումը կարող եր ընդունել և իրոք ընդունում եր կոտորածի ու քար- գերի աշխանդակ ձևեր: Անդլիայում, վորտեղ գեմոկրատականության ու քաղաքական ազատության վորոշ աստիճան կա, ազգային ճնշումը պակաս կողիտ բնույթ ունի: Ինչ Շվեյցարիային և վերարերբում, ապա նա մոտենում և գեմոկրատական հասարակության, և նրանում փոքր ազգերն ունեն շատ թե քիչ լրիվ ազատության: Մի խոսքով, վորքան գեմոկրատական և յերկիրը, այնքան թույլ և ազգային ճնշումը, և ընդհակառակը: Յեվ վորովհետև գեմոկրատականացում ասելով մենք հասկանում ենք իշխանության գլուխ կանգնած վորոշ դասակարգերի առկայությունը, ապա այս տեսակետից կարելի չե ասել, թե վորքան իշխանությանը մտա և հին հողային արխատկրատիան, ինչպես հին ցարխատական Ռուսաստանումն եր, այնքան ուժեղ և ճնշումն ու այնքան աշխանդակ են նրա ձևերը:

Սակայն, ազգային ճնշումը պահողը միայն հողային արխատկրատիան չե: Նրա կողքին գոյություն ունի մի այլ ուժ— իմպերիալիստական խմբերը, վորոնք ժողովուրդներին ստրկացնելու՝ զազալմաներում յուրացրած մեթոդները փոխադրում են նաև իրենց յերկրի ներսը, և այսպիսով դառնում են հողային արխատկրատիայի բնական դաշնակիցները: Նրանց հետեից ընթանում են մանր բուրժուազիան, ինտելիգենցիայի մի մասը, բանվորական վերնախավի մի մասը, վորոնք նույնպես ողտվում են թալանի պտուղներից: Այսպիսով ստացվում և ազգային ճնշումը պահող սոցիալական այնպիսի ուժերի մի ամբողջ խումբ, վորոնց գլուխ և կանգնած հողային ու Ֆինանսական արխատկրատիան: Իրապես գեմոկրատական կարգեր ստեղծելու համար ամենից առաջ անհրաժեշտ և մաքրելի գետինը և հեռացնել քաղաքական բնվից այս խումբը:

(Կարդում ե բացածևի սեֆտր):

Առաջին հարց՝ ինչպես տնորինել ճնշված ազգերի քաղաքական կյանքը: Այս հարցին հարկավոր և պատասխանել, վոր Ռուսաստանի կազմի մեջ մանող ճնշված ժողովուրդներին պետք և իրավունք ընձեռվի, վորպեսզի իրենք վճռեն այն հարցը, թե արդյոք նրանք ուզում են մնալ ուսաստանյան պետության կազմի մեջ, թե՞ զատվել վորպես ինքնուրույն պետություն: Այժմ մեր առջևն և կոնկրետ մի կոնկրետ ֆինլանդական ժողովրդի ու ժամանակավոր կառավարության միջև: Ֆինլանդական ժողովրդի ներկայացուցիչները, սոցիալ-գեմոկրատիայի ներկայացուցիչները ժամանակավոր կառավարության միջև: Ֆինլանդական ժողովրդի ներկայացուցիչները, վորոնցով նա ողտված եր Ռուսաստանին միացվելուց առաջ: Ժամանակավոր կառավարությունը մերժում և այդ՝ Ֆինլանդական ժողովրդին սուվերեն չճանանչելով: Ո՞ւմ

կողմը մենք պետք է բռնենք: Ակներև և, Ֆինլանդական ժողովրդի կողմը, վարովհետև աներևակայելի յե ընդունել, թե վորևե ժողովուրդ բռնի կերպով պետք է պահվի միասնական պետութիւն շրջանակներէ մեջ: Առաջագրելով ժողովուրդներէ ինքնորոշման իրավունքի սկզբունքը՝ մենք զբռնող իսկ պայքարն ազգային ճշման զեմ հասցնում ենք իմպերիալիզմի, մեր ընդհանուր թշնամու զեմ պայքարելու բարձրութիւնը: Այդ շանկու գեղջոււմ մենք կարող ենք ընկնել այն մարդկանց դրութիւն մեջ, վորոնք ջուր են ամուս իմպերիալիստներէ ջրաղացին: Յեթե մենք, սոցիալ-դեմոկրատներս, մերժելինք Ֆինլանդական ժողովրդին՝ անշատման վերաբերյալ իր կամքը հայտնելու իրավունքը և այդ կամքը կենսագործելու իրավունքը, ապա մենք զբռնող կլինելինք ցարիզմի քաղաքականութիւնը շարունակողներէ դրութիւն մեջ:

Ազգերի ազատ անջատման իրավունքի հարցը անթույլատրելի յե շփոթել ազգի՝ այս կամ այն մոմէնտում անջատվելու պարտադրւած չհարցի հետ: Պրոլետարիատի կուսակցութիւնն այս հարցը պետք է լուծի յարաքանչյուր աւանձին զեղջոււմ միանգամայն ինքնուրույն կերպով՝ նայած իրազրութիւնը: Ընդունելով ճշմարտ ժողովուրդներէ անջատման իրավունքը, իրենց քաղաքական բախտը վորոշելու իրավունքը՝ մենք զբռնող հանգերձ չենք լուծում այն հարցը, թե այս-ինչ ազգերը սովյալ մոմէնտում արդյոք պե՞տ է անջատվեն ռուսաստանյան պետութիւնէ: Յես կարող եմ ընդունել մի ազգի անջատվելու իրավունքը, բայց այդ զեւ չի նշանակում, թե յես նրան պարտաժողովրդի այդ անելի ժողովուրդը անջատվելու իրավունք ունի, բայց նա, նայած պայմաններին, այդ իրավունքից կարող է և չզգտվել: Այսպիսով, մեզ մնում է անջատման թեր կամ անջատման զեմ ազդեցիկ անելու ազատութիւնը՝ նայած պրոլետարիատի շահերին, պրոլետարական հեղափոխութիւն շահերին: Այսպիսով, անջատման հարցը ամեն մի աւանձին զեղջոււմ ինքնուրույն կերպով է լուծվում՝ նայած իրազրութիւնը, և հենց այս պատճառով էլ անջատման իրավունքի ճանաչման հարցը չպետք է շրջափոթել այս կամ այն պայմաններում անջատվելու նպատակահարմարութիւն հետ: Յես, որինակ, անձամբ զեմ կարտահայտվելի Անդրկովկասի անջատմանը՝ նկատի ունենալով ընդհանուր զարգացումը Անդրկովկասում ու Ռուսաստանում, պրոլետարիատի պայքարի վորոշ պայմանները և այլն: Բայց յեթե Անդրկովկասի ժողովուրդները այնուամենայնիվ պահանջելին անջատվել, ապա նրանք, հարկավ, կանջատվելին, և նրանք մեր կողմից ընդդիմութիւն չեյին հանդիպի:

(Մտաւեցակում է կարգայ բաճանկի տեսք):

Այնուհետև Ի՞նչպես վարվել այն ժողովուրդներէ հետ, վորոնք կկամենան մնալ ռուսաստանյան պետութիւն շրջանակներում: Յեթե ժողովուրդներէ մեջ անջատարութիւն է յեղել զեպի Ռուսաստանը, ապա

նա անվել է, ամենից առաջ, ցարիզմի քաղաքականությունը: Քանի զոր ցարիզմը այլևս չկա, այլևս չկա ճնշման նրա քաղաքականությունը, պետք է թուլանա անգոտառությունը, պետք է անի ձգտումը դեպի Ռուսաստանը: Յես կարծում եմ, զոր ժողովուրդների՝ 16-ը ցարիզմի տաղալիքուց հետո չի կամենա անջատվել Այս պատճառով կուսակցությունն առաջարկում է մարդային ավտոնոմիաներ կազմակերպել այն մարզերի համար, զորոնք չեն ցանկանա անջատվել և զորոնք տարրերվում են կենցաղի, լեզվի առանձնահատկություններով, ինչպես են՝ օրինակ, Անդրկովկասը, Խուրքեստանը, Ուկրաինան: Այսպիսի ավտոնոմ մարզերի աշխարհադրական սահմանները բնակչությունն ինքն և զորոչում համապատասխան՝ անտեսություն, կենցաղի պայմաններին և այլն:

Ի հակադեմո մարդային ավտոնոմիայի՝ դոյությունն սենի մի այլ պլան, զորը վաղուց ի վեր հանձնարարում են Բուռնոն ու, ամենից առաջ, Շարինգերը և Բաուերը, զորոնք առաջադրում են կուլտուր-ազգային ավտոնոմիայի սկզբունքը: Յես զանում եմ, զոր այս պլանն անհնարանի չի սոցիալ-դեմոկրատիայի համար: Այդ պլանի էյությունը հետևյալն է. Ռուսաստանը պետք է վերածվի ազգությունների միություն, իսկ ազգերը — այսպիսի անձերի միություն, զորոնք ի մի յեն հավաքված զորպես միասնական հասարակություն՝ անկախ նրանից, թե պետություն զոր շրջաններում են ապրում: Բայր ուսաները, բոլոր հայերը և այլն, անկախ տերիտորիայից, կազմակերպվում են զորպես իրենց առանձնակի ազգային միություններ և արդեն հետո մտնում են ամբողջ Ռուսաստանի ազգերի միություն մեջ: Այս պլանը վերին աստիճանի անհարմար ու աննպատակահարմար եւ Բանն այն է, զոր կապիտալիզմի դարգացումը ցրել, ազգերից պոկել է անձերի ամբողջ խմբեր, զորոնք ցիրուցան են յեղել Ռուսաստանի զանազան անկյուններում: Տեսեսական պայմանների գորություն ստեղծված ազգային ցրվություն պարազայում ի մի հաղաքել տվյալ ազգերի առանձին անձերի՝ նշանակում է զբաղվել արհեստականորեն ազգ կազմակերպելու գործով, ազգ կառուցելով: Իսկ զբաղվել մարդկանց ի մի հավաքելով զորպես ազգերի՝ նշանակում է կանգնել նացիոնալիզմի տեսակետի վրա: Բուռնոնի առաջադրած այս պլանին սոցիալ-դեմոկրատիան չի կարող հավանություն տալ: Այդ պլանը 1912 թվականին մեթվեց մեր կուսակցություն կոնֆերենցիայում<sup>29</sup> և ընդհանրապես, ս.-դեմոկրատական շրջաններում, Բուռնոնի բացառությունը, ժողովրդականություն չի վայելում: Այս պլանը այլ կերպ կոչվում է կուլտուրական ավտոնոմիա, զորովհետև ազգին հետաքրքրող բաղադրան հարցերից զատում է զուտ մշակութային հարցերի խումբը և զրանք տալիս է ազգային միությունների ձեռքը: Այդպիսի զատման յեղակեան այն՝ զբույթն է, թե կուլտուրան ազգերին միազորում է զորպես միասնական ամբողջություն: Յենթադրվում է, թե ազգի

ընդերքում կան, մի կողմից, ազգը պատակտող շահեր, որինակ, անտեսական շահերը, և, մյուս կողմից, ազգը վորպես մի ամբողջութուն ի մի հավաքող շահեր, և հենց այդպիսի հարց և կուլտուրական ավտոնոմիայի հարցը:

Վերջապես, մեում և ազգային փոքրամասնութունների հարցը: Ներանց իրավունքները պետք և հատկապես պաշտպանվին: Այդ պատճառով կուսակցութունը պահանջում և լիակատար իրավահավասարութուն դպրոցական, կրոնական և այլ հարցերի վերաբերմամբ, պահանջում և վերացնել ազգային փոքրամասնութունների համար յեղած ամեն տեսակի սահմանափակումները:

Կա § 9-ը, վորն ազգերի իրավահավասարութուն և սահմանում: Նրա կիրառման համար անհրաժեշտ պայմանները կարող են լինել միայն ամբողջ հասարակութան լիակատար դեմոկրատացման պայմաններում:

Մենք պետք և լուծենք նաև այն հարցը, թե տարրեր ազգերի պրոլետարիատն ինչպես կազմակերպել վորպես մի ընդհանուր կուսակցութուն: Մի պլանն և— բանվորները կազմակերպվում են ըստ ազգութունների՝ ինչքան՝ ազգ, այնքան ևլ կուսակցութուն: Սոցիալ-դեմոկրատիան այս պլանը մերժել և: Պրակտիկան ցույց և տվել, վոր տվյալ պետութան պրոլետարիատի ըստ ազգութունների կազմակերպվելը տանում և միայն դեպի դասակարգային համերաշխութան զաղափարի կործանումը: Տվյալ պետութան բոլոր ազգերի բոլոր պրոլետարները կազմակերպվում են վորպես մի անբաժան պրոլետարական կուլեկտիվ:

Այսպես ուրեմն, ազգային հարցի վերաբերմամբ մեր տեսակետը հանգում և հետևյալ զրույթներին՝ ա) ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ճանաչում, բ) մարդային ավտոնոմիա՝ տվյալ պետութան սահմաններում մնացող ժողովուրդների համար, գ) ազգային փոքրամասնութունների համար՝ նրանց ազատ զարգացումն ապահովող հատուկ որևնքներ, դ) միասնական պրոլետարական անբաժան կուլեկտիվ, միասնական կուսակցութուն՝ տվյալ պետութան բոլոր ազգութունների պրոլետարների համար:

### ՅԵՉԲԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ

Յերկու բանաձևն ևլ ընդհանուր ու ամբողջական առումով նման են իրար: Ընդ. Պյատակովը մեր բանաձևից արտազրել և բոլոր կետերը, բացի մի կետից— անջատման իրավունքի ճանաչումը: Յերկուսից մեկը՝ կամ մենք ժխտում ենք ազգերի անջատման իրավունքը, և այդ ուղղակի պետք և ստել,— կամ մենք այդ իրավունքը չենք ժխտում: Այժմ Յինչանդիայում կա մի շարժում, վորի նպատակն և ազգային ազատութան ապահովութունը. կա նույնպես Ժամանակավոր կառավարու-

թյան պայքարը զրա ղեմ շարք ե ծագում, թե ում պետք ե պաշտպանել: Կամ մենք ժամանակավոր կառավարության քաղաքականության կողմն ենք, Ֆինլանդիան բռնի կերպով պահելու ե նրա իրավունքները մինիմումի հասցնելու կողմը, ե այն ժամանակ մենք աննկրթութիւններ ենք, վորովհետեւ մենք ջուր ենք ածում ժամանակավոր կառավարության ջրաղացին, կամ մենք Ֆինլանդիայի անկախության կողմն ենք: Այստեղ պետք ե վորոշակի արտահայտվել մեկի կամ մյուսի ոգտին, անհնարին ե սահմանափակվել միայն իրավունքները հավաստելով: Կա շարժում հանուն Բուլանդիայի անկախության: Ո՞ւմ կողմն ենք մենք, ընկերներ: Կամ մենք Բուլանդիայի կողմն ենք, կամ անգլիական կայսրության կողմը: Յեղ յե հարցնում եմ, — կյանքը ինքն ել հարցնում ե, — արդո՞ւք մենք այն ժողովուրդներն կողմն ենք, վորոնք ճշման ղեմ են պայքարում, թե՞ այն դասակարգերի կողմը, վորոնք նրանց ճշում են: Մենք ասում ենք՝ սոցիալ-դեմոկրատիան, վորքան վոր նա սոցիալիստական հեղափոխության կուրս ե բռնել, պետք ե աջակցի ժողովուրդների այն հեղափոխական շարժմանը, վորն ուղղված ե իմպերիալիզմի ղեմ: Կամ մենք զանում ենք, վոր մենք անհրաժեշտորեն պետք ե թիկունք ստեղծենք սոցիալիստական հեղափոխության ավանգարդի համար՝ հանձնինս ազգային ճշման ղեմ բարձրացող ժողովուրդների, — ե այն ժամանակ մենք կամուրջ ենք զցում Արևմուտքի ու Արևելքի միջև, — ե այն ժամանակ մենք իրոք համաշխարհային սոցիալիստական հեղափոխության կուրս ենք բռնում. կամ մենք չենք անում այդ բանը, — ե այն ժամանակ մենք մեկուսացած ենք դուրս դալիս. այն ժամանակ մենք հրաժարվում ենք ճշված ազգությունների ընդերքում յեղած ամեն տեսակի հեղափոխական շարժում իմպերիալիզմի վոճնչացման նպատակով ողտազորմելու տակտիկայից: Մենք պետք ե աջակցենք իմպերիալիզմի ղեմ ուղղված ամեն տեսակի շարժման: Հակառակ դեպքում՝ ի՞նչ կտան մեզ ֆինլանդական բանվորները: Ընկերներ Պյատալոնը ու Ջեյթինսկին մեզ ասում են, թե ազգային ամեն մի շարժում ոհակցիոն շարժում ե: Ընկերներ, սա եիշտ չե: Մի՞թե Բուլանդիայի շարժումն անգլիական իմպերիալիզմի ղեմ դեմոկրատական մի շարժում չե, վորը հարված ե հասցնում իմպերիալիզմին: Յեղ այդ շարժմանը մի՞թե մենք չպետք ե աջակցենք...

ԳՅՊԵՐՈՒՄ՝ Պետերբուրգի եւամտազմայն

յեղ ե մտառ: ստատյան կամճեռնցիտ

1917 թ. ապրիլից, ԳՅՊ (ուսպեհեռո), 1025 թ.

(1918թ.)

Ազգային հարցը ինքնարավ, մի անգամ ընդմիջտ տրված մի բան չեւ Գոյութուն ունեցող հասարակակարգի փոխակերպման վերաբերյալ ընդհանուր հարցի միայն մի մասը հանդիսանալով՝ ազգային հարցը ամբողջապես վորոշվում և սոցիալական իրադրության պայմաններով, յերկրի իշխանության բնույթով և, առհասարակ, հասարակական զարգացման ամբողջ ընթացքով: Սա առանձնապես ցայտուն արտահայտվում և Ռուսաստանի հեղափոխության ժամանակաշրջանում, յերբ ազգային հարցն ու ազգային շարժումը Ռուսաստանի ծայրամասերում տրագոսրեն և բոլորի աչքի առաջ փոխում են իրենց բովանդակութունը՝ նայած հեղափոխության ընթացքին ու յեղին:

### 1. ՓԵՏՐՎԱՐԹԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Ռուսաստանի բուրժուական հեղափոխության դարաշրջանում (սկսած 1917 թ. փետրվարից) ազգային շարժումը ծայրամասերում կրում էր բուրժուական-ազատագրական շարժման բնույթ: Ռուսաստանի ազգությունները, վորոնք «հին ռեժիմի» կողմից դարերով ճնշված ու շահագործված էյին, առաջին անգամ իրենց մեջ ուժ զգացին և մարտի նետվեցին ճնշողների դեմ: «Ազգային ճնշման վերացում» — այսպես էր շարժման լուռնազը: Ռուսաստանի ծայրամասերը վայրկենապես ծածկվեցին «համազգային» հիմնարկներով: Շարժման գլուխ էր անցած ազգային<sup>21</sup> բուրժուական-դեմոկրատական ինտելիգենցիան: «Ազգային խորհուրդներ» կառվիայում, մտտական յերկրում, կիսվայում, վրաստանում, Հայաստանում, Աղբրիշանում, Կովկասում, Կիրգիզստանում ու Միջին Գովորժյայում. «Թաղա» Ուկրաինայում<sup>22</sup> ու Բելուսիայում<sup>23</sup>. «Սֆատուլ — Յերբյ»<sup>24</sup> Բեսարաբիայում, «Կուբուլթայ» Ղզիմում<sup>24</sup> ու Բալխիբիայում<sup>25</sup>. «Ավտոնոմ կառավարություն» Թուրքեստանում<sup>26</sup>, — ահա «համազգային» այն ինստիտուտները, վորոնց շուրջը



ուժեր եր հաժաքում ազգային բուրժուազիան: Խոսքը վերաբերում էր ցարիզմից, իբրև ազգային ճնշման և հիմնական պատճառից ազատագրության և ազգային բուրժուական պետութիւնների կազմելուն: Ազգերի ինքնորոշման իրավունքը մեկնաբանվում էր վորպես ծայրամասերի ազգային բուրժուազիայի իրավունք՝ իշխանութիւնն իր ձեռքը վերցնելու և ողտազործելու: Փետրվարյան հեղափոխութիւնը՝ «իբր ազգային պետութիւնը կազմելու համար: Վերը հիշատակված բուրժուական ինստիտուտները նկատի չունեին և չեյին ել կարող ունենալ հեղափոխութեան հետագա զարգացումը: Ընդամենը՝ աչքաթող եր արվում, վոր ցարիզմին փոխարինելու յեր դալիս մերկապարանոց, դիմակազուրկ իմպերիալիզմը, վոր նա, այդ իմպերիալիզմը, ազգութիւնների աճելի ուժեղ ու աճելի վտանգավոր թշնամի յե, ազգային նոր ճնշման հիմքը:

Սակայն, ցարիզմի վոհնացումը և բուրժուազիայի՝ իշխանութեան գլուխ անցնելը չհանգեցրին ազգային ճնշման վոհնացման: Ազգային ճնշման հին կոպիտ ձևը փոխվեց ճնշման նոր, նուրբ, բայց դրա փոխարեն աճելի վտանգավոր ձևով: Լժով—Միլլյուկով—Կերենսկու կառավարութիւնը վոչ միայն չիզեց իր կապերը ազգային ճնշման քաղաքականութեանից, այլև կազմակերպեց նոր արշավանք ընդդէմ Ֆինլանդիայի (սեյմի ցրումը 1917 թ. ամառը) և Ուկրաինայի (Ուկրաինայի կուլտուրական հիմնարկները քարուքանդ անելը): Ինչ աճելին, իր բնութեամբ իմպերիալիստական այդ կառավարութիւնը, նոր հողեր, նոր գաղութներ ու ազգութիւններ հպատակեցնելու համար, կոչ արեց բնակչութեանը շարունակելու պատերազմը: Այդ կառավարութեանը դեպի այս բանն եր մղում վոչ միայն իմպերիալիզմի ներքին բնութիւնը, այլև Արևմուտքում իմպերիալիստական հին պետութիւնների աւերալուծումը, վորոնք անդուսպ կերպով ձգտում էին նոր հողեր ու ազգութիւններ հպատակեցնելու և սպառնում էին նեղացնել նրա ազդեցութեան վորոտը: Մանր ազգութիւնները հպատակեցնելու համար իմպերիալիստական պետութիւնների մղած պայքարը վորպես այդ պետութիւնների գոյութեան պայման,—հա թե ինչ պատկեր բացվեց իմպերիալիստական պատերազմի ընթացքում: Յարիզմի վոհնացումը և թատերաբերում Միլլյուկով—Կերենսկու կառավարութեան հանդէս գալը ուղղակի վոչ մի բարելավում չմտցրին այս անհրապույր պատերի մեջ: Բնական և, վոր «համազգային ինստիտուտները» ծայրամասերում վորչադի վոր Պետական ինքնուրույնութեան տնտեսական եյին ցուցարարում՝ Ռուսաստանի իմպերիալիստական կառավարութեան անհաղթահարելի հակազոթութեան եյին հանդիպում: Իսկ վորչափ վոր նրանք, հաստատելով ազգային բուրժուազիայի իշխանութիւնը, խուլ էին մնում «իբրենց» բանվորների ու գյուղացիների արմատական շահերի նկատմամբ՝ նրանք վերջինների մեջ արտունջ ու դժգոհութիւն էին առաջացնում:

Այսպես կոչված՝ բազմաշին գնդերը՝ կրակի վրա յուզ ելին ածուս միայն, վերից յեկող վտանգի դեմ նրանք անդոր ելին, իսկ վարից յեկող վտանգը նրանք միայն ուժեղացնում ու խորացնում էին: «Համազգային» խնամախոսները անպաշտպան ելին մտած զբախց յեկած հարվածները դեմ նույնպես, ինչպես և ներքից յեկած պոռթկումները դեմ: Երանց առնող բուրժուա-ազգային պետությունները, դեռ նոր ծաղկած, սկսում ելին ծաղկաթափ լինել:

Այսպիսով, ինքնորոշման սկզբունքի հին բուրժուա-դեմոկրատական մեկնարանությունը Ֆիկցիա յեր դառնում, կորցնում եր իր հեղափոխական իմաստը: Պարզ եւ, վոր այս պայմաններում խոսք ել չեր կարող լինել ազգային ճշման վոչնչացման և մանր ու ազգային պետությունների ինքնուրույնություն մասին: Ակներև եր դառնում, վոր ճշված ազգությունների աշխատավորական մասսաների ազատագրումն ու ազգային ճշման վոչնչացումը աներևակայելի յեն առանց՝ իմպերիալիզմից կապերը խզելու, յեր՝ ազգային բուրժուազիան տապալելու և իշխանությունը իրենց իսկ՝ աշխատավորական մասսաների կողմից վերցնելու:

Սա տունձնապես ցայտուն կերպով արտահայտվեց Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո:

## II. ՀՈԿՏԵՄԲԵՐԹԱՆ ԼԵՂԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Փետրվարյան հեղափոխությունը իր մեջ ներքին անհաշտելի հասունություններ եր կրում: Հեղափոխությունը կատարվեց բանվորների ու գյուղացիների (գինվորների) ջանքերով, այնինչ հեղափոխության հեռանկարով իշխանությունն անցավ վոչ թե բանվորներին ու գյուղացիներին, այլ՝ բուրժուազիային: Բանվորներն ու գյուղացիները, հեղափոխություն կատարելով ուղում են վերջ տալ պատերազմին, խաղաղություն ձեռք բերել, մինչդեռ իշխանությունը զուլխ կանգնած բուրժուազիան ձգտում եր մասսաների հեղափոխական վոզնորությունն ուղապորժել՝ պատերազմը շարունակելու համար, խաղաղության դեմ: Տնտեսական փլուչումը յերկրում և պարենավորման ճգնաժամը պահանջում ելին բանվորների ուղտին եքսպրոպրիացիայի յենթարկել կապիտալներն ու արդյունաբերական ձեռնարկությունները, գյուղացիների ուղտին բռնադրամվել կալվածատիրական հողերը, մինչդեռ, Միլյուկով-Կերենսկու բուրժուական կառավարությունը պահապան եր կանգնած կալվածատերերի ու կապիտալիստների շահերին՝ վճռապես պաշտպանելով նրանց բանվորների ու գյուղացիների հարձակումներից: Այդ բուրժուական հեղափոխություն եր, վոր կատարվեց շահագործողների ուղտին բանվորների ու գյուղացիների ձեռքով:

Մինչդեռ՝ յերկիրը շարունակուած եր հյուծվել իմպերիալիստական պատերազմի, անտեսական քայքայման ու պարենային փուլոզման ծանրութեան ներքոյ Զորահակատը քայքայվում ու ցրվում եր: Յարրիկաներն ու զործարանները կանգ եյին առնում: Յերկրում աճում եր սովը: Փետրվարյան հեղափոխութեանն իր ներքին՝ հակասութեաններով հայտնապես անբավարար յեղավ՝ «յերկրի փրկութեան» համար: Միշտ կեղծ— կերենակու կառավարութեանը հայտնապես անընդունակ յեղավ հեղափոխութեան արմատական հարցերը լուծելու համար:

Յերկիրն իմպերիալիստական պատերազմի ու անտեսական քայքայման փակուղոց դուրս բերելու համար անհրաժեշտ է Տոր, սոցիալիստական հեղափոխութեան:

Այս հեղափոխութեանը յեկավ Հոկտեմբերյան հեղաշրջման հետեւյանքով:

Տապալելով կալվածատերերի ու բուրժուազիայի իշխանութեանը և նրա տեղը դնելով բանվորների ու գյուղացիների իշխանութեանը՝ Հոկտեմբերյան հեղաշրջումը մի հարվածով լուծեց Փետրվարյան հեղափոխութեան հակասութեանները: Կալվածատիրական-կուլակային ամենագորութեանը վերացնելը և հողը գյուղի աշխատավոր զանգվածների ոգտագործմանը հանձնելը, Փարրիկաներն ու զործարաններն եքսպրուպրիացիայի յենթարկելը և բանվորների անորինութեանը հանձնելը, իմպերիալիզմից կապերը խզելը և թաւանչիտական պատերազմը լիկվիդացիայի յենթարկելը, գաղտնի պայմանագրերը հրապարակելը և ոտար տերիտորիաներ հափշտակելու քաղաքականութեան մերկացնելը, վերջապես, ճնշված ժողովուրդների աշխատավոր մասսաների ինքնորոշումը հռչակելը և Յինլանդիայի անկախութեանը ճանաչելը,— ահա այն հիմնական միջոցառումները, վոր կերտուեց խորհրդային իշխանութեանը հեղափոխութեան ընթացքում:

Դա իրոք վոր սոցիալիստական հեղափոխութեան եր:

Կենտրոնում սկսված հեղափոխութեանը չեր կարող յերկար մնալ կենտրոնի նեղ տերիտորիայի շրջանակներում: Կենտրոնում հաղթելով նա անխուսափելիորեն պետք ե տարածվոր դեպի ծայրամասերը: Յեղ իրոք, հեղաշրջման առաջին իսկ սրերից հեղափոխական ալիքը հյուսիսից տարածվեց ամբողջ Ռուսաստանում՝ ծայրամասը ծայրամասի հետեւից բռնելով: Բայց այստեղ նա հանդիպեց պատնէշի՝ հանձինս դեռ մինչև Հոկտեմբերը զոյացած «ազգային խորհուրդներին» ու մարզային՝ «կառավարութեաններին» (Դոն, Կուբան, Սիբիր): Բանն այն ե, վոր այդ «ազգային կառավարութեանները» լսել անգամ չեյին ուղում սոցիալիստական հեղափոխութեան մասին: Իրենց բնութեամբ բուրժուական լինելով՝ նրանք ընավ չեյին ուղում քանդել հին բուրժուական աշխարհը,— ընդհակառակը, նրանք իրենց պարտքն եյին համարում ըլլոր ուժերով պա-

հել ու ամբասնել ախ Ըստ Եյության իմպերիալիստական լինելով նըրանք բնավ չեյին ուղում խղել կապերն իմպերիալիզմից, — ընդհակառակը, նրանք յերբեք էլ զեմ չեյին տատարա ազգությունների կտրոներն ու կտորիկները խլելուն և իրենց յնթարկելուն, յեթե այդ հնարավոր եր լինում: Զարմանալի չե, վոր ծայրամասերի «ազգային կառավարությունները» պատերազմ հայտարարեցին կենտրոնի սոցիալիստական կառավարությանը: Իսկ պատերազմ հայտարարելով, բնականորեն, նրանք դարձան սեպտիմալի ոչյաններ, վորոնք իրենց շուրջը ի մի եյին հավաքում ախ ամենը, ինչ հակահեղափոխական եր Ռուսաստանում: Վաչ վաքի համար դազանիք չե, վոր զեպի ախտեղ, զեպի այդ ոչյաններն եյին սլանում Ռուսաստանից դուրս շարտված բոլոր հակահեղափոխականները, վոր ախտեղ, այդ ոչյանների շուրջն եյին կազմակերպվում նրանք իբրև սպիտակ-զվարդիական «ազգային» գնդեր:

Բայց ծայրամասերում, բացի «ազգային» կառավարություններից, գոյություն ունեն նաև ազգային բանվորներ ու գյուղացիներ: Տակավին մինչև Հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանի կենտրոնի պատգամավորական խորհուրդների որինակով կազմակերպված լինելով իբրև իրենց հեղափոխական պատգամավորական խորհուրդներ՝ նրանք յերբեք խղած չեն յեղել կապերը հյուսիսի իրենց յեղբայրների հետ: Նրանք էլ եյին ձգտում հաղթել բուրժուազիային, նրանք էլ եյին մաքառում սոցիալիզմի հաղթանակի համար: Զարմանալի չե, վոր որեցորտում եր նրանց կոնֆլիկտն «իրենց» ազգային կառավարությունների հետ: Հոկտեմբերյան հեղաշրջումը միայն ամբապնդեց ծայրամասերի բանվորներին ու գյուղացիներին դաշինքը Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների հետ՝ վաղեմնից սոցիալիզմի հաղթանակի հավատով: Իսկ «ազգային կառավարություններին» պատերազմն ընդդեմ խորհրդային իշխանության նրանց կոնֆլիկտը այս «կառավարություններին» հետ հասցրեց մինչև կապերի լիակատար խզումը նրանցից, մինչև բացորոշ ապստամբությունը նրանց դեմ:

Այսպես կազմավորվեց ամբողջ Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների սոցիալիստական դաշինքն ընդդեմ Ռուսաստանի ծայրամասերի ազգային-բուրժուական «կառավարություններին» հակահեղափոխական գաշինքի:

Մայրամասային «կառավարություններին» պայքարը վժանք պատկերում են իբրև ազգային ազատագրության պայքար ընդդեմ խորհրդային իշխանության «անհոգի ցենտրալիզմին»: Բայց այս ճիշտ չե: Աշխարհում վաչ մի իշխանություն չի թուլատրել ախպիս լախ ապացենտրալիզմ, աշխարհում վաչ մի կառավարություն ժողովուրդներին չի ավել ազգային ազատության ախպիս լիակատարություն, ինչպես խորհրդային իշխանությունը Ռուսաստանում: Մայրամասային «կառավար-

բուժյուններէ՝ պայքարը յեղել և և մնում և բուրժուական հակահեղափոխութեան պայքար սոցիալիզմի դեմ: Ազգային դրոշակը մեջ ևն զըցում մասսաներին խարելու համար միայն՝ իբրև ժողովրդականութեան զայնից մի դրոշակ, վորը հարմար և ազգային բուրժուազիայի հակահեղափոխական դիտավորութեաները քողարկելու համար:

Իսոյք ազգային» ու մարզային «կառավարութեաների» պայքարըն անհաճասար պայքար յեղով: Գրոհի յենթարկված լինելով յերկու կողմից՝ զրոից — խորհրդային իշխանութեան կողմից և ներսից — իբրևնց իսկ սեփական» բանվորների ու գյուղացիների կողմից, — ազգային կառավարութեաներն» առաջին իսկ մարտերից հետո պէտք և հետ նահանջեցին: Ֆինն բանվորների ու տորպաւների\* ապստամբութեանը և բուրժուական «Սենատի» փախուստը, ուկրաինական բանվորների ու գյուղացիների ապստամբութեանը և բուրժուական «Ռազայի» փախուստը, բանվորների ու գյուղացիների ապստամբութեանը Գոնի, Կուբանի շըըջաններում, Սիբիրում և Կալեզինի, Կոնսիլովի ու Սիբիրի «կառավարութեան» կրախը, — թուրքեստանյան չքավորութեան ապստամբութեան ու «Ավտոնոմ կառավարութեան» փախուստը, ազրաբային հեղափոխութեանը Կովկասում և Վրաստանի, Հայաստանի ու Աղբրեջանի «ազգային խորհուրդների» կատարյալ անհարակութեանը, — սրանք ևն բոլորին հայանի ախ փաստերը, վորոնք ցուցադրեցին ծայրամասային «կառավարութեաների» կատարյալ կտրվածութեանն «իբրևնց» մասսաներից: Գլխովին ջախջախված ազգային կառավարութեաները «հարկադրված» եյին դիմելու Արևմուտքի իմպերիալիստներին՝ ամբողջ աշխարհի մանր ազգութեանների դարավոր կեղեքիչներին ու շահագործողներին ոգնութեանը՝ ընդդէմ «իբրևնց» բանվորների ու գյուղացիների:

Այսպէս սկսվեց ոտարերկրյա միջամտութեան և ծայրամասերի ու կուլագիայի շըջանը, — մի շըջան, վորն ավերորդ անգամ մերկացրեց ազգային» ու մարզային «կառավարութեաների» հակահեղափոխական բնույթը:

Բոլորի համար միայն այժմ ակներև դարձավ, վոր ազգային բուրժուազիան ձգտում և վոչ թե ապստաղրելու իբր ժողովուրդն» ազգային ճնշումից, այլ նրանից շահույթներ քամելու ապատութեան, իբր արտոնութեաններն ու կապիտալները պահպանելու ապատութեան:

Միայն այժմ պարզ դարձավ, վոր ճնշված ազգութեանների ապստաղրումն աներևակայելի յե առանց իմպերիալիզմից կապերը՝ խզելու, առանց ճնշված ազգութեանների բուրժուազիան տապալելու, առանց իշխանութեանը այդ ազգութեանների աշխատավորական զանգվածների ձեռքն անցնելու:

\* Հոգաբարձ գյուղացիներ Ֆինլանդիայում: Հայ. հրատ. խմբ.

Հեղափոխութեան բուն ընթացքով այսպէս մերկացվեց ու դեռ չզորացեց ինքնորոշման սկզբունքի հին բուրժուական ըմբռնումն՝ իր «Ամբողջ իշխանութունն ազգային բուրժուաշխային» լողունգով: Ինքնորոշման սոցիալիստական ըմբռնումը իր՝ «Ամբողջ իշխանութունը ճնշված ազգութիւնների աշխատավորական մասսաներին» լողունգով ստացավ կիրառման բոլոր իրավունքներն ու հնարավորութիւնները:

Այսպիսով, Հոկտեմբերյան հեղաշրջումը, վերջ տալով հին, բուրժուապատասխանական ազգային շարժմանը, բացեց ճնշված ազգութիւնների բանձորների ու գյուղացիների նոր, սոցիալիստական շարժման դարաշրջան, — մի շարժում, վորն ուղղված է ամեն մի. — ուրեմն և ազգային, — ճնշման դեմ, «իր» և ոտար բուրժուազիայի իշխանութեան ճնշման դեմ, առնաստիճակ իմպերիալիզմի դեմ:

### III. ՀՈԿՏԵՄԲԵՐԹԱՆ ԼՆՂԱՏԻՉՄԱՆ ՀԱՄԱՇԵՍԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հազիմելով Ռուսաստանի կենտրոնում և տիրանալով մի շարք ծայրամասերի՝ Հոկտեմբերյան հեղափոխութեանը չէր կարող սահմանափակվել Ռուսաստանի տերիտորիալ շրջանակներով: Համաշխարհային իմպերիալիստական պատերազմի և ներքնախավերի ընդհանուր դժգոհութեան միջնորդութեամբ այն չէր կարող չանցնել հարևան յերկիրները: Կապերի խզումն իմպերիալիզմից և Ռուսաստանի ազատումը թալանչիական պատերազմից, գաղտնի պայմանագրերի հրապարակումը և ոտար հողերի համփշտակման քաղաքականութեան հանդիսավոր վերացումը, ազգային ազատութեան հուշակումը և Ֆինլանդիայի անկախութեան ճանաչումը, Ռուսաստանը «խորհրդային ազգային հանրապետութիւնների ֆեդերացիա հայտարարելը» և խորհրդային իշխանութեան կողմից աշխարհին նետված մարտական կանչն իմպերիալիզմի դեմ վճռապես պայքար մղելու մասին, — այս ամենը չէր կարող լուրջ ազդեցութիւն չանել ըստըրկացված Արևելքի և արլունաքամ յեղող Արևմուտքի վրա:

Յեղ, իրօք, Հոկտեմբերյան հեղափոխութեանը աշխարհում առաջին հեղափոխութիւնն է, վորը փշրեց Արևելքի ճնշված ժողովուրդների աշխատավոր մասսաների դարավոր մրափը և նրանց ներքաշեց համաշխարհային իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի մեջ: Ռուսաստանի խորհուրդների որինակով Պարսկաստանում, Չինաստանում ու Հնդկաստանում բանվորական ու գյուղացիական խորհուրդներ կազմվելը բավականաչափ համողիչ կերպով խոսում է այս մասին:

Հոկտեմբերյան հեղափոխութեանն աշխարհում առաջին հեղափոխութիւնն է, վորը Արևմուտքի բանձորների ու ղինվորների համար ծառայեց վորպէս մի կենդանի փրկարար որինակ և պատերազմի ու

խմայերիալիզմի ճնշումից իրապես աղատազրկելու ուղին մզեց նրանց։ Բանվորների և ղինվորների ազատամարտաթյունն Ավստրո-Հունգարիայում ու Գերմանիայում, բանվորական ու ղինվորային պատգամավորների խորհուրդներ կազմելը, Ավստրո-Հունգարիայի իրավապահա ժողովուրդների հեղափոխական պայքարը ազգային ճնշման դեմ — բավականաչափ պերճախոս կերպով խոսում են այս մասին։

Բանը բնավ էլ այն չէ, վոր պայքարն Արևելքում և մինչև իսկ Արևմուտքում դեռևս չի ազատվել բուրժուա-նացիոնալիստական ազդեցություններից, — բանն այն է, վոր պայքարն իմպերիալիզմի դեմ սկսվել է, վոր այն շարունակվում է և անխուսափելիորեն պետք է հասնի իր աբրամարանական վախճանին։

Ուսարհերյայ միջամտությունը և «արտաքին» իմպերիալիստների սկուպացիոն քաղաքականությունը միայն սրում են հեղափոխական ճգնաժամը՝ պայքարի մեջ ներքաշելով նոր ժողովուրդներ և ընդլայնելով հեղափոխական մարտերի շրջանն իմպերիալիզմի դեմ։

Այսպես, կապ հաստատելով հետամնաց Արևելքի և առաջավոր Արևմուտքի ժողովուրդների միջև՝ Հոկտեմբերյան հեղաշրջումը ի մի յե հավաքում նրանց իբրև իմպերիալիզմի դեմ պայքարող մի բանակ։

Այսպես, ազգային հարցն ազգային ճնշման դեմ պայքարելու մասնավոր հարցից աճում դառնում է ազգերը, գաղութները և կիսագաղութներն իմպերիալիզմից ազատագրելու ընդհանուր հարց։

Այնպես, ի միջի այլոց, այն է, վոր նրանք շարունակ շեղվել են դեպի ազգային ինքնորոշման բուրժուական ըմբռնումը, չեն հասկացել այդ ինքնորոշման հեղափոխական իմաստը, չեն կարողացել կամ չեն ցանկացել դնել ազգային հարցը իմպերիալիզմի դեմ բացահայտ պայքար մղելու հեղափոխական հողի վրա, չեն կարողացել կամ չեն ցանկացել ազգային հարցը կապակցել գաղութներին աշատագրման հարցի հետ։

Ավստրիայի՝ Բաուերի և Թենների տիպի սոցիալ-դեմոկրատներին բթամտությունը, իսկապես, այն է, վոր նրանք չեն հասկացել ազգային հարցի և իշխանության հարցի անխզելի կապը, ջանալով անջատել ազգային հարցը քաղաքականությունից և այն պարփակել կուլտուր-լուսավորական հարցերի շրջանակների մեջ՝ մոռանալով այնպիսի բանաբառերի գոյությունը, ինչպես են իմպերիալիզմն ու նրա կողմից ստրկացված գաղութները։

Ասում են, թե ինքնորոշման և «հայրենիքի պաշտպանության» սկզբունքները վերացվել են՝ բարձրացող սոցիալիստական հեղափոխության պայմաններում անցքերի բուն ընթացքով։ Իրապես վերացվել են վոչ թե ինքնորոշումն ու «հայրենիքի պաշտպանությունը», այլ նրանց բուրժուական մեկնարանությունը։ Բավական է մի հայացք գցել սկզբում։



պայտեայի յնկմարելով՝ մարդերի վրա, վորոնք հեծում են իմպերիալիզմի ճնշման ներքո և բուռն կերպով ձգտում են ազատագրման, բավական և մի հայացք զցել Ռուսաստանի վրա, վորք հեղափոխական պատերազմ և մյուս սոցիալիստական հայրենիքը իմպերիալիզմի դիշատիչներից պաշտպանելու համար, բավական և լրջորեն մտանել Ավստրա-Հունգարիայում ներկայումս տեղի ունեցող անցքերի մասին, բավական և մի հայացք զցել ստրկացված զաղութների ու կիսագաղութների վրա, վորոնք արդեն իրենց մոտ խորհուրդներ են կազմակերպել (Հնդկաստան, Գարսկաստան, Չինաստան), — բավական և մի հայացք զցել այս ամենի վրա՝ իր սոցիալիստական մեկնարանությամբ վերցրած ինքնորոշման սկզբունքի հեղափոխական ամբողջ նշանակությունը հասկանալու համար:

Հոկտեմբերյան հեղաշրջման համաշխարհային մեծ նշանակությունը, գլխավորապես, հենց այն և, վոր այն՝

1) լայնացրեց ազգային հարցի շրջանակները, դարձնելով այն ազգային ճնշման դեմ պայքարելու մասնավոր հարցից՝ ճնշված ժողովուրդների, գաղութներն ու կիսագաղութներն իմպերիալիզմից ազատագրելու ընդհանուր հարց:

2) լայն հնարավորություններ ու իրական ուղիներ բաց արեց այդ ազատագրման համար, վորով Արևմուտքի ու Արևելքի ճնշված ժողովուրդների համար նշանակելիորեն հեշտացրեց նրանց ազատագրման գործը՝ նրանց ներքաշելով իմպերիալիզմի դեմ հաղթական պայքար մղելու ընդհանուր հունի մեջ:

3) Դրանով իսկ կամուրջ զցեց սոցիալիստիկ Արևմուտքի ու ստրկացված Արևելքի միջով՝ համաշխարհային իմպերիալիզմի դեմ կառուցելով հեղափոխությունների նոր նախա՝ վոր ռուսաստանյան հեղափոխության վրայով ձգվում և Արևմուտքի պրոլետարներից սկսած մինչև Արևելքի ճնշված ժողովուրդները:

Մրանով ևլ, իսկապես, բացատրվում և Արևելքի ու Արևմուտքի աշխատավոր ու շահագործվող զանգվածների ներկայիս աննկարագրելի խանդավառ վերարթնունքը զնպի ռուսաստանյան պրոլետարիատը:

Մրանով ևլ, գլխավորապես, բացատրվում և այն զազանային կատաղությունը, վորով համայն աշխարհի իմպերիալիստական դիշատիչներն այժմ վրա տվին Խորհրդային Ռուսաստանին:

«Շրագր» 10 № 141 յեզ 250.

6 յեզ 19 հոյեմբերի 1918 թ.

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱՖԵՐՄԱՐԻՄ

(1920 թ.)

Հեղափոխութեան և քաղաքացիական պատերազմի յերեք տարին Ռուսաստանում ցույց տվեց, զոր առանց կենտրոնական Ռուսաստանի ու նրա ծայրամասերի փոխադարձ աջակցութեան անհնարին և հեղափոխութեան հաղթութեանը, անհնարին և Ռուսաստանի ազատագրումը իմպերիալիզմի ճիրաններից, կենտրոնական Ռուսաստանը, համաշխարհային հեղափոխութեան այդ ոչախը, չի կարող յերկար դիմանալ առանց ծայրամասերի ոգնութեան, զորոնք հարուստ են հումքով, վառելիքով, պարենամթերքներով: Ռուսաստանի ծայրամասերն իրենց հերթին անխուսափելի իմպերիալիստական ստրկացման են դատապարտված՝ առանց ազնիվ՝ զարգացած կենտրոնական Ռուսաստանի քաղաքական, ռազմական ու կադմակերպական ոգնութեան: Յեթև ճիշտ և այն դրույթը, թե ազնիվ զարգացած պրոլետարական Արևմուտքը չի կարող վոջնացնել համաշխարհային բուրժուազիային առանց ազնիվ պակաս զարգացած, բայց հումքով ու վառելիքով հարուստ գյուղացիական Արևելքի աջակցութեան, ապա նույնքան ել ճիշտ և մշուս դրույթն այն մասին, զոր ազնիվ զարգացած կենտրոնական Ռուսաստանը չի կարող մինչև վերջը հասցնել հեղափոխութեան գործը՝ առանց Ռուսաստանի ազնիվ պակաս զարգացած, բայց անհրաժեշտ ռեսուրսներով հարուստ ծայրամասերի աջակցութեան:

Այս անդամանքն անկասկած հաշվի յեր առել Անտանտը խորհրդային իշխանութեան յերևան գալու առաջին իսկ որերից սկսած, յերբ նա (Անտանտը) կիրառում էր կենտրոնական Ռուսաստանի անտեսական շրջափակման պլանը՝ առավել կարևոր ծայրամասերը նրանից պոկելու միջոցով: Ռուսաստանի անտեսական շրջափակման պլանը հետագայում ֆուտ և Ռուսաստանի վրա Անտանտի կատարած բոլոր արշավանքների անփոփոխ հիմքը՝ սկսած 1918 թվականից մինչև 1920 թվականը, չբացառած նրա այժմյան մեքենայութեանն էրն Ուկրաինայում, Ադրբեջանում, Թուրքեստանում:

Սլ ազնիվ շահագրգռող և դառնում Ռուսաստանի կենտրոնի ու ծայրամասերի միջև ամուր դաշինքի ապահովումը:

Այստեղից՝ Ռուսաստանի կենտրոնի ու ծայրամասերի միջև այնպիսի վորոշ հարաբերութիւններ, վորոշ կապեր հաստատելու անհրաժեշտութիւնը, վորոնք ապահովում են նրանց սերտ, անխախտ դաշինքը:

Իսկ ինչպիսին պետք է լինեն այդ հարաբերութիւնները, ինչպիսի ձևեր պետք է ընդունեն նրանք:

Այլ կերպ ասած՝ վճռն է խորհրդային իշխանութիւն ջաղագրականութիւնը Ռուսաստանում՝ ազգային հարցի վերաբերմամբ:

Մայրամասերը Ռուսաստանից անջատելու պահանջը, վորպես կենտրոնի ու ծայրամասերի հարաբերութիւնների ձև, պետք է բացառվի վոր միայն այն պատճառով, վոր այդ պահանջը հակասում է կենտրոնի և ծայրամասերի միջև դաշինք հաստատելու հարցի դրմանն իսկ, այլև, ամենից առաջ, այն պատճառով, վոր այն արմատապես հակասում է ինչպես կենտրոնի, այնպես էլ ծայրամասերի ժողովրդական զանգվածների շահերին: Այլևս չխոսելով այն մասին, վոր ծայրամասերի անջատումը կխտրիւր Արևմուտքի ու Արևելքի ազատագրական շարժումը իրենանոց կենտրոնական Ռուսաստանի հեղափոխական հորութիւնը՝ անջատված ծայրամասերն իրենք անխուսափելիորեն միջազգային իմպերիալիզմի ստրուկի դրութիւն մեջ կընկնէին: Բավական է մի հայացք զցել Ռուսաստանից անջատված Վրաստանի, Հայաստանի, Լեհաստանի, Ֆինլանդիայի և այլոց վրա, վորոնք պահպանել են անկախութիւն միայն տեսքը, իսկ իրականում դարձել են Անտանտի անպայման վասալները, բավական է, վերջապես, մտաբերել մոտ անցյալում Ռուսիայի ու Ազրբեջանի գլխին յեկածը, յերբ առաջինին կողոպտում եր գերմանական կապիտալը, իսկ յերկրորդին՝ Անտանտը, վորպեսզի հասկանալի լինի ծայրամասերը միջազգային ներկա պայմաններում անջատելու պահանջի ամբողջ հակահեղափոխականութիւնը: Պրոլետարական Ռուսաստանի և իմպերիալիստական Անտանտի միջև բոլորովոր մահացու պայքարի պայմաններում ծայրամասերի համար կա միայն յերկու յիւզ:

Կամ Ռուսաստանի հետ, և այն ժամանակ ծայրամասերի աշխատավորական մասսաները կազատագրվեն իմպերիալիստական ճնշումից:

Կամ, Անտանտի հետ, և այն ժամանակ անխուսափելի կլինի իմպերիալիստական լուծը:

Յերրորդ յիւզ չկա: Այսպես կոչված անկախ Վրաստանի, Հայաստանի, Լեհաստանի, Ֆինլանդիայի և այլոց՝ այսպես կոչված անկախութիւնը միայն իարուսիկ տեսք է, վորը սքողում է այդ, թող ներվի ասանել, պետութիւնների լիակատար կախումն իմպերիալիստների այս կամ այն խմբից:

Իհարկէ, Ռուսաստանի ծայրամասերը, այս ծայրամասերում բընակվող ազգերն ու ցեղերը, ինչպես է ամեն տեսակի այլ ազգերը, ու-

նեն Ռուսաստանից անջատվելու անկապտելի իրավունք, և յեթև այդ ազգերից վորևե մեկը իր մեծամասնությամբ վճուր անջատվել Ռուսաստանից, ինչպես այդ պատահեց Ֆինլանդիային 1917 թ., ապա Ռուսաստանը հավանորեն հարկ կզգար հավաստել վաստը և սանկցիա սալ անջատմանը: Բայց այստեղ խոսքը ազգերի իրավունքների մասին չէ, վորոնք անվիճարկելի յեն, այլ ինչպես կենտրոնի, այնպես էլ ծայրամասերի ժողովրդական զանգվածների շահերի մասին և, խոսքը այն ազիտացիայի ընդլթի մասին և, վորը (բնույթը) վորոշվում և այդ շահերով և վորը (ազիտացիան) պարտավոր և մղել մեր կուսակցությունը, յեթև նա (կուսակցությունը) չի ուզում հրաժարվել ինքն իրենից, յեթև նա ուզում և վորոշ ուղղությամբ աղղել ազգությունների աշխատավորական զանգվածների կամքի վրա: Ե՛, իսկ ժողովրդական մասսաների շահերն ասում են, վոր ծայրամասերի անջատման պահանջը հեղափոխության ավյալ ստադիայում խորապես հակահեղափոխական պահանջ է:

Հավասարապես պետք և բացառվի այսպես կոչված կուլտուր-ազգային ավտոնոմիան, վորպես դա:ինքի ձև Ռուսաստանի կենտրոնի ու ծայրամասերի միջև: Ավտորո-Հունգարիայի (կուլտուր-ազգային ավտոնոմիայի հայրենիքի) վերջին տասը տարվա պրակտիկան ցույց և ավել կուլտուր-ազգային ավտոնոմիայի, վորպես բազմազգի պետության ազգությունների աշխատավորական մասսաների դաշինքի ձևի, ամբողջ վաղանցիկությունը և անկենսունակությունը: Դրան կենդանի ապացույց են ծառայում Շարիֆզերն ու Բաուերը, կուլտուր-ազգային ավտոնոմիայի այդ ստեղծիչները, վորոնք այժմ նստած են իրենց ազգային խորամանկ կերպով հյուսված ծրագրի կտրած տաշտակի առաջ: Վերջապես, Ռուսաստանում կուլտուր-ազգային ավտոնոմիայի մուսնետիկը հանդիսացող, յերբեմնի հոչակավոր Բունդը ինքը հարկազրկած էր վերջներս պաշտոնապես ընդունել ու կուլտուր-ազգային ավտոմիայի հարկավոր չլինելը, բացահայտորեն հայտարարելով, վոր՝

«Կուլտուր-ազգային ավտոնոմիայի պահանջը, վոր առաջադրված էր կապիտալիստական հասարակարգի շոշափններում, ողիտիստական հեղափոխության պայմաններում կորցնում և իր իմաստը» (տես Բուլետի XII կոնֆերանսիտե, էջ 21, 1920 թ.):

Մնում և հատուկ կենցաղով ու ազգային կազմով տարբերվող ծայրամասերի մտազային ավտոնոմիան, վորպես կենտրոնի ու ծայրամասերի միության միակ նպատակահարմար ձևը, — մի ավտոնոմիա, վորը ֆեդերատիվ կապերով պետք և կապի Ռուսաստանի ծայրամասերը կենտրոնի հետ: Այսինքն, հենց այն խորհրդային ավտոնոմիան, վոր խորհրդային իշխանությունը հոչակեց իր լույս աշխարհ գալու հենց առաջին որերից սկսած և վորը ներկայումս կիրառվում և ծայրամասե-

Բուս վարչական կոմունաների և խորհրդային ավտոնոմ հանրապետութիւնները ձևով:

Յորհրդային ավտոնոմիան մի քարացած և մի անգամ ընդմիջտ արված բան չէ, — այն յինթադրում է իր զարգացման ամենաբազմազան ձևեր ու աստիճաններ: Վարչական նեղ ավտոնոմիայից (Պոլովժնիյի դերմանայքները, Նուվաշները, կարելները) նա անցնում է ավելի լայն, քաղաքական ավտոնոմիայի (բաշկիրները, Պոլովժնիյի Թաթարները, կիրգիզները), լայն, քաղաքական ավտոնոմիայից՝ նրա ևլ ավելի լայն ձևին (Ուկրաինա, Թուրքեստան), վերջապես ավտոնոմիայի ուկրաինական տիպից՝ ավտոնոմիայի բարձրագույն ձևին, — պայմանագրական հարաբերութիւններին (Ալգրեշան): Յորհրդային ավտոնոմիայի այս առաջնականութիւնը նրա առաջին արժանիքներից մեկն է, վորովհետև այն (առաջնականութիւնը) թույլ է տալիս ընդգրկելու Ռուսաստանի կուլտուրական օւսնասեռական ամենատարբեր աստիճանների վրա կանգնած ծայրամասերի ամբողջ բազմազանութիւնը: Ազգային հարցի վերաբերմամբ Ռուսաստանում վարած խորհրդային քաղաքականութիւնն այն յերեք տարին ցույց տվեց, վոր, իրականացնելով խորհրդային ավտոնոմիան նրա բազմազան ձևերով, խորհրդային իշխանութիւնը ճիշտ նանազարհի վրա յե կանգնած, վորովհետև միայն ճիւղհիվ այդպիսի քաղաքականութիւնն նրան հաջողից իր համար նանազարհ բանալ զեպի Ռուսաստանի ծայրամասերի ամենախուլ խորքերը, քաղաքական կյանքի կոշիկ ամենահետաճաց և ազգային տեսակետից ամենաբազմազան մասսաները, այդ մասսաները կապել կենտրոնի հետ բազմապիսի թելերով, — մի ինդիք, վորը վոշ միայն չի լուծել, այլև չի զրել իր առջև (վախեցնել են դնել) աշխարհումս վոշ մի կառավարութիւն: Յորհրդային ավտոնոմիայի հիմունքներիով կատարվող Ռուսաստանի վարչական վերաբաժանումը զեռ չի ավարտվել, — հյուսիսային-կովկասցիները, կարմիրները, չերեմիսները, վոսյակները, բուրյասները և այլք՝ տակավին սպասում են հարցի լուծմանը, բայց ապագա Ռուսաստանի վարչական քարտեզը ինչ տեսք էլ ընդունի և ինչպիսիք էլ վոր լինեն այս բնագավառում թույլ արված թերութիւնները, — իսկ մի քանի թերութիւններ իրոք յեղել են, — պետք է ընդունել, վոր կատարելով վարչական վերաբաժանումը մարզային ավտոնոմիայի հիմունքներով՝ Ռուսաստանը խոշորագույն մի քայլ արեց զեպի առաջ՝ ծայրամասերը պրոլետարական կենտրոնի շուրջը համախմբելու նանազարհին, իշխանութիւնը ծայրամասերի ժողովրդական լայն զանգվածներին մտեցնելու նանազարհին:

Բայց խորհրդային ավտոնոմիայի այս կամ այն ձևի հռչակումը, համապատասխան զեկրեանների ու վորոշումների հրատարակումը, անգամ ավտոնոմ հանրապետութիւնների մարզային ժողովխորհրդների ձևով ծայրամասային կառավարութիւններ ստեղծելը զեռ բնավ էլ բավական չեն

ծայրամասերի ու կենտրոնի միությունն ամրապնդելու համար: Այս միությունն ամրապնդելու համար ամենից առաջ պետք է վերացնել ծայրամասերի այն կտրվածությունն ու ինքնամոտափությունը, այն նահապետականությունն ու անկուլտուրականությունը, այն անվստահությունը զեպի կենտրոնը, վորոնք Մնացել են ծայրամասերում՝ վորպես ցարիզմի զազանային քաղաքականության ժառանգություն: Յարիզմը ծայրամասերում զիտաժորյալ կերպով նահապետական-ֆեոդալական ճնշում էր կիրառում նրա համար, վորպեսզի մասսաներին պահի ստրկության և սոցիալության մեջ: Յարիզմը ծայրամասերի լավագույն անկյունները զիտաժորյալ կերպով կոլոնիզատորական տարրերով էր բնակեցնում նրա համար, վորպեսզի տեղացիներին քշի վատթարագույն շրջանները և ուժեղացնի ազգային յերկպառակությունը: Յարիզմը ճնշում էր, իսկ յերբեմն պարզապես վերացնում էր տեղական զարոցը, թատրոնը, լուսավորական հիմնարկները նրա համար, վորպեսզի մասսաներին խավարի մեջ պահի: Յարիզմը խափանում էր տեղական բնակչության լավագույն մարզկանց ամեն մի ձեռներեցությունը: Վերջապես, ցարիզմը սպանում էր ծայրամասերի ժողովրդական զանգվածների ամեն մի ակտիվությունը: Յարիզմը այս բոլորով տեղացիների մեջ առաջ է բերել զեպի այն ամենը, ինչ ուսական է, ամենախոր անվստահություն, վորը յերբեմն փոխարկվում է թշնամական հարարերությունների: Կենտրոնական Ռուսաստանի ու ծայրամասերի միջև միությունը ամրապնդելու համար պետք է վերացնել այդ անվստահությունը, պետք է ստեղծել փոխադարձաբար իրար հասկանալու և յեղաշարական վստահության մթնոլորտ: Բայց անվստահությունը վերացնելու համար ամենից առաջ պետք է ողնել ծայրամասերի ժողովրդական զանգվածներին ազատվելու ֆեոդալական-նահապետական լծի Մնացուկներից (перехватки), պետք է վերացնել, — զործով վերացնել, և վոչ թե միայն խոսքով, — կոլոնիզատորական տարրերի բոլոր ու ամեն տեսակի արտոնությունները, պետք է ժողովրդական զանգվածներին հնարավորություն տալ շահակելու հեղափոխության բարեքնները: Կարճ ասած՝ մասսաներին պետք է ապացուցել, վոր պրոլետարական կենտրոնական Ռուսաստանը նրանց ու միմիայն նրանց շահերն և պաշտպանում, և այս պետք է ապացուցել վոչ թե կոլոնիզատորների ու բուրժուական նացիոնալիստների զեմ զործադրելով միմիայն ուսպրեսիվ միջոցներ, վորոնք հաճախ մասսաներին միանգամայն անհասկանալի յեն, այլ, ամենից՝ առաջ, հետևողական ու լավ մտածված անտեսական քաղաքականությամբ:

Բոլորին հայտնի յե լիբերալների պահանջն ընդհանուր պարտադիր ուսուցման վերաբերյալ: Կոմունիստները ծայրամասերում չեն կարող լիբերալներից ավելի աջ լինել, — նրանք, յեթե ուզում են վերացնել ժողովրդի մեջ տիրող խավարը, յեթե ուզում են հոգեպես մերձեցնել Ռու-

ստասանի կենտրոնն ու ծայրամասերը, պետք է կիրառեն ընդհանուր կրթութիւնը: Բայց զրա համար անհրաժեշտ է զարգացնել տեղական ազգային գոյրոցը, ազգային թատրոնը, ազգային լուսօրինարկները, բարձրացնել ծայրամասերի ժողովրդական զանգվածների կուլտուրական մակարդակը, վորովհետև հազիվ թէ հարկ կա ազացուցելու, վոր ադիւտութիւնն ու խափարը խորհրդային իշխանութիւն ամենափոսանգաւ վոր թիւամին են: Մենք չիտենք, թէ առհասարակ այս ուղղութիւնը մեր աշխատանքը վորքան հաջող է գնում, բայց մեզ հազորում են, վոր կարեւորագույն ծայրամասերից մեկում տեղական լուսժողովմասը տեղական գոյրոցի վրա ծախսում է իր վարկերի ընդամենը 10% -ը: Յեթե այդ նիշտ է, ապա պետք է ընդունել, վոր մենք այս մարզում, ցածրք սրտի, «չին սեծիմից» հետու չենք գնացել:

Խորհրդային իշխանութիւնը ժողովրդից կտրված իշխանութիւն չէ, — ընդհակառակը, այն իր տեսակով միակ իշխանութիւնն է, վոր դուրս է յեկել սուսական ժողովրդական զանգվածներից և նրանց համար հարազատ է, մտտ և նրանց: Մրանով էլ, իսկապես, բացատրվում է այն չտեսնված ուժն ու նկունութիւնը, վորը կրիտիկական բողնեւերին սովորաբար ցուցաբերում է խորհրդային իշխանութիւնը: Անհրաժեշտ է, վոր խորհրդային իշխանութիւնը նույնքան էլ հարազատ ու մտտ լինի Ռուսաստանի ծայրամասերի ժողովրդական մասաների համար: Բայց հարազատ գառնալու համար խորհրդային իշխանութիւնը ամենից առաջ պետք է հասկանալի գառնա նրանց համար: Ուստի անհրաժեշտ է, վոր բոլոր խորհրդային մարմինները ծայրամասերում, — գտտարունը, ազմինխտրացիան, անտեսութիւն մարմինները, անմիջական իշխանութիւն մարմինները (նույնպես և կուսակցութիւն մարմինները) բոտ հարազատին կազմվեն տեղացիներից, վորոնք գիտեն տեղական բնակչութիւն կենցաղը, բարքերը, սովորութիւնները, լեզուն, վոր զեպի այդ ինտտիտուաները զրավվեն տեղաբնակ ժողովրդական մասաներից բոլոր լավագույն մարդիկ, վոր տեղական աշխատավորական մասաները ներգրավվեն յերկրի կառավարման բոլոր բնագավառները՝ ներառյալ այտտեղ նաև ուղղմական կազմավորումները (формирования), վորպեսզի մասաները տեսնեն, վոր խորհրդային իշխանութիւնն ու նրա մարմինները նրանց սեփական շանքերի գործն են, նրանց իզմերի մարմտցումը: Միայն այս նանապարհով է, վոր կարելի յն անխորտակելի հողեկան կտոլ հաստատել մասաների ու իշխանութիւն միջև, միայն այս նանապարհով է, վոր կարելի յն խորհրդային իշխանութիւնը հասկանալի ու մտտ զարմենլ ծայրամասերի աշխատավոր զանգվածների համար:

Ընկերներից վրմանք Ռուսաստանի ավտոնոմ հանրապետութիւնների և առհասարակ խորհրդային ավտոնոմիայի վրա նայում են իրրև



մի ժամանակվոր, թեև անհրաժեշտ շարքերի, վորը չէր կարելի թույլ  
չտալ միջանի հանգամանքներ նկատի առնելով, բայց վորի դեմ պետք  
և պայքարել, ժամանակի ընթացքում այն վերացնելու համար: Հարկիվ  
թե հարկ կա ապացուցելու, վոր այս հայացքն արժատապես սխալ է և,  
համենայն դեպս, վոչ մի ընդհանուր բան չունի ազգային հարցի վե-  
րաբերմամբ խորհրդային իշխանության վարած քաղաքականու-  
թյան հետ: Խորհրդային ավտոնոմիան մի ինչ-վոր վերացական և մտա-  
ցածին բան չէ, առավել ևս չի կարելի այն համարել մի դատարկ դե-  
կլարատիվ խոստում: Խորհրդային ավտոնոմիան ծայրամասերը կենտրո-  
նական Ռուսաստանի հետ միավորելու ամենաիրական, ամենակոնկրետ  
ձևն է: Վոչ վոք չի ժխտելու, թե Ուկրաինան, Ադրբեջանը, Քուրդես-  
տանը, Կիրգիզիան, Բաշկիրիան, Քաթարիան և այլ ծայրամասերը,  
վորքան վոր նրանք ձգտում են ժողովրդական մասսաների կուլտուրա-  
կան ու նյութական բարգաժանմանը, չեն կարող յուր գնալ առանց մայ-  
րենի դպրոցի, առանց դատարանի, ազմինխտբացիայի, իշխանության  
որդանների, վորոնք կազմված են առավելագույն տեղացիներից: Դեռ ավե-  
լին, այս մարզերի իսկական խորհրդայնացումը, նրանց վերածումը  
այնպիսի խորհրդային յերկիրներին, վորոնք սերտորեն կապված լինեն  
կենտրոնական Ռուսաստանի հետ իբրև պետական մի ամբողջութուն,  
աճեցվակայելի յե՞ն առանց տեղական դպրոցի լայն կազմա-  
կերպման, առանց դատարան, ազմինխտբացիայի, իշխանության  
մարմիններ և այլն ստեղծելու՝ այնպիսի մարզկանցից, վորոնք գիտեն  
ընտելության կենցաղն ու լեզուն: Բայց մայրենի լեզվով դպրոց, դա-  
տարան, ազմինխտբացիա, իշխանության որդաններ կազմակերպելի՞  
չեց այս և, վոր նշանակում է գործով իրականացնել խորհրդային ավ-  
տոնոմիան, վորովհետև խորհրդային ավտոնոմիան վոչ այլ ինչ է, բայց  
յեթև այս բոլոր ինստիտուտների գումարը, վորոնց ուկրաինական,  
թուրքեստանական, կիրգիզական և այլ ձևեր են տրվել:

Մյուսինց հետո Բենչպետ կարելի չէ լուրջ խոսել խորհրդային ավ-  
տոնոմիայի վաղանցիկության մասին, նրա դեմ պայքարելու անհրա-  
ժեշտության մասին և այլն:

### Յերկուսից մեկը.

Կամ ուկրաինական, ադրբեջանական, կիրգիզական, ուղբեկական,  
բաշկիրական և այլ լեզուներն իսկական իրականութուն են, ըստ վո-  
րում՝ այդ մարզերում, հետևաբար, բացարձակապես անհրաժեշտ է գար-  
դացնել մայրենի դպրոց, դատարան, ազմինխտբացիա, իշխանության  
մարմիններ՝ տեղացիներին, և այն ժամանակ այս մարզերում խորհրդ-  
ային ավտոնոմիան պետք է կիրառվի մինչև վերջը, առանց վերա-  
պահության,

կամ ուկրաինական, ադրբեջանական և այլ լեզուները դատարկ հո-

բննվածք են, հետեարար, մայրենի լեզվով դպրոցները և այլ ինստիտուտները պետք չեն, և այն ժամանակ՝ խորհրդային ավտոնոմիան պետք և գին չպրտվի, վորպես անհարկավոր խլամ:

Յերբորդ ուղի վորոնելը կամ գործը չդիտենալու և կամ տիուր թեբամաության արդյունք և:

խորհրդային ավտոնոմիայի իրազորման նանապարհն դանվող լուրջ արդեւքներից մեկը ծայրամասերու՝ տեղական ծագում ունեցող ինտելիգենտ ուժերի մեծ պակասն և, խորհրդային ու կուսակցական աշխատանքի առանց բացառության բոլոր նյութերի վերաբերյալ հրահանգիչների պակասը: Այս պակասը չի կարող շարգելակել ինչպես լուսավորական, այնպես էլ հեղափոխական-շինարարական աշխատանքը ծայրամասերում: Յեւ այս պատճառով էլ անխոհեմություն, գործի համար մնասակար կլիներ վանել իրենից տեղական ինտելիգենտների առանց այն էլ փոքրաթիվ այդ խմբերը, վորոնք, թերևս, կկամենային ծառայել մողովրդական մասսաներին, բայց չեն կարողանում այդ բանն անել, գուցե այն պատճառով, վոր նրանք, իբրև վոջ-կոմունիստներ, անվրատառության միջոցորտով շրջապատված են համարում իրենց, վախենում են նարափոր սեպրեսիաներից: Այս խմբերի վերաբերմամբ հանդուրժյաժ կարող և գործադրվել խորհրդային աշխատանքի մեջ նրանց ներգրտվելու քաղաքականությունը, նրանց աստիճանաբար խորհրդայնացնելու: Նպատակով՝ անտեսական, ազբարային, պարենային և այլ պոստերի գրտվելու քաղաքականությունը: Վորովհետև հազիվ թե կարելի լինի պնդել, թե ինտելիգենտական այս խմբերը պակաս հուսալի չեն ջան, ասենք, այն հակահեղափոխական դիմվորական մասնագետները, վորոնք, ջնայած նրանց հակահեղափոխականությանը, այնուամենայնիվ աշխատանքի գրտվվեցին և հետո խորհրդայնացան կարևորագույն պոստերում:

Բայց ազգային ինտելիգենտական փոքր խմբերի ոգտազործումը բնավ էլ հերիք չե հրահանգիչների վերաբերմամբ յեղած պահանջը բաժարարելու համար: Միաժամանակ անհրաժեշտ և ծայրամասերում ծաժաւել կոտավարման բոլոր նյութերի վերաբերյալ դասընթացների և զըբրոցների հարուստ ցանց՝ տեղացիներից հրահանգչական կադրեր ստեղծելու համար: Վորովհետև պարզ և, վոր առանց այդպիսի կադրերի առկայության մինչև ծայր աստիճան կգծվարունս մայրենի լեզվով մայրենի դպրոց, դատարան, ազմինխտրացիա և այլ ինստիտուտներ կազմակերպելը:

խորհրդային ավտոնոմիայի իրականացման նանապարհն պակաս լուրջ արդեւք չե հաճախ կոպիտ անտակառության փոխարկվող այն հապնակությունը, վոր ցուցաբերում են ընկերներից վոմանք՝ ծայրամասերի խորհրդայնացման գործում: Յերբ այդ ընկերները սիրտ են անում Վհ-

բոսական ջանքեր» վերցնել իրենց վրա «մաքուր կոմունիզմ» կիրառելու վերաբերմամբ ախպխի մարզերում, վորոնք կենտրոնական Ռուսաստանից մի ամբողջ պատմական ժամանակաշրջանով հեռ են մնացել, ախպխի մարզերում, վորտեղ տակավին ամբողջապես չի վերացված միջնադարյան կացութանը, ապա կարելի չե համոզված ստել, վոր այդպիսի հեծելազորական արշավանքից, այդպիսի «կոմունիզմից» լավ բան դուրս չի գա: Մենք կկամենայինք այդ ընկերներին հիշեցնել մեր ծրագրի հայտնի կետը, ըստ վորի՝

«ՌԳԿ կանգնած և պատմա-գատակարգային տեսակետի վրա՝ հաշի՛ նստելով այն բանի հետ, թե տվյալ ազգը իր պատմական զարգացման ինչ աստիճանի վրա չե կանգնած,—միջնադարից բուրժուական գեմոկրատիայի սանոզ, ԹԲ բուրժուական գեմոկրատիայից խորհրդային կամ պրոլետարական գեմոկրատիայի սանոզ անապարհի վրա և այլն»:

Յեզ՛ ախուհետե՛

«Համենայն դեպս, այն ազգերի պրոլետարիատի կողմից, վորոնք ճշտ ազգ են չեղել, անբաժնու և ստանձին զգուշութուն ու ստանձին ուշադրութուն գեղի ճշգրտի կամ իրավապես ազգերի աշխատավորական մասունքի ազգային զարգացմանը: Մասուկները» (տես «ՌԳԿ ծրագրերը»):

Այսինքն, յեթե, որինսպ, բնակարանները խտացնելու ուղիզ անապարհն Աղբրեջանում վանուտ և մեզանից աղբրեջանյան մասսաները, վորոնք բնակարանը, բնասանկան ոջախը համարում են անձեռնմխելի, սրբազան, ապա պարզ և, վոր այդ նույն նպատակին հասնելու համար բնակարանները խտացնելու ուղիզ անապարհը պետք և փոխարինել անուղղակի, շրջանցիկ անապարհով: Կամ թե չե՛ յեթե, որինսպ, Գաղլստանի մասսաները, վորոնքուժեղ կերպով բռնված են կրոնական նախապաշարութենքով, կոմունիստների հետևից դնում են «շարխաթի հիման վրա», ապա պարզ և, վոր կրոնական նախապաշարութենքի դեմ այս յերկրում պայքարելու ուղիզ անապարհը պետք և փոխարինելի անուղղակի, ավելի զույժ անապարհներով: Յեզ՛ այն և այն:

Կար՛ն ասած՝ ժողովրդական հետամուտ մասսաների բանապաղ կոմունիզացիայի» հեծելազորային արշավանքներից անհրաժեշտ և անցնել այդ մասսաներին խորհրդային զարգացման ընդհանուր հունի մեջ աստիճանաբար ներգրավելու շրջահայաց ու լավ մտածված քաղաքականությանը:

Ընդհանուր առմամբ՝ սրանք են խորհրդային ավտոնոմիան իրականացնելու այն զորմական պայմանները, վորոնց կիրառումը ապահովում և Ռուսաստանի կենտրոնի ու ժայրամասերի հողեկան մերձեցումը և հաստատուն հեղափոխական միությունը:

Մորհրդային Ռուսաստանը աշխարհում դեռ չտեսնված փորձ և անում՝ փոխադարձ վստահության հիմունքներով, կամավոր, յեղբայրա-

կան համաձայնութեան հիմունքներով կազմակերպել մի ամբողջ շարք ազգութայնների ու ցեղերի միատեղ համակեցութեանը միասնական պրոլետարական պետութեան շրջանակներում Լեզափոխութեան յերեք տարին ցույց տվեց, զոր այդ փորձն ունի հաջողութեան բոլոր շաները: Բայց նա, այդ փորձը կարող է լիակատար հաջողութեան հույս ունենալ միայն այն դեպքում, յեթե ազգային հարցի վերաբերյալ մեր գործնական քաղաքականութեանը տեղերում չի տարածայնվելու ազգարար ված խորհրդային սոցալիստիկ հետ, վերցվածնրա բազմազան ձևերով ու աստիճաններով, յեթե մեր յուրաքանչյուր գործնական քայլը տեղերում նպատակու յե այն բանին, զոր ծայրամասերի ժողովրդական մասսաները հողորդակից լինեն պրոլետարական հողեկան ու նյութական բարձր կուլտուրային այն ձևերով, զորոնք համապատասխան են այդ մասսաների կենցաղին ու ազգային կերպարանքին:

Աս յե կենտրոնական Ռուսաստանի ու Ռուսաստանի ծայրամասերի այն Լեզափոխական դաշինքի ամբողջական յերաշխիքը, զորի հանդեպ շարգութեւր կլինեն Անտանտի բոլոր ու ամեն տեսակի մեքենայութեաները:

„Սոցալզա“ № 226,

10 Եպիտեմբեր 1920 թ.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

Թեղիսներ ՌԿ(Բ)Կ X համադուժարի համար՝ հաստատված կուսակցու-  
թյան կԿ-ի կողմից  
(1921 թ.)

---

1. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳԸ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՈՒՄԸ

1. Ժամանակակից ազգերը վորոշ դարաշրջանի — բարձրացող կա-  
պիտալիզմի դարաշրջանի—արգասիք են: Ֆեոդալիզմի վերացման ու  
կապիտալիզմի դարգացման պրոցեսը դրա հետ մեկտեղ հանդիսանում է  
մարդկանց վորպես ազգեր կազմավորվելու պրոցես: Անգլիացիները, Ֆրանս-  
սացիները, գերմանացիները, իտալացիները վորպես ազգեր կազմավոր-  
վեցին ֆեոդալական տրոհվածութունը հաղթանակող կապիտալիզմի հաղ-  
թական դարգացման որով:

2. Այնտեղ, վորտեղ ազգերի գոյացումն ընդհանուր և մերողական  
առումով՝ ըստ ժամանակի զուգադիպել է կենտրոնացված պետութուն-  
ների գոյացմանը, ազգերը, ընդհանուրաբար, ձևավորվել են վորպես պե-  
տութուն, զարգացել են վորպես ինքնուրույն բուրժուական ազգային  
պետութուններ: Այսպես է յեղել Անգլիայում (առանց Իռլանդիայի),  
Ֆրանսիայում, Իտալիայում: Յեվրոպայի արևելքում, ընդհակառակը,  
կենտրոնացված պետութունների գոյանալը, վոր արագացվել է ինքնա-  
պաշտպանության պահանջներով (թյուրքերի, մոնղոլների արշավանք և  
այն), տեղի ունեցավ ֆեոդալիզմը վերացնելուց առաջ, հետևաբար ազ-  
գերի գոյանալուց առաջ: Այս պատճառով էլ այստեղ ազգերը չզարգա-  
ցան և չեյին էլ կարող զարգանալ իրրև ազգային պետութուններ, այլ  
կազմեցին՝ սովորաբար մի ուժեղ, տիրապետող ազգից և միջանի թույլ-  
յինթակա ազգերից բաղկացած միջանի խառն, բաղձազգի բուրժուական  
պետութուններ: Այդպիսիք են՝ Ավստրիան, Հունգարիան, Ռուսաս-  
տանը:

3. Ֆրանսիայի և Իտալիայի նման ազգային պետութունները, վոր-  
ոնք սկզբներում հենված են յեղել զլիազորապես իրենց սեփական ազ-  
գային ուժերի վրա, ընդհանրապես ասած՝ ազգային ճնշում չեն տեսել:  
Ճ՝ հակազրութուն սրան՝ բազմազգի պետութունները, վորոնք կառուց-

վում են մյուս ազգերի նկատմամբ մի ազգի, ավելի շիջու՞մ նրա իշխող դասակարգի տիրապետութան վրա, հանդիսանում են ազգային ճնշման և ազգային շարժումների սկզբնական հայրենիքն ու հիմնական ասպարեկը: Գերիշխող ազգի շահերի և հպատակ ազգերի շահերի հակասութուններն այն հակասութուններն են, առանց վորոնց լուծման անհնարին և բազմազգի պետութան կայուն գոյությունը: Բուրժուական բազմազգի պետութան զոդրերգությունն այն և, վոր նա անզոր և լուծելու աչք հակասութունները, վոր ազգերը «հաժասարեցնելու» և ազգային փոքրամասնությունները «պաշտպանելու»: Նրա ամեն մի փորձը՝ մասնավոր սեփականությունը և դասակարգային անհաժասարությունը պահպանելու պայմաններում՝ սովորաբար վերջանում և նոր անհաջողությամբ, ազգային ընդհարումների նոր սրումով:

4. Կապիտալիզմի հետագա անումը Յեվրոպայում, վաճառահանման նոր շուկաների պահանջը, հումքի ու վառելիքի վորոնումը, վերջապես, իմպերիալիզմի զարգացումը, կապիտալի արտահանումը և ծովային ու յերկաթուղային մեծ ճանապարհների ապահովման անհրաժեշտությունը մեկ կողմից հանդեցրին այն բանին, վոր ազգային հին պետությունները նոր տերիտորիաներ դավթեցին և զարձան բազմազգի (գաղութային) պետություններ՝ իրենց հատուկ ազգային ճնշումով ու ազգային ընդհարումներով (Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա), մյուս կողմից — հին բազմազգի պետությունների գերիշխող ազգերի մեջ ուժեղացավ վոչ միայն պետական հին սահմանները պահելու, այլև այս վերջիններն ընդարձակելու, նոր (թույլ) ազգություններ՝ իհաշիվ հարևան պետությունների՝ իրենց հպատակեցնելու ձգտումը: Գրանտով իսկ ազգային հարցն ընդլայնվեց և իրերի բուն իսկ ընթացքով, վերջիվերջո, միաձուլվեց գաղութների ընդհանուր հարցի հետ, իսկ ազգային ճնշումը ներպետական հարց լինելուց վերածվեց միջպետական հարցի, իմպերիալիստական բռնձ պետությունների պայքարի (ու պատերազմի) հարցի՝ թույլ, իրավապակաս ազգությունները հպատակեցնելու համար:

5. Իմպերիալիստական պատերազմը, վոր մինչև արժանները բաց աբեց բուրժուական բազմազգի պետությունների ազգային անհաշտելի հակասություններն ու ներքին անզորությունը, հանդեցրեց ազգային կոնֆլիկտների ծայրահեղ սրմանը՝ հաղթած գաղութային պետությունների ներսում (Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան), պարտված հին բազմազգի պետությունների (Ավստրիան, Հունգարիան, Ռուսաստանը 1917 թ.) կատարյալ քայքայմանը, և վերջապես, բուրժուական ազգային նոր պետությունների գոյացմանը (Հեհաստանը, Չեխո-Սլովակիան, Հարավ-Սլավիան, Ֆինլանդիան, Վրաստանը, Հայաստանը և այլն) վորպես ազգային հարցի առաջիկ «արժատական» լուծման՝ բուրժուալիստի

կողմից: Բայց ազգային ինքնուրույն նոր պետությունների գոյացումը չհաստատեց և չէր ել կարող հաստատել ազգությունների խաղաղ համակեցություն, չվերացրեց և չէր ել կարող վերացնել վոչ ազգային անհավասարությունը, վոչ ազգային ճնշումը, վորովհետև նոր ազգային պետությունները, վորոնք հնչում են մասնավոր սեփականություն ու դասակարգային անհավասարության վրա, չեն կարող գոյություն ունենալ՝ ա) առանց իրենց ազգային փոքրամասնություններին ճնշելու (որին նակ՝ Լեհաստանը, վոր ճնշում է բելուսուսներին, հրեաներին, յիտալացիներին, ուկրաինացիներին. Վրաստանը, վոր ճնշում է ոսերին, արխաղներին, հայերին. Հարավ-Սլավիան, վոր ճնշում է խրվաթներին, բոսնիացիներին և այլն). բ) առանց իրենց տերիտորիան ի հաշիվ հարևանների ընդարձակելու, վորը կոնֆլիկտներ ու պատերազմներ է առաջացնում (Լեհաստանը՝ Լիտվայի, Ուկրաինայի, Ռուսաստանի դեմ. Հարավ-Սլավիան՝ Բուլղարիայի դեմ. Վրաստանը՝ Հայաստանի, Քյուրդիայի դեմ և այլն). գ) առանց իմպերիալիստական լինելու պետություններին ֆինանսական, տնտեսական ու ռազմական տեսակետից յենթարկվելու:

6. Այսպիսով հետպատերազմյան շրջանը բաց է անում ազգային թշնամանքի, անհավասարության, ճնշման, կոնֆլիկտների, պատերազմների, քաղաքակիրթ յերկիրների ազգությունների կողմից ինչպես միմյանց նկատմամբ, ախպես ել իրավապակաս ժողովուրդների նկատմամբ իմպերիալիստական դազանություններ գործադրելու անմխիթար պատկեր. մի կողմից՝ միջանի լմեծ պետություններ, վորոնք ճնշում և շահագործում են թե կախյալ և թե լանկախ (փաստորեն միանգամայն կախյալ) ազգային պետությունների ամբողջ մասսան և այդ պետությունների պայքարը միմյանց դեմ՝ ազգային պետությունները շահագործելու մեծահուրհի համար. մյուս կողմից՝ թե կախյալ և թե անկախ ազգային պետությունների պայքարը լմեծ պետությունների անտանկի ճնշման դեմ. ազգային պետությունների պայքարը միմյանց դեմ՝ իրենց ազգային տերիտորիան ընդարձակելու համար. ազգային պետությունների պայքարը, յուրաքանչյուրին առանկին վերցրած, իրենց ճնշված ազգային փոքրամասնությունների դեմ. վերջապես, զաղութների ազատագրական շարժման ուժեղացումը լմեծ պետությունների դեմ և ազգային կոնֆլիկտների սրումն ինչպես այդ պետությունների ներսում, ախպես ել ազգային ախ պետությունների ներսում, վորոնք իրենց կողմի մեջ ունեն, իրբև կանոն, մի շարք ազգային փոքրամասնություններ: Այս և լաշխարհի պատկերը, վոր ժառանգություն է թողել իմպերիալիստական պատերազմը:

Բուրժուական հասարակությունն ազգային հարցի լուծման գործում կատարյալ անանկ դուրս յեկավ:



կին ու Գենիկլինին, իսկ Աղբրեղանի ու Հայաստանի հանրապետութիւնները չէյին կարող վտարի կանգնել՝ առանց իրենց տանն ազգային թշնամանքն ու ազգային ճնշումը վերացնելու, առանց Արևմտաքրի ու Արևելքի ազգութիւնները աշխատավոր մասսաների վստահութիւնն ու խանդավառութիւնն իրենց կողմն ունենալու: Խորհրդային հանրապետութիւնների ամրապնդումը և ազգային ճնշման վոչնչացումը հանդիսանում են իմպերիալիստական ստրկացումից աշխատավորութիւնն ազտագրելու միևնույն պըրոցեսի յերկու կողմը:

3. Բայց խորհրդային՝ Թեկուզ և ծավալով ամենամոնշան հանրապետութիւնների գոյութիւնը մահացու սպառնալիք է իմպերիալիզմի համար: Այդ սպառնալիքը վոչ միտն ասն է, վոր խորհրդային հանրապետութիւնները, իմպերիալիզմից խզելով իրենց կապերը, գաղութներ ու կիսագաղութներ լինելուց դարձան իրոք ինքնուրույն պետութիւններ և զբանով իսկ իմպերիալիստներին զրկեցին տերիտորիայի մի ալիւրդ պատասից և ալիւրդ յեկամուսներից, այլև ամենից առաջ ասն, վոր խորհրդային հանրապետութիւնների բուն իսկ գոյութիւնը, այս հանրապետութիւնների յուրաքանչյուր քայլը՝ բուրժուազիան ճնշելու և պըրլետարիատի դիկտատուրան ամրապնդելու ճանապարհին՝ մեծագույն ազիտացիա յե կապիտալիզմի ու իմպերիալիզմի դեմ, ազիտացիա յն՝ կախյալ յերկիրներն իմպերիալիստական ստրկացումից ազտագրելու համար, մի անհաղթահարելի գըրծոն է՝ կապիտալիզմը նրա բոլոր տեսակներով քայքայելու և կազմալուծելու համար: Այստեղից՝ իմպերիալիստական շեմծ պետութիւնների կողմից խորհրդային հանրապետութիւնների դեմ պայքարելու անխուսափելիութիւնը, շեմծ պետութիւնների ձգտումը՝ վոչնչացնելու այդ հանրապետութիւնները: Խորհրդային Ռուսաստանի դեմ շեմծ պետութիւնների պայքարելու պատմութիւնը — պետութիւններ, վորոնք խորհրդային Ռուսաստանի դեմ են հանում ծայրամասային բուրժուական մի կառավարութիւնը մյուսի հետևից, հակահեղափոխական գեներալների մի խումը՝ մյուսի հետևից, վորոնք հոգածութիւնը բլոկադի յեն յենթարկում խորհրդային Ռուսաստանը և առհասարակ աշխատում են նրան անտեսապես մեկուսացնել: — պերճախոս կերպով ասում է, վոր միջազգային տըվյալ հարարութիւնների պարադալում, կապիտալիստական շըջափակման պայմաններում, առանձին վերցրած՝ խորհրդային վոչ մի հանրապետութիւն չի կարող իրեն ապահոված համարել համաշխարհային իմպերիալիզմի կողմից անտեսական ուժասպառման ու ուղմական ջախջախման յենթարկվելուց:

4. Այս պատեհառով անկայուն, անհաստատուն է խորհրդային առանձին հանրապետութիւնների մեկուսացած գոյութիւնը, քանի վոր կապիտալիստական պետութիւնների կողմից նրանց գոյութիւնն դեմ

ապամնայիք կա: Խորհրդային հանրապետութիւններէ պաշտպանութեան ընդհանուր շահերը՝ մի կողմից, պատերազմի քայքայած արտադրողական ուժերի վերականգնումը՝ մյուս կողմից, հացապակաս խորհրդային հանրապետութիւններին հացաշատ հանրապետութիւններէ կողմից անհրաժեշտ պարենային ոգնութեան ցույց տալը՝ յերրորդ կողմից, — չբաժանարար թելադրում են առանձին խորհրդային հանրապետութիւններէ պետական միութեան կնքել՝ վորպես իմպերիալիստական ստրկացումից և ազգային ճնշումից փրկվելու միակ ուղի: «Երևնց» և «ոտար» բուրժուազիայից ազատված ազգային խորհրդային հանրապետութիւնները կարող են իրենց գոյութեանը պաշտպանել և հաղթել իմպերիալիզմի միացյալ ուժերին՝ միայն միավորվելով վորպես մի սերտ պետական միութեան, կամ թե չե՛ նրանք բնավ չեն հաղթի:

5. Խորհրդային հանրապետութիւններէ Ֆեդերացիան, հիմնված սպանական ու անտեսական գործի ընդհանրութեան վրա՝ հանդիսանում է պետական միութեան այն ընդհանուր ձևը, վորը հնարավորութեան և տալիս. ա) ապահովելու ինչպես առանձին հանրապետութիւններէ, այնպես և ամբողջովին վերջրած՝ Ֆեդերացիայի ամբողջութեանն ու անտեսական դարգացումը. բ) ընդգրկելու զարգացման տարրեր աստիճաններէ վրա կանգնած դանազան ազգերի ու ժողովուրդների կենցաղի, կուլտուրայի և անտեսական կացութեան ամբողջ բազմազանութեանը, և համապատասխան սրան՝ կիրառել Ֆեդերացիայի այս կամ այն ձևը. գ) կարգի դնելու այն ազգերի ու ժողովուրդների խաղաղ համակեցութեանն ու յեղբայրական համագործակցութեանը, վորոնք այս կամ այն կերպ իրենց բախտը կապել են Ֆեդերացիայի բախտի հետ: Ռուսաստանի փորձը, — վորտեղ կիրառվում են Ֆեդերացիայի զանազան ձևերը, սկսած խորհրդային ավտոնոմիայի վրա հիմնված Ֆեդերացիայից (Կիրգիզիան, Բաշկիրիան, Թաթարիան, Լեւնցիները, Դաղստանը), մինչև անկախ խորհրդային հանրապետութիւններէ հետ պայմանագրական հարաբերութիւններէ վրա հիմնված Ֆեդերացիան (Ուկրաինան, Ադրբեյջանը), և վորտեղ թույլ են տրվում այս ձևերի միջև միջանկյալ աստիճաններ (Թուրքեստանը, Բելուուսիան). — ամբողջապես հաստատեց Ֆեդերացիայի՝ իբրև խորհրդային հանրապետութիւններէ պետական միութեան ընդհանուր ձևի՝ ամբողջ նպատակահարմարութեանն ու ճկունութեանը:

6. Բայց Ֆեդերացիան կարող է ամուր լինել, իսկ Ֆեդերացիայի արդյունքները՝ իրական միայն այն դեպքում, յեթե Ֆեդերացիան հենվում է իր մեջ մտնող յերկիրների փոխազարձ վստահութեանն ու կամս վոր համաձայնութեան վրա: Յեթե ՌՄՖՊՆ աշխարհումս միակ յերկիրն է, վորտեղ հաջողվել է մի ամբողջ շարք ազգերի ու ժողովուրդների խաղաղ համակեցութեան և յեղբայրական համագործակցութեան փորձը,

ապա դա այն պատճառով է, վոր այնտեղ չկան վոչ արքայետոզներ, վոչ էլ հպատակներ, վոչ մետրոպոլիտ, վոչ էլ զազուկներ, վոչ իմպերիալիզմ, վոչ էլ ազգային ճնշում,—այնտեղ ֆեդերացիան հաստատված է զանազան ազգերի աշխատավոր մասսաների փոխադարձ վստահության և զեպի միությունն ունեցած կամավոր ձգտման վրա: Ֆեդերացիայի այս կամավոր բնույթն անպատճառ պետք է պահպանվի նաև առաջիկայում, վորովհետև միայն այսպիսի ֆեդերացիան է, վոր կարող է դառնայ անցման ձև զեպի բոլոր յերկիրների աշխատավորության այն բարձրագույն միասնությունը համաշխարհային միասնական անտեսության մեջ, վորի անհրաժեշտությունն ավելի ու ավելի շոշափելի յե դառնում:

### III. ՌԿԿ ԼՆՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. ՌՍՖՖՀ և նրա հետ կապված խորհրդային հանրապետությունները մոտ 140 միլիոն բնակչություն են ներկայացնում: Նրանցից վոչ-վելիկոուսները մոտ 65 միլիոն են (ուկրաինացիները, բելոուսները, կիրգիզները, ուզբեկները, թուրքմենները, տաջիկները, ազրբեյջանցիները, Պովոլժյայի թաթարները, Ղրիմի թաթարները, բուխարացիները, խիվացիները, բաշկիրները, հայերը, չեչենները, կարաչաղացիները, ոսերը, չերքեսները, ինգուշները, կարաչայցիները, բալկարները\*, կալմիկները, կարելները, ավարցիները, զարգինները, կազիկուսները, կյուրդները, կուլմիկները\*\*, մարիները, չուվաշները, վոտյակները, Պովոլժյայի գերմանացիները, բուրյատները, յակուսները և այլն): Ծարիզմի քաղաքականությունը, կալվածատերերի ու բուրժուազիայի քաղաքականությունն այդ ժողովուրդների նկատմամբ հեռեկայն է յեղել՝ սպանել նրանց մեջ ամեն մի պետականության սաղմ, խեղդել նրանց կուլտուրան, ճնշել լեզուն, նրանց տղիտության մեջ պահել և, վերջապես, ըստ կարելույն նրանց սուսացնել: Այդպիսի քաղաքականության արդյունքներն են՝ այդ ժողովուրդների անզարգացածությունն ու քաղաքական հետամնացությունը:

Այժմ, յերբ կալվածատերերն ու բուրժուազիան ստապլված են, իսկ ժողովրդական մասսաները խորհրդային իշխանություն են հռչակել նաև այդ յերկիրներում, կուսակցության խնդիրն է՝ ոգնել վոչ-վելիկոուս ժողովուրդների աշխատավորական մասսաներին՝ հասնելու առաջանցած կենտրոնական Ռուսաստանին, ոգնել նրանց, վորպեսզի՝ ա) իրենց մոտ զարգացնեն ու ամբապնդեն խորհրդային պետականությունը այն ձևերով, վորոնք համապատասխան են այդ ժողովուրդների ազգային

\* Վերջին յարբ ժողովուրդները միավորվում են վորպես «Եռանկաններին» խումբ:

\*\* Վերջին հինգ ժողովուրդները միավորվում են վորպես «Դադասնցիներին» խումբ:

Նկարագրին, ք) իրենց մոտ կազմակերպեն տեղական բնակչության կենցաղն ու հազերանությունն իմացող տեղացիներին կազմված՝ մայրենի լեզվով գործող դատարան, ազմինխատրացիա, անտեսության որդաններ, իշխանության որդաններ, դ) իրենց մոտ մայրենի լեզվով զարգացնեն մամուլ, գաղտոց, թատրոն, ակումբային գործը և առհասարակ՝ կուլտուր-լուսավորական հիմնարկներ:

2. Յեթն 65 միլիոն վոչ-վիլիկոտուս բնակչությունից հանենք Ուկրաինան, Բելուսուսիան, Ազրբեջանի աննշան մասը, Հայաստանը, վորոնք այս կամ այն աստիճանով անցել են արդյունաբերական կապիտալիզմի շրջանը, ապա մնում և մոտ 30 միլիոն՝ առավելապես թյուրքական բնակչություն (Թուրքեստան, Ազրբեջանի մեծ մասը, Դաղստանը, լեռնականները, թաթարները, բաշկիրները, կիբգիզները և ուրիշներ), վորոնք դեռ չեն անցել կապիտալիստական զարգացման բովով, չունեն կամ գրեթե չունեն իրենց արդյունաբերական պրոլետարիատը, մեծ մասամբ պահպանել են անասնաբուծական անտեսությունն ու նահապետական-առճային կենցաղը (Կիրգիզիան, Բաշկիրիան, Հյուսիսային Կովկասը), կամ կիսակապիտալիստական-կիսաֆեոդալական կենցաղի նախնադարյան ձևերից դենը չեն անցել (Ազրբեջանը, Ղրիմը և այլն), բայց արդեն ներգրավված են խորհրդային զարգացման բնդհանուր հունի մեջ:

Կուսակցության խնդիրն այս ժողովուրդներին աշխատավորական մասսաների վերաբերմամբ (բացի 1 կետում նշանակված խնդրից) այն և, վոր ոչնի նրանց վերացնելու նահապետական-ֆեոդալական հարաբերութունների մնացուկները և հազորդակից դառնալու խորհրդային անտեսության շինարարությանը՝ գյուղացիական աշխատավորական խորհուրդների հիման վրա, այդ ժողովուրդների մեջ կոմունիստական այնպիսի ամբողջու կազմակերպություններ ստեղծելու միջոցով, վորոնք ընդունակ լինեյին ոգտադործելու սուսական բանվորների ու գյուղացիների խորհրդային-անտեսական շինարարության վերաբերյալ փորձը և իրենց շինարարական աշխատանքում կարողանային զրա հետ մեկտեղ հաշվի առնել յուրաքանչյուր ավյալ ժողովրդի անտեսական կոնկրետ իրադրության, դասակարգային կառուցվածքի, կուլտուրայի ու կենցաղի բոլոր առանձնահատկությունները՝ առանց մեխանիկորեն տեղափոխելու կենտրոնական Ռուսաստանի անտեսական միջոցառումները, վորոնք պիտանի չեն անտեսական զարգացման այլ, ավելի բարձր աստիճանի համար:

3. Յեթն 30 միլիոն՝ առավելապես թյուրքական՝ բնակչությունից, հանենք Ազրբեջանը, Թուրքեստանի մեծ մասը, թաթարներին (Պովոլ-ժյեյի ու Ղրիմի), Բուխարան, Խիվան, Դաղստանը, լեռնականներին մի մասը (կարբաղացիներին, չերքեսներին, բալկարներին) և միջանի այլ ազգություններ, վորոնք արդեն նստակյաց են դարձել և ամուր կեր-

